ԱՇԽԱՐՀ

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՄԱՏԵՆԱՀԱՐ

Eduard L. Danielyan
Эдуард Л. Даниелян

Gandzasar Monastery

Гандзасарский монастырь

Gandzasar Theological Center
Yerevan 2009

Богословский центр “Гандзасар”
Ереван 2009

Էդուարդ Լ. Դանիէլեան

Գանձասարի վանքը

«Գանձասար» աստուածաբանական կենտրոն
Երեւան 2009

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Դ 171

Խմբագիրներ՝ տ. Մեսրոպ քինյ Արամեան, Գէորգ Եազըճեան

Դանիէլեան Էդուարդ Լիպարիտի
Դ 171 *Գանձասարի վանքը.– Եր.: Գանձասար, 2009.– 228 էջ*

Գիրքը նուիրուած է Գանձասարի վանքի անցեալին եւ ներկային, նրա նշանակութեանը Հայ Առաքելական Եկեղեցու պատմութեան մէջ: Գրքում ցոյց է տրւում Գանձասարի կարեւորութիւնը որպէս Արցախի թեմի հոգեւոր, ուսումնագիտական, մշակութային կենտրոնի եւ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ոգեշնչողի: Ներկայացուած են նաեւ Արցախի ազատամարտի մասնակիցների յուշագրութիւնները ազատամարտիկների եւ Արցախի թեմի հոգեւորականների մասին: Գիրքը նախատեսուած է Հայաստանի եւ Հայ Առաքելական Եկեղեցու պատմութեան մասնագէտների եւ ընթերցող լայն շրջանների համար:

Редакторы: о. Месроп Арамян, Геворг Язеджян

Даниелян Эдуард Липаритович
Д 171 Гандзасарский монастырь: — Ер.: Гандзасар, 2009 — 228 с.

Книга посвящена прошлому и настоящему Гандзасарского монастыря, его значению в истории Армянской Апостольской Церкви. В книге освещается важная роль Гандзасара, как духовного, образовательного и научного центра Арцахской епархии и вдохновителя освободительной борьбы армянского народа. Представлены также мемуары участников Арцахской освободительной борьбы о бойцах-освободителях и духовенстве Арцахской епархии. Книга предусмотрена для специалистов по истории Армении и Армянской Апостольской Церкви и широкого круга читателей.

Editors: Fr. Mesrop Aramian, Gevorg Yazedjian

Danielyan Eduard Liparit
D 171 Gandzasar Monastery: — Er.: Gandzasar, 2009. — 228 pp.

The book is devoted to the past and the present of the Gandzasar monastery and its significance in the history of the Armenian Apostolic Church. The significance of Gandzasar as the spiritual, educational and scientific centre of the Artsakh diocese, as well as the inspirer and organizer of the liberation struggle of the Armenian people is revealed in the book. There are also memoirs of the participants of the Artsakh liberation struggle about liberators and the clergy of the Artsakh diocese. The book is recommended for the specialists in the history of Armenia and the Armenian Apostolic Church and for wide readership.

ISBN 978-99930-70-03-0

Տեխնիկական խմբագրումը եւ էջադրումը՝ Աշոտ Մովսիսեանի
Գանձասարի վանական համալիրի լուսանկարները՝ Հրայր Բազէ Խաչերեանի
Ձեւաւորումը եւ շապիկը՝ Արմէն Քիւրքչեանի

Техническое редактирование и верстка Ашота Мовсисяна
Фотографии Гандзасарского монастырского комплекса Грайра Базе Хачеряна
Оформление и обложка Армена Кюркчяна

Technical editing and page lay-out by Ashot Movsisian
Photos of the Gandzasar monastic complex by Hrair Bazé Khacheryan
Design and cover by Armen Kyurkchyan

© «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 2009
© Богословский центр “Гандзасар”, 2009
© Gandzasar Theological Center, 2009

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՊԱՐԳԵՒ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Տպագրութեան հովանաւոր՝
Կարէն Աւետեան

Հրատարակութեան պատրաստմանը նիւթապէս աջակցել է
Կոմիտաս Յարութիւնեանը

ԴԱՆՁԱՍԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀԱԶԱՐԱՄԵԱԿՆԵՐԻ ԽՈՐՔԻՑ ԲԽՈՂ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ, ՆԱԽՆԻՆԵՐԻ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՒ ԴՈՐԾԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ Է: ԱԶԱՏԱՏԵՆՉ ՀԱՅԿԵԱՆ ՈՂՈՎ ԱԶԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԻ ԲԻՒՐԵՂԱՑՄԱՄԲ ԴԱՆՁԱՍԱՐԸ ՎԵՐ Է ՅԱՒՆՈՒՄ ՈՐՊԷՍ ՀԱՅՐԵՆԻ ՄԲԱՎԱՅՐԵՐԻ ԱԶԱՏԱԴՐՄԱՆ ԵՒ ՄԻԱՊՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ:

1. ԳԱՆՁԱՍԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Գանձասարի վանքը կառուցուած է Մեծ Հայքի Արցախ աշխարհի Խաչէնի իշխանութեան Մեծ Առանք գաւառում, Խաչէնագետի ձախ ափին, Արցախի լեռնային մասում՝ ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Մարտակերտի շրջանում, Վանք գիւղի մօտ, Գանձասար լեռան վրայ: Ըստ ժողովրդական տեղանուանական աւանդութեան՝ լեռը Գանձասար է անուանուել արծաթի հարուստ հանք ունենալու պատճառով:

Խորհրդաւոր են Գանձասարի արահետները, որոնց վրայ ոտք դնելով՝ լցուած նախնիների ստեղծագործ արարման ոգով, կարծես թէ զգում ես անցած ժամանակների զարկերակը: Գանձասարը, յիրաւի, իմաստութեան գանձարան է եւ հոգու վեհութեան սրբավայր:

Հայկական լեռնաշխարհի բնիկ հայ ազգի անուանադիր նախնի Հայկ Նահապետի՝ Հայոց աշխարհը պաշտպանած եւ շենացրած շատ ժառանգների շարքում բարեգեղ Սիսակը եւ քաջ Առանը իրենց պանծալի անուններն են թողել Հայոց պատմութեան մէջ:

Հաւատարիմ նախնիների յիշատակին Հայկազուն-Սիսակեանները բարեկարգեցին Մեծ Հայքի թագաւորութեան արեւելեան՝ Սիւնիք, Արցախ եւ Ուտիք աշխարհները, կառուցեցին ամրոցներ եւ տաճարներ՝ Հայ ազգի ազատատենչ ոգու եւ կենսակայունութեան պատուարները:

Սուրբ են դէպի վեր գնացող նախնիների գործերով պատուած եւ ուխտագնացութեան ծառայութեամբ սերունդների սրտերն ուղղորդող Գանձասարի արահետները: Ս. Վարդան Մամիկոնեանի անունով հոգելցուած քաջակորով հայ զօրականներն են քայլել նրանցով Աւարայրի ճակատամարտից (451 թ.) յետոյ եւ, ապաւինելով Արցախի ամրութեանը, շարունակել պայքարը:

Հայկազուն-Սիսակեան տոհմից սերող Առանշահիկ[1] թագաւոր Վաչագան Բարեպաշտը բարեկարգեց Հայոց Արեւելից կողմերը՝ Արցախը

եւ Ուտիքը, ու իր թագաւորութիւնը՝ տարուայ օրերի թուով զարդարելով եկեղեցիներով, անշուշտ, իր ներդրումն է ունեցել Գանձասարի վանքի կառուցապատման գործում: Վաչագան Բարեպաշտ արքան ստեղծեց «Կանոնական Սահմանադրութիւնը»՝ներշնչուած Հայոց Արեւելից կողմերում վերահաստատուած հայկական թագաւորութեան իրաւական-հոգեւոր ամրապնդման գաղափարով:

Գանձասարի ոգեղէնութիւնը համահունչ է Բարձր Հայք աշխարհում ամփոփուած՝նախնիների պաշտամունքի առհաւատչեայ հայոց արքայական մասունքների խորհրդապաշտութեանը, որոնք թշնամին անկարող էր հեռացնել երկրից, քանզի, շնորհիւ հայ քաջարի ոգու եւ բազկի, դրանք ազատուեցին եւ կրկին հողին յանձնուեցին Այրարատ աշխարհի Աղձք գիւղում:

Արցախ աշխարհի Գանձասարի վանքը հնուց ի վեր դարձել էր Հայրենիքի զոհասեղանին իրենց կեանքը պարգեւող Հայոց Արեւելից կողմանց իշխանների վկայարանը:

Հայ Բագրատունեաց թագաւորութեան ժամանակաշրջանում Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին (942–965), անհանգստացած Հայաստանի արեւելեան թեմերի եկեղեցական գործերով, գալով Արցախ, Գանձասարի վանքում հրաւիրեց իշխանների եւ հոգեւորականութեան ժողով, որը ազգային ոգով պաշտպանեց Հայ Առաքելական Եկեղեցու դաւանանքի ամրութիւնը եւ անաղարտութիւնը:

Խաչէնի իշխան Հասան («Գեղեցիկ») Ջալալ («Վեհութիւն») Դօլան («Բարեկեցութիւն»)՝Հայկազուն-Սիսակեան Առանշահիկ տոհմի փառապանծ ժառանգը եւ շարունակո-

ղը, քայլելով Գանձասարի արահետներով դէպի իր ազնուական նախնիների շիրիմները, միտք յղացաւ կառուցել եկեղեցի՝ հիմքում սուրբ նահատակների մասունքներով, որոնցից գլխաւորն էր ս. Յովհաննէս Մկրտչի գլուխը:

Հայկական ճարտարապետութեան՝ հայ հմուտ վարպետների ստեղծած գոհարների շարքում, որոնք մեծ արժէք են ներկայացնում համաշխարհային մշակոյթի գանձարանում, վեհօրէն վեր է յառնում Քրիստոսի Խաչով օծուած Գանձասարի վանքի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին:

Արեւմտեան Հայաստանում, Տարօն գաւառում գտնուող նոյնանուն եկեղեցին, ի թիւս հայկական ճարտարապետութեան այլ յուշարձանների, պայթեցուած է Հայոց ցեղասպանութիւնը կատարած թուրք յանցագործների յետնորդների կողմից:

Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին Աստուծոյ Նախախնամութեամբ դարեր շարունակ դիմակայել է չար ուժերին, եւ այսօր իր արարչակերտ վեհութեամբ խորհրդանշում է ազգային միասնութեան՝ Հայրենիքին հաւատով եւ անձնուիրութեամբ ծառայելու գաղափարը:

Գանձասարի բարձունքին գիտակցում ես, որ դա ճանապարհի վերջը չէ, այլ միայն սկիզբը՝ պսակուած Աստուծոյ լուսազարդ տաճարով: Գանձասարի եկեղեցու երկնասլաց խաչը, խորհրդապաշտուած Կենաց Ծառով, յաւիտենականութեան մտքեր է ներշնչում:

Ժամանակի ընթացքում Գանձասարի հոգեւոր արահետները դարձան հայ ազատագրական պայքարի գործիչների գաղտնի գաղափարների կրողները: Արտաքին օգնութեամբ օտարի լծից հայ ժողովրդի ազատագրման ուղիներ որոնող Իսրայէլ Օրին, երկարատեւ դեգերումներից յետոյ վերադառնալով Հայրենիք, ձգտում էր ձեռք բերել Գանձասարի Երեմիա Հասան-Ջալալեան կաթողիկոսի աջակցութիւնը: 1699 թ. Գանձասարի վանքում տեղի ունեցաւ գաղտնի խորհրդակցութիւն, սակայն կաթոլիկութեանը զիջում կատարելու նոյնիսկ մի փոքր ակնարկը բաւարար եղաւ, որ Օրին ձեռնունայն հեռանայ Գանձասարի վանքից:

Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանը, անհանգստացած հայ ժողովրդի ճակատագրի հեռանկարով, 1714 թ. վանքում գաղտնի ժողով հրաւիրեց: Գանձասարի գաղտնի ժողովը նոր երանգ հաղորդեց հայոց ազգային-ազատագրական պայքարի բարոյա-իրաւական սկզբունքներին՝ խարսխուած արտաքին ճկուն քաղաքականութեանը զուգընթաց սեփական ուժերի համախմբուածութեան գաղափարի վրայ: Եսայի Հասան-Ջալալեանի գործունէութիւնը ուղղուած էր Հայրենիքի պաշտպանութեանը եւ ազատագրմանը:

Տասնամեակներ անց Յովսէփ Էմինը հաստատակամ եկաւ Գանձասարի վանք՝ ոգեւորելու Յովհաննէս կաթողիկոսին՝ իրագործելու ազատագրական պայքարի գաղափարը, որի մեծ նուիրեալն էր հէնց ինքը՝ Գանձասարի կաթողիկոսը: Սակայն թշնամին դաւադրաբար սպանեց կաթողիկոսին: Յովհաննէսի եղբայրը՝ Սարգիս Հասան-Ջալալեանը, Գանձասարի վերջին կաթողիկոսն էր:

Մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալեանի ժամանակներում Գանձասարի արահետները տատասկով չծածկուեցին, քանզի վանքի հանդէպ տածած իր մեծ սիրոյ շնորհիւ նա հսկայական ջանքեր գործադրեց դրա բարգաւաճման համար:

Տարիներ անց, Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմեանը, գալով Գանձասարի վանք, մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեց նրա

անցեալ փառքով եւ մտահոգուեց այն բարեկարգելու գործով:

Խորհրդային իշխանութեան հաստատմամբ, մի քանի տարի անց Արցախի թեմը փակուեց, եւ Գանձասարի հոգեւոր ճանապարհները խափանուեցին: Երկրամասում մոլեգնում էր Բաքուից պարտադրուող հակահայկական քաղաքականութիւնը՝ խորհրդային իշխանութեան ամբողջատիրական համակարգում:

Ղարաբաղեան շարժումը եւ Արցախի թեմի վերականգնումը Արցախի ազատագրական պայքարի կարապետը եղան, պայքար, որ ազդարարուեց Գանձասարի զանգերի ղօղանջով: Արցախի թեմի նոր առաջնորդը՝ Պարգեւ եպիսկոպոս (այժմ արքեպիսկոպոս) Մարտիրոսեանը, ժողովրդին ուղղած իր խօսքում կանխատեսեց. «Զանգը հնչի՝ թուրքը փախչի»:

Գանձասարը կրկին դարձաւ ազատագրական պայքարի հոգեւոր կենտրոնը: Սրբավայրից բխող հոգեւոր օրհնանքը, հոգեւորականների անձնուէր ծառայութիւնը նրա պաշտպանութեանը, ինչպէս նաեւ նրանց գործունէութիւնը Արցախի այլ ճակատներում՝ այդպիսին էր Գանձասարի առաքելութիւնը ազգային-ազատագրական պայքարում. մի ձեռքում Խաչը, միւս ձեռքում՝ ազատամարտիկի զէնքը: Պատարագը չէր ընդհատւում նոյնիսկ ռմբակոծութիւնների ժամանակ: Եւ հրաշք տեղի ունեցաւ: Վանական միաբանութեան բնակելի շէնքի ռմբակոծուած պատերի միջից բացուեց XII–XIV դարերի խաչքարերի մի ամբողջ գանձ:

Գանձասարը Հայոց Արցախեան ազատամարտի յաղթանակի խորհրդանիշն է: Գանձասարի արահետները սրբագործուել են հայ ազատամարտիկների հայրենանուէր արեամբ: Մահապարտների գումարտակից ազատամարտիկ Գագիկ Եոլչեանը՝ ինքնազոհ հայրենասիրութեան խորհրդաւոր ոգով, իր վերջին մարտից առաջ ասել էր իր զինակիցներին Գանձասարում. «Մեր կեանքն ի՞նչ է էս հրաշագործութեան համեմատութեամբ: Որ նա մնայ, մենք էլ կը մնանք...»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԵՒ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

2. ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐԻՍԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի պատմութիւնը հարուստ է ս. Գրիգոր Լուսաւորչի եւ ս. Գրիգորիսի գործունէութեան, Ամարասի, Դադիվանքի ու այլ վանքերի, յատկապէս Գանձասարի վանքի ու կաթողիկոսութեան մասին վկայութիւններով:

Ս. Թադէոս եւ ս. Բարթողիմէոս առաքեալների քարոզչական գործունէութեամբ I դարում Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրման պատմութեան ազդեցութեամբ է յետագայում հիւսուել Հայոց Արեւելից կողմերում (Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք աշխարհներ)՝ Կուրի աջափնեակում, ինչպէս նաեւ բուն Աղուանքում[2]՝ Կուրի ձախափնեակում, ս. Եղիշայի առաքելական քարոզութեան մասին աւանդութիւնը (Կաղ., 10–12):

Տրդատ Գ Մեծի գահակալութեան ժամանակաշրջանում ս. Գրիգոր Լուսաւորիչը, ըստ Ագաթանգեղոսի, կատարելով քրիստոնէական քարոզչութեան գործը Հայոց աշխարհում, հարաւում հասնում է մինչեւ Ամիդ, Մծբին, Կորդուք, Նոր Շիրական, արեւմուտքում՝ Սատաղ, Խաղտիք, հիւսիս-արեւմուտքում՝ Կղարջք, հիւսիսում՝ Ալանաց դռներ, իսկ արեւելքում՝ մասքութների եւ Կասպից սահմանները եւ Մեծ Հայքի թագաւորութեան Փայտակարան քաղաքը (Ագաթ. 439–440):

Ս. Գրիգոր Լուսաւորչի գործն արեւելքում շարունակեց նրա թոռը՝ մանուկ Գրիգորիսը, որը քրիստոնէական հաւատի քարոզիչ էր եւ առանձնանում էր խստակեաց ճգնաւորի վարքով: Ձեռնադրուած որպէս Արցախի, Ուտիքի եւ Փայտակարանի թեմերի եպիսկոպոս-հայրապետ՝ Գրիգորիսը Հայ Առաքելական Եկեղեցու հովանու տակ էր պահում բուն Աղուանքի եւ Վիրքի հոգեւոր կեանքը (Բիւզ., 24, Խոր., 259, Կաղ., 14): Այսպիսով, Հայաստանը՝ Հայ Առաքելական Եկեղեցու հայրերի գործունէութեամբ, ժամանակի ընթացքում, կարեւոր նշանակութիւն է ունեցել Վիրքի եւ բուն Աղուանքի քրիստոնեացման գործում:

Գրիգորիս եպիսկոպոս-հայրապետի նստավայրը ս. Գրիգոր Լուսաւորչի հիմնած Ամարասի վանքն էր (Օրբ., Բ, 218, Ուլուբ., ա1981 թ., 102): Ըստ Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանի քարտէզում (1691 թ.) պահպանուած մի տեղեկութեան՝ ս. Գրիգոր Լուսաւորիչն, իր թոռանը՝ մանուկ Գրիգորիսին հայրապետ հաստատեց Գանձասարի վանքում, ուրտեղ հայրապետանոցն անուանւում էր Սուրբ Խաչ (Ուլուհ., 164; Սլսհ., 59):

Ա. Գրիգորիսը, շարունակելով քարոզչութիւնը Կուրից հիւսիս-արեւելք ընկած շրջաններում, դաժանօրէն սպանւում է Կասպից ծովի եզերքի Վատնեայ դաշտում մասքթաց Սանեսան թագաւորի հրամանով: Ս. Գրիգորիսի պատուական նշխարները նրա մերձաւորները բերում եւ ամփոփում են հայոց Արցախ աշխարհի Ամարասի եկեղեցում (Բիւզ., 26, Խոր., 260):

Իրեն Արշակունի յորջորջող Սանեսանը 335 թ. խառնիճաղանջ զօրքով ներխուժում է Հայաստան՝ տիրանալու հայ Արշակունիների գահին, սակայն Օշականի ճակատամարտում հայոց զօրքը ջախջախում է մասքութներին: Վահան Ամատունին մարտի թեժ պահին խիզախօրէն սպանում է Սանեսանին, որի գլուխը բերում են Խոսրով Կոտակ արքային: Ինչպէս գրել է Փաւստոս Բուզանդը, այսպէս լուծուեց ս. Գրիգորիսի վրէժը (Բիւզ., 30):

Ս. Գրիգորիսի Աջը եւ Գաւազանը հայ ժողովրդի հոգեւոր գանձարանում քրիստոնէական նուիրական սրբութիւններ են: Ս. Գրիգորիսի Աջը սկզբնապէս եղել է Ամարասում, բայց յետագայում այն յափշտակել են օտար նուաճողները: Սիմէոն Ա Երեւանցի կաթողիկոսի (1763–1780)

«Յիշատակարանից» իմանում ենք, որ ս. Գրիգորիսի Աջը Նադիր Շահի աւերիչ արշաւանքների ժամանակ անօրէնները տարել են Պարսկաստան, որտեղ Աջի վրայից կողոպտել են արծաթը: Այնուհետեւ այդ մասունքն ընկել է մի բարեպաշտ հայի ձեռքը: Նրանից Աջը վերցրել է այդ ժամանակ այն կողմերում գտնուող, Ս. Գեղարդի վանքի միաբան Ղունկիանոս վարդապետը եւ թաքուն պահել իր մօտ մինչեւ Սիմէոն Երեւանցու հայրապետութեան ժամանակաշրջանը: Երբ Գանձասարի կաթողիկոս Յովհաննէսը 1765 թ. գալիս է Ս. Էջմիածին, Ղունկիանոս վարդապետը նրան ծածուկ ցոյց է տալիս մասունքը եւ խոստանում սուրբ Աջը տալ, որպէսզի կաթողիկոսն այն տանի Գանձասար: Բայց Յովհաննէս կաթողիկոսը, վախենալով Սիմէոն Ա-ի ցասումից, այն չի վերցնում: Ղունկիանոսն Աջը յանձնում է Ամարասի առաջնորդ Բաղդասար վարդապետին, որը գաղտնաբար տանում է մասունքը: Երբ Սիմէոն Ա-ն իմանում է դա, շատ զայրանում է, հրաւիրում է եպիսկոպոսական ժողով ու դատապարտում Ղունկիանոսին: Այնուհետեւ խիստ նամակ է գրում Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին՝ պահանջելով շտապ վերադարձնել մասունքը (ԴՀՊ, Գ, 503–504):

1925 թ. ապրիլի 30-ի արձանագրութիւնում Արցախի թեմի առաջնորդ Վրթանէս ծ. վարդապետը, որը ստանձնել էր նաեւ Գանձասարի ու Ամարասի վանքերի վանահօր պաշտօնը, այլ մասունքների թւում յիշատակում է նաեւ ս. Գրիգորիսի Աջը: Իսկ դրանից մի քանի ամիս անց Բաքուի իշխանութիւնները, Արցախից յափշտակուած այլ մասունքների հետ, տանում են նաեւ Ամարասի ս. Գրիգորիսի Աջը (ՎՀԵՊ, Թ, 845):

Ս. Գրիգորիսի Գաւազանը, ըստ Ստեփանոս Օրբէլեանի, 1292 թուա-

կանին Բայտու խանի հրամանով բերուել էր Ամարասից ոսկէ խաչի հետ եւ յանձնուել բիւզանդական արքայադուստր Դեսպինային, իսկ նա այդ գանձերն ուղարկել է Կոստանդնուպոլիս (Օրբ., Բ, 218):

3. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏԻ ՕՐՕՔ

Հայոց Արցախ եւ Ուտիք նահանգները 484 թ. – VI դարի առաջին կէսին կազմեցին Հայկազուն-Սիսակեան Առանշահիկ տոհմից սերող Վաչագան Բարեպաշտի հիմնած թագաւորութիւնը, որով վերականգնուեց հայկական թագաւորական իշխանութիւնը Մեծ Հայքի Արեւելից կողմերում (ԴԷ, 32, 46): Հայոց թագաւոր Վաչագան Բարեպաշտի իշխանութիւնը տարածուեց նաեւ Կուրի ձախափնեակի մի մասի (Կամբէճան, Կապաղակ...) վրայ (Կաղ., 50, 89):

Ըստ հայ պատմիչ Մովսէս Կաղանկատուացու (VII դար)՝ Վաչագան Բարեպաշտ արքան Հայոց պետական մեծ գործիչ էր եւ Հայ Առաքելական Եկեղեցու նուիրեալ, ինչի մասին վկայում է նրա ծաւալած ողջ գործունէութիւնը յանուն Հայոց թագաւորութեան եւ Եկեղեցու բարգաւաճման, սկսած ս. Գրիգորիսի եւ Հայ Եկեղեցու միւս սրբերի մասունքների յայտնաբերումից ու լայնածաւալ եկեղեցաշինութիւնից եւ դպրոցաշինութիւնից մինչեւ Աղուէնի կանոնադիր ժողովը, ինչի շնորհիւ Վաչագան Բարեպաշտը «եղեւ դուռն լուսոյ աստուածագիտութեան եւ բազմազան բարեաց օրինակ երջանիկս այս» (Կաղ., 83): Հնարաւոր է, որ, ի թիւս տարուայ օրերի քանակով եկեղեցիների, նա շինութիւն կառուցած լինէր Գանձասարի վանքի տարածքում:

Վաչագան Բարեպաշտ արքան, ոգեշնչուած իր թագաւորութիւնն օրէնսդրօրէն հզօրացնելու գաղափարով, ստեղծեց «Սահմանադրութիւն կանոնական»-ը, որն ընդունեցին եպիսկոպոսները, քահանաները եւ ազատները եւ «նահապետք Արցախայ» Աղուէնի կանոնադիր ժողովում (Կաղ., 89–94) որպէս Հայոց թագաւորութեան գրաւոր սահմանադրութիւն: «Սահմանադրութիւն կանոնական»-ը եկեղեցական եւ աշխարհիկ նորմերի ուրոյն փաստաթուղթ է հայ եւ համաշխարհային իրաւագիտութեան պատմութեան մէջ (ՂՅ, 3–31, 46–58):

Վաչագան Բարեպաշտի թագաւորութեան օրօք Արցախ-Ուտիքեան աշխարհում եւ յարակից տարածքներում Հայոց թագաւորութեան վերականգնման հետ մէկտեղ բարգաւաճեցին նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու արեւելեան թեմերը:

4. ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԸ

Հայ Առաքելական Եկեղեցու հովանու տակ գտնուող «Աղուանից» հայրապետական աթոռը, Մեծ Առանքի (Մեծ Իրանք) եպիսկոպոս Աբասի հայրապետութեամբ (552–596), տեղափոխուեց Կուրի աջափնեակ՝ Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Ուտի Առանձնակ գաւառի Պարտաւ քաղաք: Հայ Առաքելական Եկեղեցու Ուտիքի եւ Արցախի թեմերի պատմութեան բաղկացուցիչ մասն է «Աղուանից» հայրապետութեան պատմութիւնը, որն իր հերթին արտացոլել է Հայոց Արեւելից կողմանց եւ ձախափնեայ բուն Աղուանքի թեմերի պատմական ընթացքը՝ Հայ Առաքելական Եկեղեցու հովանու տակ:

Հայ Առաքելական Եկեղեցու աւանդոյթների վրայ հիմնուած «Աղուանից» հայրապետութիւնը հայոց դաւանաբանութեան հետեւորդն էր: Հայկական ծագմամբ «Աղուանք» անուանումը[3], յետագա-

յում եկեղեցական իմաստ ստանալով, հայկական աղբիւրներում սկսեց կիրառուել նաեւ Արցախ եւ Ուտիք նահանգների թեմերի առումով[4]:

Հայ Առաքելական Եկեղեցու հովանու ներքոյ գտնուող Վրաց եւ «Աղուանից» եկեղեցիները յետագայում տարբեր ընթացք ունեցան: Եթէ Բիւզանդական կայսրութեան կրօնական քաղաքականութեան հետեւանքով, քաղկեդոնականութեան ազդեցութեամբ Վրաց Եկեղեցին 609 թ. պառակտուեց Հայ Առաքելական Եկեղեցուց, ապա «Աղուանից» հայրապետութիւնը մնաց նրա հովանու տակ:

Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Յովհաննէս կաթողիկոսը (796–821) հայրապետական աթոռը Պարտաւից տեղափոխեց Բերդակ (Բերդակուր), ուր գտնուում էր հայրապետական ամառանոցը Տրտու (Թարթառ) գետի ափին (Գանձ., 198): XI–XII դդ. հայրապետական աթոռը տեղափոխուեց Գանձակ, այնուհետեւ՝ Յակոբավանք:

Արաբական խալիֆայութեան՝ 852 թ. Հայաստան ներխուժած մի զօրքի՝ Տարօն-Սասունում կրած պարտութիւնից յետոյ խալիֆը ապստամբ հայերի դէմ զօրք ուղարկեց Բուղայի գլխաւորութեամբ, որը դաժանօրէն ասպատակեց երկիրը: Սակայն նա մի շարք պարտութիւններ կրեց Վասպուրականում եւ Արցախում, ուր ներխուժեց 853 թ.:

Պարտաւը գրաւելուց յետոյ Բուղան նպատակադրուեց յարձակուել Արցախի իշխան Եսայի Աբու Մուսէի վրայ, որին Թովմա Արծրունին (IX դ. 30-ական թթ. – 906 թ.) բնութագրել է որպէս աստուածասէր եւ կարդացող այր: Հայ իշխանը կազմակերպեց Քթիշ (Գտիչ) ամրոցի պաշտպանութիւնը եւ հերոսաբար դիմադրեց թշնամուն: Բուղան նրան առաջարկեց հնազանդուել, սակայն քաջարի Եսայի իշխանը, հաւաքելով ռազմական ուժերը Քթիշ ամրոցում, պատասխանեց. «Յայտնի թող լինի՝ որքանով կը բաւարարի իմ զօրութիւնը եւ ողջ լինեմ, Տէր Աստուծոյ զօրութեամբ եւ ուժով կը դիմադրեմ: Եթէ այստեղից հեռանաս, խաղաղութիւն կը լինի, այլապէս՝ պատերազմ եւ կռիւ եւ ճակատամարտ, եւ դու՝ նպատակ, իմ աղեղը՝ խոցոտիչ, դու՝ ախոյեան, իմ զինուորները՝ յաղթանակ, դու՝ ոսոխ, իմ զօրքը՝ պատժող, քո՝ պատերազմ, եւ մեր՝ յաղթութիւն, քո՝ մարմին, եւ իմ՝ նիզակ, քո՝ պարանոց, եւ իմ՝ սուսեր…» (Արծ., 3, Ժ):

Մինչ ապշահար եւ շանթահարուած Բուղան խալիֆին գրութիւն ուղարկեց այդ ամէնի մասին եւ յետագայ գործողութիւնների համար պատասխանի սպասելով շարունակեց Քթիշ ամրոցի պաշարումը, Եսայի իշխանը իր ամբողջ զօրութեամբ հարուածեց թշնամուն, պարտութեան մատնեց եւ վերադարձաւ իր ամրոցը: Եսայի Աբու Մուսէ իշխանը փառապանծ էջ գրեց Հայոց հերոսական պատմութեան մէջ: Արցախի ազատագրական պայքարի ջահը փոխանցուեց Վասպուրական, ուր ապստամբները, Գուրգէն Ապուպելճ Արծրունու գլխաւորութեամբ, ջախջախեցին եւ Հայաստանից դուրս քշեցին օտար նուաճողներին:

5. ԳԱՆՁԱՍԱՐԻ 949 ԹՈՒԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԸ

Ըստ Ստեփանոս Տարօնեցի Ասողիկի՝ Հայոց կաթողիկոս Անանիա Ա Մոկացու օրօք Հայոց աշխարհում ծաղկում էր եկեղեցական կեանքը եւ բազում վայրերում վանքեր էին կառուցւում: Հայ պատմիչը միաժամանակ տագնապով նշում է Հայաստանում քաղկեդոնականութեան թափանցման եւ քայքայիչ գործունէութեան մասին, ինչը կապուած էր Բիւզանդական կայսրութեան կրօնական քաղաքականութեան հետ:

Անանիա կաթողիկոսը հրամայում է կրկին մկրտել քաղկեդոնական ծէսով ստիպողաբար մկրտուածներին (Ասող., 178): Նրան խիստ անհանգստացնում էր այն լուրը, որ քաղկեդոնականութիւնը սպառնում էր նաեւ «Աղուանից» հայրապետութեանը:

949 թ. նա գնում է Արցախ: Նրան դիմաւորում է աստուածապահ ու բարեպաշտ Գրիգոր իշխանը՝ եպիսկոպոսների, ճգնաւոր վանականների, բազմաթիւ այլ եկեղեցականների հետ: Գրիգոր իշխանը, հիւրընկալելով կաթողիկոսին, միեւնոյն ժամանակ հրովարտակ է ուղարկում բոլոր գլխաւոր իշխաններին՝ Խաչէնում ժողովի մասնակցելու հրամանով: Գանձասարի վանքում կայացած ժողովի մասնակիցների ցանկից երեւում է, որ «Աղուանից» հայրապետի ընտրութեանը մասնակցում էին միայն Կուրի աջափնեայ թեմերի ներկայացուցիչները:

Գանձասարի ժողովում պատասխան տրուեց, որ քաղկեդոնականութիւնը չէր արմատաւորուել «Աղուանից» հայրապետութեան, յատկապէս Հայոց Արեւելից կողմանց թեմերում, որոնք միաբան էին Հայ Առաքելական Եկեղեցու հետ (Անան., 137, 144): Գանձասարի ժողովը ցոյց տուեց, որ Գանձասարի վանքը արդէն 10-րդ դարում կարեւոր նշանակութիւն էր ձեռք բերել Հայաստանի եկեղեցական գործերում:

6. ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԳԼԽԻ ՄԱՍԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու կառուցումն ունի

իր աւանդութիւնը, որի նախապատմութիւնը կապուած է Քրիստոսի Եկեղեցու սուրբ նահատակների նշխարների եւ յատկապէս ս. Յովհաննէս Մկրտչի հետ՝հիմնուած Աւետարանի յայտնի պատմութեան վրայ, որը վերապատմուել էր վաղ միջնադարից մինչեւ Կիլիկիայի Հայկական թագաւորութեան դարաշրջանը:

Ըստ աւանդութեան՝ Յովհաննէս Մկրտչի գլխատումից յետոյ նրա աշակերտները մարմինը թաղում են նշանաւոր տեղում: Այստեղից աւանդութիւնը ստանում է տեսիլքների նկարագրութիւնների բնոյթ (Կաղ., 348):

Առաջին տեսիլքով՝ճգնաւորներին երեւում է Յովհաննէս Մկրտչի տեսլական պատկերն ու մատով ցոյց տալիս իր գլխի տեղը, որը նրանք գտնում, փորում, հանում են եւ տանում: Երկրորդ տեսիլքով՝ սուրբ գլուխն անցնում է մի աղքատ մարդու ձեռքը, իսկ երրորդով՝ յայտնի է դառնում Յովհաննէս Մկրտչի կամքը: Մինչ ննջած ճգնաւորները ելնում ու որոնում են գլուխը, երեւում է ս. Յովհաննէսն ու ասում նրանց, որ չտրտմեն, ինքն է այդպէս կամեցել: Աւանդութիւնում պատմւում է նաեւ նրա գլխի շնորհիւ կատարուող հրաշքների մասին: Աղքատը սուրբ գլուխը տանում է իր տուն, որտեղ գալիս են բազմաթիւ հիւանդներ, գիշերն այնտեղ դրուած ամանից առաւօտեան ըմպում ջուրն ու բուժւում զանազան հիւանդութիւններից: Այնուհետեւ Յովհաննէս Մկրտչի գլուխը յայտնւում է մի բրուտի մօտ, որը նոյնպէս բժշկումներ էր անում, ապա նա սուրբ գլուխը տեղադրում է իր պատրաստած կուժի մէջ: Նրա մահից յետոյ սուրբ գլուխն անցնում է Արցախի տիրոջ՝ Հասան-Ջալալ Դօլայի եղբօրը:

Արցախի տէրը սուրբ գլուխը վերցնում է իր եղբօրից, բերում եւ դնում Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու հիմքում, որը նա կառուցում է Գանձասարում: Այնուհետեւ յիշատակւում է եկեղեցու հիմքում միւս սրբերի մասունքների ամփոփման մասին (Կաղ., 349):

7. ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԳԱՆՁԱՍԱՐՈՒՄ

Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Գանձասարի վանական համալիրի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու կառուցումը սկսուել է 1216-ին եւ աւարտուել 1238-ին: Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին Արցախի ճարտարապետութեան թագն ու պսակն է (Գանձ., 269):

Հասան-Ջալալը եկեղեցին կառուցել է հին վանքի տարածքում, ինչի մասին վկայում են վանքի բակում ու շրջակայքում հնուց մնացած

խաչքարերը (1174, 1181 եւ 1202 թթ.) (ԴՀՎ, V, 63), ինչպէս նաեւ գաւթի շինարարութեան համար օգտագործուած բազմազան քարերը, որոնք մնացել էին հին վանքի շէնքից:

Եկեղեցու կառուցման մասին ճշգրիտ տեղեկութիւններ են պահպանուել Հասան-Ջալալ Դոլայի՝ եկեղեցու ներսի հիւսիսային պատին, աւազանից վերեւ, պատուհանի երկու կողմերում քանդակուած վիմագիր մեծ արձանագրութիւնում (ԴՀՎ, V, 38–40):

Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ 1240 թուականին, Վարդավառի (Քրիստոսի Պայծառակերպութիւն՝ Այլակերպութիւն) օրը, տեղի է ունեցել եկեղեցու օծման արարողութիւնը, որին մասնակցել են Աղուանից կաթողիկոս Ներսէսը (1235–1262), եպիսկոպոսներ, մեծ վարդապետ Վանականը, Խաչէնի վարդապետներ Գրիգորիսն ու Եղիան, քահանաներ (Գանձ., 270):

Հասան-Ջալալ Դոլան իր իսկ կառուցած եկեղեցում աղօթքներ էր անում, զբաղւում ընթերցանութեամբ: Կիրակոս Գանձակեցու հաղորդման համաձայն՝ Հասան-Ջալալի կինը՝ Մամքանը (Սիւնեաց աշխարհի Բաղաց թագաւորի թոռնուհին), շինել է Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու հրաշալի գաւիթը (Գանձ., 270): Ըստ տաճարի արեւմտեան պատին փորագրուած արձանագրութեան (1261 թ.)՝ Արցախի իշխան Ջալալ Դոլան, նրա կին Մամքանը եւ որդին՝ Աթաբակ-Իւանէն, Գանձասարում ժամատուն են շինել (ԴՀՎ, V, 72): Ջալալ Դոլան Աստծուց խնդրում է, որ իրենց յիշեն աղօթքներում: Աթաբակը, հողային նուիրատուութիւնների հետ մէկտեղ, եկեղեցուն ընծայում է մի ոսկետուփ Աւետարան եւ սուրբ Խաչ: Մամքանը իր հոգու փրկութեան համար նաեւ մատուռ էր շինել (1251 թ.) Խաչէն գետի ձախ ափին՝ Վանք եւ Առաջաձոր գիւղերի միջեւ գտնուող Վաճառ գիւղատեղում:

Գանձասարի վանքում զգալի թիւ են կազմում ուխտագնացութեան եւ նուիրատուական բնոյթի վիմագիր արձանագրութիւնները (ԴՀՎ, V, 50–71):

8. ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին Արցախի Հասան-Ջալալեան իշխանական տան ամենանշանակալի կառոյցն է: Կիրակոս Գանձակեցին բարձր գնահատական է տուել Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցուն՝ որպէս կատարեալ ճարտարապետական ստեղծագործութեան:

Տ. Մակար եպս. Բարխուտարեանցը, հետազօտելով Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու ճարտարապետութիւնը, նշել է, որ տաճարը շինուած է ամբողջապէս սրբատաշ, տորոնագոյն ազնիւ քարով (կարմրաւուն տուֆ), ինչպէս Խոթայ, Խաթրայ, Վարագայ, Գօշայ եւ Հաղարծնի վանքերը (Բարխ., 170, 250):

Գանձասարի վանքը, ըստ Լէոյի (Առաքել Բաբախանեան), հայ ճարտարապետութեան բարձր աւանդոյթների, նրբագեղ ճաշակի ու վեհութեան թագակիրն է (Լէո, 1919 թ., 147):

Ըստ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա Յովսէփեանցի՝ քիչ չեն փառաւոր տաճարները, որոնք, հայ նախկին աւանդոյթները պահպանելու հետ, ունեն նաեւ XIII դարի հայ ճարտարապետութեան վերածնութեանը յատուկ գծեր եւ զարդարանքի ոճեր: Նրանց թուին է պատկանում նաեւ Խաչէնի Գանձասարը (Յովս., 12):

Սեդրակ Բարխուդարեանը Ս. Յովհաննէս Մկրտիչ տաճարի մասին գրել է. «Իր դարաշրջանի հայ ճարտարապետական արուեստի ամենաակնառու կոթողներից է, իսկ գմբեթի, բեմի եւ այլ մասերի զարդաքանդակների առատութեամբ ու վարպետութեամբ՝ գրեթէ եզակի… Տաճարն վեհատեսիլ է, իր բարձրադիր դիրքի շնորհիւ տեսանելի է շատ հեռուից…»(ԴՀՎ, V, 37–38):

Մուրադ Հասրաթեանը, բարձր գնահատելով Գանձասարի վանքի ճարտարապետութիւնը, գրում է. «Հայ ճարտարապետութեան Արցախի դպրոցի գլուխգործոցները հիմ-

նականում կենտրոնացուած են վանական համալիրներում՝ Գանձասարում, Դադիվանքում, Խաթրավանքում ու Գտիչ վանքում… Հայ միջնադարեան ճարտարապետութեան գլուխգործոցներից է Գանձասարի վանքը…. Գանձասարի համալիրը բաղկացած է եկեղեցուց, գաւթից, բնակելի խցերից, տնտեսական շինութիւններից, ինչպէս նաեւ XIX դարում կառուցուած դպրոցի երկյարկանի շէնքից: Մօտաւորապէս ուղղանկիւն յատակագծով պարիսպներով շրջափակուած տարածութեան մէջտեղում, ազատ կանգնած, բարձրանում է հիմնական յուշարձանախումբը (եկեղեցին եւ գաւիթը), իսկ միւս շինութիւնները կառուցուած են հիւսիսային եւ արեւելեան պարիսպներին կից:

Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու ճարտարապետութիւնն ունի X–XIV դարերում հայ ճարտարապետութեան մէջ տարածուած ուղղանկիւն, ներքուստ խաչաձեւ գմբեթաւոր յօրինուածք, չորս անկիւնները զետեղուած երկյարկանի աւանդատուներով: Գանձասարի եկեղեցու արտաքին չափերն են 11,8 x 17,4 մ… Գանձասարի ճարտարապետութեան ամենակարեւոր եւ աչքի ընկնող տարրը գմբեթն է, որն իր գեղարուեստական զարդարանքով բացառիկ տեղ է գրաւում հայ արուեստի պատմութեան մէջ: Եկեղեցու ողջ յօրինուածքում այն գերիշխում է նաեւ համաչափութիւններով եւ ունի հովանոցաձեւ վեղարով բազմանիստ թմբուկ: Նիստերը 16-ն են, որոնցից իւրաքանչիւրն աւարտւում է փոքրիկ ճակտոնով: Տարբեր կողմերի նայող նիստերի վրայ բացւում են նեղ ու երկար լուսամուտներ, իսկ հիւսիս-արեւելեան, հարաւ-արեւելեան եւ հարաւ-արեւմտեան նիստե-

ին՝ բոլորաձեւ լուսամուտներ՝ ներգծուած նուրբ զարդաքանդակներով ծածկուած քառակուսի շրջանակների մէջ:

Գմբեթը գտնւում է եկեղեցու ճիշտ կենտրոնում, որը լուսաւորւում է հիւսիսային, հարաւային եւ արեւելեան ճակատների վրայ գտնուող երեք մեծ պատուհաններով: Գմբեթի թմբուկի վրայի պատուհանների հետ միասին նրանք բաւականին լուսաւորում են եկեղեցին[5]:

Գանձասարի վանքի եկեղեցին ճոխ զարդարանք ունի թէ՛ ներքնապէս, թէ՛ արտաքնապէս: Գմբեթը կրող հիւսիսային եւ հարաւային կամարները զարդարուած են «ատամնաշարով», իսկ արեւելեան եւ արեւմտեան կողմինները՝ մի շարք կիսաշրջանակաձեւ կամարիկներով: Թմբուկի ստորին անկիւններում երկրաչափական մոտիւներով զարդաքանդակներ են՝ բոլորակներ, աստղեր եւ քառակուսիներ, իսկ վերեւում՝ ուղղակի գմբեթի տակ, զետեղուած են ցուլի, խոյի եւ արծիւի բարձրաքանդակները, միջնադարեան հայ արուեստի յատկանիշները:

Գմբեթի քանդակները, ճարտարապետական հարթաքանդակի ինքնատիպ օրինակներ լինելուց զատ, ունեն նաեւ խորհրդանշական յատուկ իմաստ:

Թմբուկի երկու արեւմտեան նիստերի որմնախորշերում ներկայացուած են նստած երկու մարդկանց բարձրաքանդակները, որոնցից իւրաքանչիւրը գլխից վերեւ բարձրացրած պահում է եկեղեցու մի մանրակերտ (ենթադրւում է, մէկը Խաչէնի իշխան Հասան-Ջալալն է՝ Գանձասարի եկեղեցու կառուցողը, իսկ միւսը՝ նրա որդին):

Թմբուկի երկու բարձրաքանդակների մէջտեղը գտնուող նիստի վրայ զետեղուած է Քրիստոսի քանդակը, իսկ աւելի ներքեւ՝ Ադամի եւ Եւայի հարթաքանդակները:

Նման խմբաւորում կայ նաեւ գմբեթի հարաւային կողմում: Այստեղ նոյնպէս սիմետրիկ տեղադրուած են ծնկաչոք, լուսապսակներով մարդկանց (հաւանաբար առաքեալներ) քանդակներ, որոնք դիմում են միջին նիստի ճակատում պատկերուած Աստուածամօրը:

Եկեղեցու արեւմտեան ճակատին կայ մի այլ հետաքրքրական եւ բարձրարուեստ պատկերաքանդակ՝ Խաչելութեան տեսարանը, որը, սակայն, գաւիթը կառուցելուց յետոյ ամբողջութեամբ երեւում է միայն վերջինիս տանիքից:

Հիւսածոյ զարդաքանդակներով մշակուած լայն խաչի երկու կողմերում պատկերուած են դէպի Քրիստոսուղղուած զոյգ, ծնկաչոք մարդիկ… Եկեղեցին ունի նաեւ այլ քանդակներ՝ արեւմտեան պատի վրայ հին ոճով մի թռչուն, հարաւային ճակատին՝ մի կաքաւ…

Գանձասարի եկեղեցու արտաքին կերպարը, նրա ծաւալատարածական լուծումը եւ, առաջին հերթին, յարդարանքը, ակնյայտ ցոյց են տալիս ճարտարապետի ձգտումը՝ շէնքին տալ առաւել կոթողային ու վեհ տեսք, որը պէտք է մարմնաւորէր Խաչէնի իշխանութեան հզօրութիւնը եւ նրա տէր Հասան-Ջալալի բարձր դիրքն ու հեղինակութիւնը ողջ Հայաստանում» (Հաս., 1992 թ., 34–35):

Մուրադ Հասրաթեանը գրում է, որ Գանձասարի գաւիթը իր ճարտարապետութեամբ նոյնպէս նշանաւոր է նոյնատիպ կառույցների շարքում: «Այն ներկայացնում է քառանկիւն յատակագիծ (ներքին չափերը՝ 11,85 x 13,45 մ), երկու զոյգ իրար հատող կամարներ ունեցող շթաքար ծածկով:

Գաւիթն ունի քարէ սալերով ծածկուած տանիք, որի կենտրոնում, երդիկի վրայ բարձրանում է վեց սիւնանի զանգակատունը:

Այն նախնական չէ եւ 1907 թ. վերանորոգման արդիւնք է: Գաւթի սկզբնական զանգակատունը իր ձեւերով եւ գեղարուեստական հարուստ մշակմամբ համահունչ է եղել եկեղեցու գմբեթին…

Սրբատաշ բազալտից կառուցուած արտաքին ճակատները զուսպ են: Հարաւային ճակատը համարեա զուրկ է յարդարանքից եւ աշխուժանում է միայն լուսամուտների բացուածքներով: Հիւսիսային ճակատի նոյնպէս խիստ հարթութիւնը զարդարւում է միայն դռան համեստ մուտքով եւ վերջինիս վրայ բացուող լուսամուտի պարզ երեսակալով:

Հետաքրքրականն այստեղ մուտքի երկու կողմերում գտնուող յովազների բաւական ոճաւորուած քանդակներն են:

Գաւթի առաւել հարուստ մշակուած եւ աչքի ընկնող ճակատն արեւմտեանն է, որտեղ գտնւում է բաւականին ճոխ զարդարուած շքամուտքը… Դռան ուղղանկիւն բացուածքի երկու կողմերում կան կիսասիւների փնջեր, որոնք ունեն խարիսխ եւ խոյակ: Վերջինիս վրայ նստում է սլաքաձեւ կամարը: Շքամուտքի յօրինուածքի մէջ է ներառնուած դռան վերեւի լուսամուտը, իսկ անկիւններում քանդակուած են վաղ միջնադարեան արուեստին բնորոշ թռչուններ…

Ահա այսպիսին են Գանձասարի վանքի եկեղեցին եւ գաւիթը՝ երկու հիանալի կոթող, որոնք մարմնաւորել են XIII դ. հայ ճարտարապետութեան լաւագոյն նուաճումները» (Հաս., 1992 թ., 41–42):

Գանձասարի վանքի միւս շինութիւններն են խցերը, սեղանատունը, առաջնորդարանը, դպրոցը, ուխտաւորների կացարանը: Վանքը շրջապատող պարիսպները կառուցուած են որձաքարով եւ կիսամշակ բազալտով: Համալիրը երեք մուտք ունի՝ արեւելքից, արեւմուտքից ու հարաւից: Վերջինս է կենտրոնական, հանդիսաւոր մուտքը եւ ունի սրբատաշ քարերով կառուցուած մեծ դարպաս: Վանական համալիրից հարաւ ընկած է Արցախ-Խաչէնի հոգեւոր եւ աշխարհիկ տէրերի հին գերեզմանատունը:

Համաշխարհային մշակոյթի գանձարանում մեծ համարում ունեցող

հայ ճարտարապետութեան պատմութեան մէջ բարձր է գնահատուել Գանձասարի եկեղեցու նշանակութիւնը: Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Շարլ Դիլը համաշխարհային ճարտարապետութեան գլուխգործոցների շարքում հայ ճարտարապետական արուեստի հինգ լաւագոյն յուշարձաններից առաջինը համարել է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, երկրորդը՝ Ս. Հռիփսիմէի տաճարը Էջմիածնում, երրորդը՝ Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին, չորրորդը՝ Հաղբատի վանքը եւ հինգերորդը՝ Անիի Մայր եկեղեցին (Diehl., 43; Թոր., 25):

Ճարտարապետութեան պատմութեան ռուս յայտնի մասնագէտ Անատոլի Եակոբսոնը բարձր է գնահատել տաճարի արտաքին ու ներքին հարուստ ճարտարապետական-դեկորատիւ յարդարանքը՝ նշելով, որ Գանձասարի վանքի տաճարն ու գաւիթը (իր յօրինուածքով նման Հաղբատի ժամատանը եւ Մշկավանքի գաւթին) ճարտարապետական երկու հիասքանչ յուշարձաններ են, որոնք մարմնաւորել են XIII դարի հայ շինարարների լաւագոյն ձեռքբերումները: Ա. Եակոբսոնը յատկապէս նշել է, որ բարձրաքանդակներում սրբազան կենդանիների հանդէս գալը բնորոշ է X դարից՝ Բագրատունեաց ժամանակաշրջանից եկող հայ ճարտարապետական աւանդոյթին, իսկ այդ բարձրաքանդակները բովանդակութեամբ իմաստաւորւում են որպէս կառոյցի յենարաններ, ինչն իր արմատներով, ըստ Ն. Մառի, ծագում է դեռեւս տոհմատիրական ժամանակներից: Եակոբսոնը, Գանձասարի տաճարն ու նրա գաւիթը համարելով «XIII դ. հայկական ճարտարապետութեան գոհարներ եւ հանրագիտարան», նշել է, որ այդ շէնքերի ստեղծման ժամանակ կիրառուել է դարերով կուտակուած տեխնիկական ու գեղարուեստական՝ ճարտարապետական ու դեկորատիւ միջոցների այն հսկայական զինանոցը, որին կատարելապէս տիրապետում էին Գանձասարի կերտողները (Եակոբ., 8):

Արցախեան շարժման ընթացքում ժամանելով Արցախ՝ ռուս անուանի բանաստեղծ Միխայիլ Դուդինը խոր հիացմունքով է արտայայտուել Գանձասարի մասին. «Դա հայ ժողովրդի հոգեւոր գանձարանն է... Միջնադարեան այդ կոթողը՝ որպէս դարերի վկայ, իւրօրինակ նշան, այս աշխարհի հոգեւոր ճանաչման կուտակում, անպայման կը կատարի իր դերը... Գանձասարը գեղեցկութեամբ ու չափով մի իսկական կատարելութիւն է: Առաջներում ամէն ինչ վարպետների ուսերին էր, եւ թող տայ Աստուած, որ միշտ էլ այդպէս լինի: Որովհետեւ միայն վարպետն է զգում կեանքի ներդաշնակութիւնը...»:

Հայաստանի պաշտպանութեան գործում Արցախ աշխարհի ունեցած մեծ նշանակութիւնը գնահատելով հոգեւոր յուշարձանների առումով՝ Բագրատ Ուլուբաբեանը նշել է. «Դա միանգամայն հասկանալի մի իրողութիւն է դառնում, երբ նկատի ենք ունենում այդ աշխարհի դերը Հայաստանը հիւսիսից ու արեւելքից եկող ասպատակութիւններից պաշտպանելու գործում: Արցախն անխորտակ մի պատնէշ էր պարբերաբար յորդացող բռնագրաւիչ հեղեղների դէմ: Եւ ուշագրաւն այն է, որ հայապաշտպան այդ դիմագրաւումների ու ոգորումների մէջ իրենց անգնահատելի դերն ունէին լեռնաստանի վանքերը՝ Ամարասը IV դարի սկզբից՝ Գրիգոր Լուսաւորչի հիմնադիր ձեռքի դրոշմը վրան, Կատարոյ վանքը Դիզափայտ լեռան գագաթին..., Գտիչը՝ արաբների դէմ մղուած ազատամարտերի համար բերդ ու խրախուսիչ եւ, վերջապէս, ճարտարապետական հրաշակերտներ Դադիվանքն ու Գանձասարը» (Ուլուբ., 1975 թ., 177):

Գանձասարը ճարտարապետութեան ու քանդակագործութեան շաղկապուածութեան փայլուն օրինակ է: Գանձասարի ճարտարապետութիւնը կրում է հայ ժողովրդի հոգեւոր-շինարարական ներդաշնակ միասնականութեան խորհուրդը:

9. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Յիրաւի մեծ դեր էր վերապահուած հինաւուրց Հայկազուն-Սիսակեանների տոհմի Առանշահիկ-Վախտանգեաններից սերող Հասան-Ջալալեաններին՝ ինչպէս Խաչէնի իշխանական (առաւել նշանաւոր էր Հասան-Ջալալ Դօլան), այնպէս էլ Գանձասարի կաթողիկոսական գահին (առաւել յայտնի էր Եսայի Հասան-Ջալալեան կաթողիկոսը՝ 1702–1728 թթ.) ժառանգաբար պաշտօնավարելու ընթացքում:

Հայաստանում Բիւզանդական կայսրութեան զաւթումներին (XI դ. կէսեր) 1064-ից յաջորդեցին սելջուկների աւերիչ ասպատակութիւնները: Հայկական՝ Կարս-Վանանդի, Կիւրիկեանների Տաշիր Զորագետի, Սիւնիքի թագավորութիւնները և Սասունի, Խաչէնի, Զաքարեանների և միւս իշխանութիւնները գլխաւորեցին հայ ժողովրդի հերոսական դիմադրութիւնը երկիր ներխուժող քոչուոր հրոսակներին:

Հայոց մեծ օրէնսդիր Մխիթար Գօշը (1120–1213) գրել է Ուտիքի եւ Արցախի իշխանների՝ XII դարի կէսերին թուրքմէնների դէմ մղած հերոսական պայքարի մասին: Նա յատկապէս նկարագրել է Կայծոյ ծառ եւ Դիւախոռ կոչուող լեռների միջեւ ընկած տարածքում տեղի ունեցած ճակատամարտը: Հայկական զօրքը ինքնազոհաբար գլխաւորել է Գանձասարի հարեւանութեամբ գտնուող Խօխանաբերդի իշխան Գրիգորը: Հայերը հակահարուած հասցրին թշնամիներին՝ նրանցից շատերին ոչնչացնելով, սակայն ծանր էին նաեւ հայերի կորուստները: Մարտում իրենց կեանքը յանուն Հայրենիքի քաջաբար զոհաբերեցին Գրիգոր իշխանը եւ նրա զինակիցները, որոնց հէնց այնտեղ էլ թաղեցին: Իսկ մէկ տարի անց Գրիգոր իշխանի աճիւնը բերին Գանձասարի վանք, ուր գտնւում էր նրա նախնիների տապանատունը, եւ այնտեղ թաղեցին նրան (Ալիշան, 1901 թ., 387):

Զաքարեան իշխանական տոհմը գլխաւորեց հայ ժողովրդի պայքարը սելջուկ թուրքերի դէմ: Հիւսիս-արեւելեան ու կենտրոնական Հայաստանի (Գուգարք, Այրարատ, Տուրուբերան, Սիւնիք, Արցախ եւ Ուտիք)

ազատագրուած տարածքներում (Անի, Ամբերդ, Բագրեւանդ, Բջնի, Դուին, Կարս, Մանազկերտ, Արճէշ, Երեւան, Նախիջեւան, Կապան, Գագ, Գարդման, Գանձակ քաղաքների եւ բերդերի հետ միասին) վերահաստատուեց Հայոց պետութիւնը:

Սարգիս Մեծի եւ Սահակադուխտ Արծրունու որդիներն էին ամիրսպասալար Զաքարէ Բ Մեծը (XII դ. երկրորդ կէս – 1212 թ.) եւ զօրավար Իւանէ Ա-ը (XII դ. երկրորդ կէս – 1227 թ.), իսկ դուստրերն էին Վանենին, Դօփը[6], Խորիշահը եւ Նրջիսը: Խորիշահն ամուսնացել էր Խաչէնի տէր Վախթանգ-Տանգիկի հետ (մահ. 1214 թ.): Վախթանգ-Տանգիկի եւ Խո-

րիշահի որդիներն էին Հասան-Ջալալ Դօլան, Ջաքարէն, Իւանէն եւ Նասր Դօլան:

Խաչէնի իշխանական տները սերում էին Հայկազուն-Սիսակեան Առանշահիկների տոհմածառի Վախթանգեան ճիւղից: Վերին Խաչէնի Հաթերքի ճիւղի հոգեւոր կենտրոնը Դադիվանքն էր: Ներքին Խաչէնի (հոգեւոր կենտրոնը՝ Գանձասարի վանք) Խօխանաբերդի ճիւղը Հասան-Ջալալ Դօլայի անունով կրեց Հասան-Ջալալեան տոհմանունը:

Կիրակոս Գանձակեցին Հասան-Ջալալին բնութագրել է որպէս բարեպաշտ եւ աստուածասէր, հեզ ու հանդարտ, ողորմած եւ աղքատասէր այր (Գանձ., 268): Նրա որդին էր Իւանէ-Աթաբակը, դուստրերն էին Մամա-խաթունը, Մինա-խաթունը եւ Ռուզուքանը:

Հասան-Ջալալը XIII դարում հայ իշխանների մէջ աչքի էր ընկնում զօրութեամբ ու հեղինակութեամբ: Նա սկզբնաղբիւրներում մեծարուել է որպէս «բարեպաշտ արքայ Ջալալ», «ինքնակալ իշխանաց իշխան, տէր Խաչէնի», «Մեծ արքայ», «բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի, թագաւոր…» (ԴՀՎ, V, 37, 120; Մատ, N 9923, 5ա):

Հասան-Ջալալը գլխաւորում էր երկրի պաշտպանութեան գործը, երբ, ըստ Կիրակոս Գանձակեցու, Խաչէնի կողմերում մոլեգնում էր Հայաստան ներխուժած թաթար-մոնղոլների զօրքը: Հասան-Ջալալն իր իշխանութեան բնակիչներին ամրացրեց Խօխանաբերդում: Երբ մոնղոլները տեսան, որ անհնար է առնել բերդը, խաղաղութեան բանակցութիւններ սկսեցին: Հասան-Ջալալը հաստատուն մնաց իր բերդում, այնուհետեւ բանակցելով՝ ձգտեց երկիրը պաշտպանել թշնամու յարձակումներից: Աւելին, նրան յաջողուեց որոշակի ռազմաքաղաքական յարաբերութիւններ հաստատել մոնղոլների հետ (Գանձ., 267–270): Հասան-Ջալալը իմաստուն քաղաքականութեամբ կարողացաւ ապահովել Խաչէնի անվտանգութիւնը: Նա զգալիօրէն նպաստեց նաեւ Հայկական Կիլիկիայի թագաւորութեան արտաքին քաղաքականութեանը՝ մոնղոլների հետ բանակցութիւններ վարելով:

1243 թ. Երիզա (Երզնկա) քաղաքից արեւելք գտնուող Չմանկատուկ գիւղաքաղաքի մօտ տեղի ունեցած ճակատամարտում Բարձր Հայք ներխուժած Ռումի (Իկոնիա) սելջուկեան սուլթանութեան զօրքերը պարտութիւն կրեցին մոնղոլ զօրավար Բաչուի գլխաւորած զօրքերից, որոնց հետ դաշնակցած՝ սելջուկների դէմ կռւում էր նաեւ Հասան-Ջալալի գլխաւորած հայկական ջոկատը: Երբ մոնղոլներն արդէն հասել էին Հայկական Կիլիկիայի պետութեան սահմաններին, Կիլիկիայի թագաւոր Հեթում Ա-ը (1226–1270) Հասան-Ջալալի միջնորդութեամբ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատեց թաթար-մոնղոլների հետ՝ ռազմական դաշնակցութեան պայմանագիր կնքելով (1254 թ.), եւ Հայկական Կիլիկիայի թագա-

ւորութիւնը զգալիօրէն պաշտպանեց նրանց աւերիչ ներխուժումներից (Գանձ., 282, 341; Հեթ., 42–43):

Հասան-Ջալալ Դօլայի եկեղեցաշինական գործունէութիւնը չսահմանափակուեց միայն Արցախ աշխարհով: Նա իր կնոջ՝ Մամքանի հետ նախաձեռնեց թաթար-մոնղոլների արշաւանքների հետեւանքով աւերուած Կեչառիսի վանքի նորոգումը (1248 թ.):

Հայաստանում թաթար-մոնղոլների հարկային ճնշումը հետզհետէ ծանրացաւ, ի թիւս այլ երկրամասերի՝ նաեւ Հասան-Ջալալի կառավարած Խաչէնի իշխանութիւնում: Հայ ժողովրդի համար մոնղոլական տիրապետութեան քաղաքական ու տնտեսական լուծը անտանելի դարձաւ յատկապէս 1254–1255 թթ. աշխարհագրից յետոյ, երբ նուաճողները բազմաթիւ հարկեր սահմանեցին: Հայ ժողովուրդը 1259–1261 թթ. ապստամբեց նուաճողների դէմ: Սակայն ապստամբութիւնը դաժանօրէն ճնշուեց, իսկ ղեկավարները՝ Զաքարէ Զաքարեանը, Հասան-Ջալալը եւ ուրիշ իշխաններ, ձերբակալուեցին:

Կիրակոս Գանձակեցին Հասան-Ջալալի ձերբակալութիւնը եւ նրա մահը նկարագրել է որպէս սուրբ նահատակութիւն: Չնայած մեծ իշխանի դստեր՝ Ռուզուքանի գործադրած ջանքերին՝ մոնղոլ ոստիկանը դաժանագոյն մահուան ենթարկեց Հասան-Ջալալին (1261 թ.): Խաչէնի տէր իշխան Հասան-Ջալալի որդին՝Աթաբակ-Իւանէն, հօր աճիւնը հողին յանձնեց տոհմական գերեզմանոցում՝ Գանձասարում (Գանձ., 391–392):

10. «ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ»

Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդութեամբ «Աղուանից» հայրապետական աթոռի տեղափոխումը Կուրի աջափնեակ դարերի ընթացքում յանգեցրեց Գանձասարի վանքի շուրջ Հայոց Արեւելից կողմանց թեմերի համախմբմանը եւ նրանց առաջնութեանը «Աղուանից» հայրապետութեան մէջ: Հայրապետական աթոռի Ս. Յակոբայ վանքից Գանձասարի վանքի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցի տեղափոխուելուց հետո հայրապետութիւնը անուանուեց *Գանձասարի կաթողիկոսութիւն*, որն առաջնորդում էր Հայոց Արեւելից կողմանց եւ «բուն Աղուանքի» (նախկինից տարբեր վարչա-տարածքային բովանդակութեամբ) թեմերը, որպէս Հայ Առաքելական Եկեղեցու արեւելեան մասը: Գանձասարի կաթողիկոսութեան բարձրացումը Արցախի իշխանութիւնների, յատկապէս Խաչէնի Հասան-Ջալալեանների հզօրացման արգասիքն էր: Աւելին, Գանձասարի կաթողիկոսութեան ազդեցութիւնը շուտով նոյնիսկ դուրս եկաւ «Աղուանից» հայրապետութեան սահմաններից:

Մի ձեռագիր Աւետարանի յիշատակարանում գրիչ Խաչատուր քահանան նշել է «Արեւելեան կաթողիկոս Հայոց» Ստեփանոս Դ-ի (1262–1323) եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Կոստանդին Գ Կեսարացու (1307–1322) անունները: Նրանց ժամանակակիցն էր Կիլիկիայի Հայկական թագաւորութեան արքայ Օշինը (1308–1320) (ՀՁՅ, ԺԴ, 155):

Ըստ Լեւոն Խաչիկեանի՝ Ստեփանոսին «Արեւելեան կաթողիկոս Հայոց» անուանելով եւ այդ ժամանակուայ Ամենայն Հայոց կաթողիկոս Կոստանդինից առաջ յիշատակելով՝ Խաչատուր քահանան անժխտելի վկայութիւն է թողել, որ «Ոսկէ Հորդայի» նուաճած տարածքների (Ռուսաստանի հարաւում) հայկական գաղթավայրերը Գանձասարի կաթողիկոսութեան թեմ են եղել, եւ Գանձասարի կաթողիկոսները յայտնի էին որպէս «Հայոց Արեւելեան կաթողիկոսներ» (Խաչ., 13):

Գանձասարի կաթողիկոսներ Պետրոսը, Կարապետը, Մատթէոսը, Աթանասը եւ Յովհաննէսը աթոռակալեցին XV դարում: Նոյն դարի

սկզբին ստեղծուած ծանր պայմաններում՝ Գանձասարի կաթողիկոսութեան մի ճիւղը հաստատուել էր Ճալէթի վանքում: Այս ճիւղի ներկայացուցիչների թողած արձանագրութիւնների շարքն ամփոփւում է երեք կաթողիկոսների (Կարապետ, Թովմաս եւ Առաքեալ) տապանավէմի գրութեամբ (Բարխ., 129):

11. ԳԱՆՁԱՍԱՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԹՈՌԻ՝ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

XIV դարում, Հայկական Կիլիկիայի պետութեան համար ստեղծուած ծանր պայմաններում, Յովհան Որոտնեցին (1315–1386) Մեծ Հայքում, անհանգստացած Հայ Առաքելական Եկեղեցու յետագայ ճակատագրով, գտնում էր, որ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան աթոռը անհրաժեշտ էր տեղափոխել Գանձասար, որտեղից պաշտպանութիւնը կաթոլիկութեան ոտնձգութիւններից աւելի հեշտ կը լինէր: Միեւնոյն գաղափարին էր ս.Գրիգոր Տաթեւացին (1346–1409) (Մատ., N4669, 199բ–200բ; Գր., 277):

Գանձասարի հեղինակութիւնը բարձր էր շնորհիւ Հայրենիքի բարգաւաճմանը ծառայող Հասան-Ջալալեան տոհմի հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչների հայրենասիրական գործունէութեան:

Հայկական Կիլիկիայի թագաւորութեան անկումից (1375 թ.) յետոյ, օտար տիրապետութեան պայմաններում, Ամենայն Հայոց կաթողիկոսութեան աթոռի տեղափոխումը յետագայ տասնամեակների ընթացքում օրակարգի հարց դարձաւ՝ վաչկատուն ցեղերի աւերիչ ներխուժումների ու ասպատակութիւնների հետեւանքով:

Ամենայն Հայոց կաթողիկոսութեան աթոռի՝ Կիլիկիայի Սիս քաղաքից Մեծ Հայքի Այրարատեան աշխարհում՝ Էջմիածին-Վաղարշապատում, 1441 թ. վերահաստատելու անհրաժեշտութիւնը բխում էր հէնց այն հանգամանքից, որ նա վերադառնում էր իր նախնական եւ նուիրական սրբավայրը: Եւ արդէն իսկ Վաղարշապատի եկեղեցական ժողովի կազմութիւնն ու ներկաների թիւը, ինչպէս նշել է Մաղաքիա արք. Օրմանեանը, վկայում են դրա ընդհանուր ազգային ժողով լինելու կարեւորութեան մասին (Օրմ., Բ, 2455): Ըստ Թովմա Մեծոփեցու՝ թուով աւելի քան երեք հարիւր եկեղեցականների հետ մասնակցում էին նաեւ աշխարհականներ (Թով., 51–53):

Սուրբ Աթոռի՝ Կիլիկիայից Այրարատեան աշխարհ վերադարձի եւ Ս. Էջմիածնում (Վաղարշապատ) վերահաստատման ժամանակաշրջանում Գանձասարի կաթողիկոսն էր Յովհաննէս Հասան-Ջալալեանը: Տասներկու եպիսկոպոսների թւում Գանձասարի եպիսկոպոս Ազարիան եւս մասնակցել է Կիրակոս Ա Վիրապեցու (1441–1442) Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուելուն նուիրուած Վաղարշապատի ժողովին:

Հայոց աշխարհի արեւելքում Հայ Առաքելական Եկեղեցու հիմնասիւնն էր Գանձասարի կաթողիկոսութիւնը, որի միջոցով Մայր Աթոռը դարերի ընթացքում առաջնորդում էր ինչպէս Հայոց Արեւելից կողմերի՝ Արցախի եւ Ուտիքի՝ Կուրի աջափնեայ, այնպէս էլ ձախափնեայ թեմերը:

12. ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԾԱՆՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայաստանի համար դժնդակ ժամանակներ էին XV–XVI դարերը, երբ թուրքմէնական կարա-կոյունլու, ակկոյունլու եւ այլ քոչուոր ցեղերի ասպատակութիւններին յաջորդեցին թուրք-պարսկական պատերազմները՝ երկրի համար ողբերգական հետեւանքներով:

Գանձասարի Արիստակէս կաթողիկոսին յաջորդած նրա եղբօր՝ Հատիր-Մելիքի որդի Սարգիս կաթողիկոսի մասին տեղեկութիւնները վերաբերում են XVI դարի 40–50-ական թուականներին: Նուիրատուութիւնների հետ մէկտեղ Սարգիս Հասան-Ջալալեան կաթողիկոսը Գանձասարի վանքում նաեւ վերանորոգման աշխատանքներ է կատարել (Ուլուբ., բ 1981 թ., N 49): Նրա վախճանից յետոյ 1555 թ. Գանձասարի կաթողիկոս դարձաւ նրա եղբօր՝ Մեհրաբ-բեկի որդի Գրիգորը: Գրիգոր Գ կաթողիկոսի աթոռակալութեան շրջանում եւս հողային նուիրատուութիւններ են շարունակել կատարել Գանձասարի վանքին:

Գանձասարի կաթողիկոսութեան հեղինակութիւնը ճանաչում էին նաեւ օտար տիրակալները, որոնք իրենց յարաբերութիւններն ամրագրում էին Գանձասարի կաթողիկոսների իրաւունքը ճանաչող հրովարտակներով: Դա հիմնականում վերաբերում էր Հասան-Ջալալեանների տոհմի ներկայացուցիչներին: Այսպէս, պարսից Շահ Թահմազ I-ը 1570 թ. ապրիլի 19-ի հրովարտակով պաշտպանում էր Գրիգոր Գ Հասան-Ջալալեանի աթոռակալութեան տոհմական իրաւունքը (ՄՊՎ, Ա, 65–66): Այնուամենայնիւ, օտար ու-

ժերի բռնութիւնները շարունակւում էին: Գրիգորին յաջորդեց Մեհրաբ-բեկի թոռը՝ Դաւիթ Հասան-Ջալալեանը (Գրիգոր Գ-ի եղբօր՝ Բաղդասարի որդին), որի մասին Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմէոն Ա Երեւանցին գրել է. «Տէր Դաւիթ, որ խեղդեցաւ»: Ըստ Սիմէոն Երեւանցու կաթողիկոսական շարքի՝ Դաւթին յաջորդել է Փիլիպոսը, որն աթոռակից էր եղել Դաւթին: Փիլիպոսից յետոյ Գանձասարի կաթողիկոսական աթոռին գահակալել է Մեհրաբ-բեկի միւս որդին՝ Յովհաննէս Ը Հասան-Ջալալեանը: Նրան յաջորդել են Շմաւոնը եւ այլք (Սիմ.,78):

1603-ին պարսկական զօրքերը յարձակուեցին Հայաստանի այն շրջանների վրայ, որոնք մինչ այդ արդէն ծանր հարուածներ էին կրել օսմանեան հրոսակներից: Երբ յայտնի դարձաւ, որ օսմանեան բանակն անցել է յարձակման, Շահ Աբբասը հրամայեց Արարատեան դաշտից եւ միւս գաւառներից ու քաղաքներից (Ջուղա, Գանձակ, Արծկէ, Արճէշ, Բերկրի, Վան, Մանազկերտ, Վաղարշակերտ-Ալաշկերտ, Մակու, Կարս, Կաղզուան, Բասէն, Կարին-Էրզրում, Խնուս, Նախիջեւան) բնակչութեանը տեղահանել եւ գաղթեցնել Պարսկաստան (1604–1605 թթ.):

Տեղահանուած հայ բնակչութիւնն ահաւոր աղէտի ենթարկուեց. Երասխ-Արաքսը ստիպողաբար անցնելու ժամանակ շատերը խեղդուեցին, իսկ ողջ մնացածներին բնակեցրին Սպահանի շուրջ գտնուող գաւառներում, ուր նրանք հիմնեցին Նոր Ջուղա քաղաքը:

Այս ծանր ժամանակաշրջանում քաղաքական մասնատումն ընթանում էր օտար նուաճողների գրաւած տարածքների վերաբաժանման պայմաններում, ինչը նաեւ բացասաբար էր անդրադառնում Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի վրայ: Պարսից արքունիքի խարդաւանքները հասնում էին մինչեւ անդրկուրեան թեմերը: Վերջիններիս կարգավիճակի խնդրում պարսից շահերը խառնւում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Գանձասարի կաթողիկոսութեան միջեւ ծագող հարցերին, ինչպէս, օրինակ, երեւում է Շահ Աբբաս II-ի (1642–1666) հրո-

վարտակում (1650 թ.) յիշատակուող Շահ Սաֆի Ի-ի (1629–1642) 1634 թ. հրամանագրից (ՄՊՎ, Բ, 147 Գ, 28): Նման փաստերը վկայում են, որ հայ եկեղեցական կառոյցի բաղադրամասի նշանակութեամբ «Աղուանից Եկեղեցի» եւ «Աղուանից հայրապետութիւն կամ կաթողիկոսութիւն» հասկացութիւնների կիրառումը պատմական սկզբնաղբիւրներում Հայոց Արեւելից կողմանց թեմերի կապակցութեամբ՝ կենտրոնանում էր Գանձասարի կաթողիկոսութեան շուրջ:

Երբ Կախեթի թագաւոր Թեմուրազ Ի-ը (1625–1633) ասպատակում էր Գանձակի եւ Բարդայի (Պարտաւ) միջեւ ընկած տարածքը, Գանձասարի կաթողիկոս Յովհաննէս Թ Հասան-Ջալալեանը (Գրիգոր Գ-ի եղբօրորդին) տեսակցում է նրա հետ եւ խորհուրդ տալիս վերջինիս՝ իր տրամադրութեան տակ եղած 40 հազարանոց բանակով յարձակուել Թաւրիզի վրայ եւ գրաւել Ատրպատականը, քանի դեռ պարսից շահն ու օսմանեան սուլթանը զբաղուած էին իրար դէմ պատերազմելով: Կաթողիկոսը խոստանում է որպէս օգնութիւն տրամադրել իրեն ենթակայ մելիքների ուժերը: Սակայն Թեմուրազը Պարսկաստանի դէմ պատերազմում է՝ զինակցելով Գանձակը զաւթած Դաւութ խանի հետ: Այդ ընթացքում Թեմուրազը, ասպատակելով Արցախը, թալանում է Գանձասարի վանքը: Երբ պարզւում է, որ նա նոյնպիսի նուաճող է, ինչպէս միւսները, Գանձասարի կաթողիկոսն ասում է նրան. «Եթէ դու միայն եզներ եւ ոչխարներ էիր ուզում, դրանցից շատ կան եւ քո պետութեան մէջ, եւ չարժէր, որ նրանց համար նեղութիւն տայիր քեզ այստեղ գալու: Մի՛ մտածիր, սակայն, թէ Շահը քեզ ժամանակ կը տայ նորից այս կողմերը վերադառնալու: Կենդանիների փոխարէն նա գերի կը վարի հէնց քեզ» (Լէո, 1973, 3, Բ, 15):

Հախում գիւղի Ս. Նշան եկեղեցում պահուող Աւետարանի յիշատակարանից հետեւում է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Մովսէս Գ Տաթեւացու (1629–1633) վախճանի տարում Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսը (որն օտար տիրապետութիւնից հայ ժողովրդի ազատագրման գաղափարի հետեւորդ էր) գերեվարուել էր Պարսկաստան (Բարխ., 330): Յովհաննէս կաթողիկոսի վախճանից յետոյ Ամենայն Հայոց կաթողիկոս Փիլիպոս Ա Աղբակեցու (1633–1655) հրամանով Գրիգոր Դ Հասան-Ջալալեանը (1634–1653) նշանակւում է Գանձասարի կաթողիկոս (Սիմ., 79):

Թուրք-պարսկական պատերազմի աւարտով (1639 թ.) աւելի էր ծանրանում հայ ժողովրդի վիճակը Արեւմտեան Հայաստանում Օսմանեան կայսրութեան, իսկ Արեւելեան Հայաստանում՝ Սեֆեան Պարսկաստանի տիրապետութեան տակ: Գանձասարի կաթողիկոս Գրիգոր Դ-ի՝ 1639 թ. ձեռագիր Աւետարանի յիշատակարանում այդ ժամանակները բնութագրուած են որպէս դառն ու ամբարիշտ:

Գանձակը զաւթած խանի տնտեսական ճնշման պատճառով Գանձասարի կաթողիկոսութիւնը յայտնուեց ահաւոր պարտքերի տակ: Գրիգոր կաթողիկոսը ձերբակալուեց եւ նոյնիսկ փրկագին վճարելով չազատուեց պարտքերից ու դրանք մարելու համար շրջում էր իր կաթողիկոսութիւնում:

Օտար նուաճողների անօրինութիւնները եւ ճնշումները նաեւ ձեռնարկւում էին հայերին հաւատափոխ անելու նպատակով: Ուստի բնակչութիւնը, ցանկանալով իր եկեղեցավարչական իրաւասութիւննե-

րով լինել Ս. Էջմիածնի վիճակում, ձգտում էր դուրս գալ Գանձակի խանի ոտնձգութիւնների ոլորտից: Գանձասարի կաթողիկոսը Գանձակի խանի կամայականութիւններից ամէնից շատ տուժողն էր:

Արեւելեան Հայաստանի այն մասը, որտեղ գտնւում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, այդ ժամանակ ընդգրկուած էր Երեւանի խանութեան մէջ, որը գլխաւորում էր Խոսրովը (1648–1654): Ի տարբերութիւն այլ խաների, որոնք յայտնի էին իրենց դաժանութիւններով, Խոսրովը բարեացակամ էր: Նրա հայ լինելու մասին է վկայում այն փաստը, որ նա գնում էր Երեւանի խանութիւնում գտնուող հայկական դպրոցները եւ աշակերտներին շարականներ ու տաղեր էր երգել տալիս: Օտարների չարախօսութեան հետեւանքով Խոսրովի տեղն ուղարկուեց մէկ այլ խան, որը նրա լրիւ հակապատկերն էր:

Գանձասարի կաթողիկոսութեան համար ստեղծուած ծանր վիճակը դժգոհութիւն առաջացրեց միաբանութեան որոշ վանականների շրջանում, եւ նրանք, անհեռատեսօրէն, դժբախտութիւնների պատճառ համարելով կաթողիկոսութեան ժառանգական բնոյթը, պահանջեցին Գրիգոր Դ-ի հրաժարականը: Այդ շարժումը գլխաւորում էր ծնունդով Վարանդա գաւառի Խանձք գիւղից Պետրոս եպիսկոպոսը: Սակայն պարսից արքունիքը 1651 թ. Գրիգոր կաթողիկոսին հրովարտակ տվեց՝ կրկին հաստատելով նրա աթոռակալութիւնը:

Հայոց Արեւելից կողմանց ներքին կայունութեան ապահովման համար կարեւոր էր համարւում Գանձասարի կաթողիկոսական աթոռի նկատմամբ Հասան-Ջալալեանների տոհմի ժառանգական իրաւունքի պահպանումը (Գրիգոր կաթողիկոսի՝ Պետրոսին որդեգրելու միջոցով), ինչպէս երեւում է Պետրոս եպիսկոպոսի երդմնագրից, որն իրենց կնիքներով ամրագրել էին Խաչէնի մելիք Աթաբեկ Հասան-Ջալալեանը եւ Գրիգոր կաթողիկոսի կողմնակից երեք եպիսկոպոսներ:

Յայտնի է Պետրոս Խանձքեցու եկեղեցաշէն գործունէութիւնը: 1663-ին Աբբաս II-ի հրովարտակով ճանաչուեց նրա հովուապետութիւնը Արցախի, Գանձակի եւ Շիրվանի հայերի վրայ (Ջալ., Բ, 494–495):

Պետրոս կաթողիկոսի օրօք տարածաշրջանի մահմեդական իշխանաւորները շարունակեցին կրօնական հալածանքները հայերի դէմ: Իր հրովարտակով, Շահ Սուլեյմանը յայտարարում էր, որ կրօնական հալածանքը դէմ է շարիաթի կանոններին, եւ հրամայում էր սանձել մահմեդական իշխանաւորներին, իսկ մէկ այլ հրովարտակով Գանձասարի վանքն ազատում էր հարկերից եւ մահմեդական իշխանաւորներին հրամայում նեղութիւն չտալ ու յարգանքով վերաբերուել Արցախի հայ հոգեւորականութեանը (Ջալ., Բ, 491; Մկր., 95):

Ռուսաստանի հետ Նոր Ջուղայի հայ առեւտրական ընկերութիւնների համար բարւոք պայմաններ ստեղծելու նպատակով առաջինը Գանձասարի Պետրոս Խանձքեցի կաթողիկոսն էր, որ դիմեց ռուսական արքունիք: 1672 թ. դեկտեմբերի 2-ի նամակով նա ցար Ալեքսեյ Միխայլովիչին խնդրում էր հովանաւորել Ռուսաստանում առեւտրով զբաղուող խոջաներին եւ ամբողջ հայ ժողովրդին (APO, I, 91–92):

Գանձասարի կաթողիկոսութիւնում վիճակն աւելի բարդացաւ Պետրոս Խանձքեցու վախճանից յետոյ, երբ, Ամենայն Հայոց կաթողիկոս Յակոբ Դ Ջուղայեցու (1655–1680) հրամանին հակառակ, աթոռակալեց Սիմոն Խոտորաշէնցին (1675–1701): Յակոբ Ջուղայեցու թեկնածուն Երեմիա Հասան-Ջալալեանն էր: Սիմոնն ըմբոստացաւ, եւ խռովութիւն ծագեց նրա ու Երեմիայի մի-

ջեւ: Երեմիա եւ հակաթոռ Սիմոն կաթողիկոսներին խաղաղեցնելու համար Յակոբ Ջուղայեցին որոշակի ջանքեր գործադրեց եւ, մասնաւորապէս, նզովեց Սիմոնին:

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ

Աշխարհաքաղաքական վիճակի փոփոխմամբ XVIII դարի շեմին եւ յետագայում հայ իրականութեան մէջ ազատագրական պայքարի ընթացքը պայմանաւորուեց սեփական ուժերին ապաւինելով, քրիստոնէական երկրների աջակցութեամբ նուաճողների լծից ազատագրուելու եւ հայկական պետութիւնը վերականգնելու քաղաքականութեամբ:

Հայ ազատագրական գործն իրականացնելու նպատակով 1677-ին, Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի գլխաւորութեամբ, Ս. Էջմիածնում հրաւիրուեց գաղտնի խորհրդաժողով, որին մասնակցեցին մի շարք հոգեւորականներ, Սիւնիքի եւ Արցախի հայ մելիքներ, Երեւանի եւ այլ քաղաքների ներկայացուցիչներ: Որոշում կայացուեց Յակոբ Ջուղայեցու ղեկավարութեամբ գաղտնի պատուիրակութիւն ուղարկել Եւրոպա՝ Հռոմի պապից ու քրիստոնեայ պետութիւնների տիրակալներից օգնութիւն հայցելու մտադրութեամբ: Նախքան մեկնումը, Յակոբ կաթողիկոսը հանդիպումներ ունեցաւ Գանձասարի կաթողիկոսի եւ հոգեւորականութեան այլ ներկայացուցիչների հետ:

Յակոբ Ջուղայեցու գլխաւորած պատուիրակութիւնը 1679-ին ժամանեց Կոստանդնուպոլիս, ուր նա դժբախտաբար վախճանուեց (1680 թ.), եւ սկսած գործն ընդհատուեց:

Սիմոնի ու Երեմիայի միջեւ վէճը չէր դադարել: Ամենայն Հայոց կաթողիկոս Եղիազար Ա Այնթապցին (1681–1691) եղաւ Գանձասարում եւ այնուհետեւ իր կոնդակով ժողովրդին յորդորեց չընդունել Սիմոնին, այլ՝ միմիայն Երեմիային (1676–1700) (Սիմ., 81):

Յակոբ Ջուղայեցու պատուիրակութեան մասնակից Սիւնիքի մելիքներից մէկի որդին՝ Իսրայէլ Օրին, անցաւ Եւրոպա՝ ազատագրական պայքարում օտարի օգնութիւնը հայցելու: 1699-ի գարնանը Օրին վերադարձաւ Հայաստան՝ իր հետ բերելով Հռենոսեան Պֆալցի կուրֆեուրստ Յոհան-Վիլհելմի նամակները: Կուրֆեուրստը դրանցում հաւաստիացնում էր, որ ինքը «յանուն քրիստոնէական բարեպաշտութեան եւ մարդասիրութեան» կ'անի ամէն հնարաւորը տառապող Հայաստանի համար: Նամակում յիշատակուած էին Էջմիածնի եւ Կապանի (նկատի է առնուած Գանձասարի՝ ըստ Աշոտ Յովհաննիսեանի) կաթողիկոսները (Յով., Բ, 230):

Սիւնեաց աշխարհի Սիսիանի Անգեղակոթ աւանում Օրին հրաւիրեց գաղտնի խորհրդակցութիւն, որին մասնակցեցին Սիւնեաց տասը մելիքներ: 1699 թ. ապրիլի 8-ին Օրին եւ վեց իշխաններ գնացին Գանձասար՝ Երեմիա կաթողիկոսի մօտ, ուր գաղտնի ժողով գումարուեց: Ժողովին մասնակցեց եւս չորս արքեպիսկոպոս: Սակայն Հռոմի պապի, այսինքն՝ Կաթոլիկ Եկեղեցու գերակայութեան ճանաչման նոյնիսկ ակնարկը եղաւ Օրիի ձախողման հիմնական պատճառը Գանձասարում:

Անգեղակոթի ժողովականների յանձնարարութեամբ Օրին եւ նրա օգնական ընտրուած, Արցախի Ս. Յակոբ վանքի միաբան Մինաս վարդապետ Տիգրանեանը մեկնեցին Եւրոպա: Սակայն դեռեւս 1699 թ. յունուարին թուրքերի հետ հաշտութիւն կնքելով՝ Աւստրիան եւ նրա դաշնակիցները իրենց ռազմական ուժերը արեւելեան ճակատից տեղափոխել էին արեւմտեան ճակատ՝

Ֆրանսիայի եւ նրա դաշնակիցների դէմ, ինչով արմատապէս փոխուեց իրավիճակը՝ ի վնաս օտար լծից իր ազատագրմանը սպասող հայութեան: Արտաքին աջակցութեամբ օտար տիրապետութիւնից ազատագրուելու յոյսի հիմքերը խարխուլ էին:

Օրու գործունէութեան յաջորդ փուլը կապուած էր Ռուսաստանի հետ: Օրին, 1701-ին գնալով Ռուսաստան, ցար Պետրոս I Մեծին (1682–1725) ներկայացրեց Հայաստանի ազատագրման իր ծրագիրը, ինչի մասին նշանաւոր հայ գրող Ռաֆֆին յաջորդ դարում գրել է. «… Իրենց հայրենիքի փրկութեան գործը առաջ տանելու համար, յայտնեց Օրին, հայերը արդէն պատրաստած ունեն Շամախու կողմերում 17 հազար զինուոր, Ղարաբաղում՝ 60 հազար, իսկ Հայաստանի պարսկական 17 նահանգներից կարելի է հաւաքել աւելի քան 100 հազար հոգի… Որպէս Արեւելքին լաւ ծանօթ մարդ՝ Օրին ցոյց տուեց կայսրին Հայաստանի քարտէզը, ծանօթացրեց նրան հայոց հին պատմութեան եւ թագաւորների հետ եւ բացատրեց այն օգուտները, որ կայսրը կարող էր ունենալ՝ Հայաստանը իր հովանաւորութեան ներքոյ առնելով» (Ռաֆֆի, հ. 9, 430–431):

14. ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ՝ ԳԱՆՁԱՍԱՐԻ ԵՍԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Գանձասարի կաթողիկոսական աթոռին Եսայի Հասան-Ջալալեանը (1702–1728) բարձրացաւ հայ ժողովրդի համար ծանր ժամանակներում: Եսայի կաթողիկոսը Ռուսաստանում ապրող հայերին օրհնութեան խօսք յղեց (1702 թ. դեկտեմբերի 7) (Эзов, 139):

Միեւնոյն ժամանակ Եսայի կաթողիկոսը ցանկանում էր Գանձասարի աթոռի դիրքերն ամրապնդել Պարսկաստանի կողմից, քանզի վիճակը բարդանում էր խանական ճնշումներից, որոնք վարչականօրէն կրկնապատկում էին օտար տիրապետութեան լուծը: Եսայի Հասան-Ջալալեանը, խանական իշխանութիւններին շրջանցելով, ուղղակի մեկնեց Սպահան եւ պարսից Շահ Սուլթան-Հուսեյնից հրովարտակ ստացաւ, որի համաձայն՝ Գանձասարի կաթողիկոսութեան ենթակայութեան տակ էին համարւում Ղարաբաղի, Գանձակի, Զարգիբիլի (Քաշաթաղի) եւ Շամախիի թեմերը: Այդպիսի կարգաւիճակին համապատասխան, Շիրվանի հայ համայնքը որպէս հոգեւոր կենտրոն էր ճանաչում Գանձասարի կաթողիկոսութիւնը, իսկ կաթողիկոս՝ Եսայի Հասան-Ջալալեանին (Թօփճ. Բ, 19):

Եսայի Հասան-Ջալալեանը զբաղուեց նաեւ Ս. Էջմիածնից (Ամենայն Հայոց կաթողիկոսն էր Նահապետ Ա Եդեսացին, 1691–1705) նուիրապետական ենթակայութիւնը կարգաւորելու խնդրով:

Պետրոս I-ը անհրաժեշտ էր համարում ուսումնասիրել իրադրութիւնը Արեւելեան Անդրկովկասում եւ Պարսկաստանում: Այս նպատակով նա Օրուն ուղարկեց Պարսկաստան՝ որպէս ցարական դեսպանի: 1709-ին Օրին վերադարձաւ Շամախի՝ պատրաստուելով Ռուսաստան մեկնել Եսայի կաթողիկոսի հետ:

Ս. Էջմիածնում գիտէին ազատագրական գործում Գանձասարի դերի մասին եւ թէ ինչ ծանր տնտեսական վիճակում էր այն գտնւում: Ամենայն Հայոց կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցին (1706–1714) պաշտպանեց Եսայի կաթողիկոսին՝ հակաթոռ Ներսէսից (1706–1763), ինչպէս նաեւ յատուկ կոնդակով Գանձասարի կաթողիկոսին շնորհեց Շամախին ու Շիրվանը՝ իրենց շրջաններով՝ հաւաստելով այնտեղի եկեղեցականներին եւ ժողովրդին, թէ Գանձասարին տրուելիքը համարուելու է Ս. Էջ-

միածնին տրուած (Սիմ., 82–83): Աղեքսանդր Ա կաթողիկոսի գործունէութիւնը վկայում է, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ձգտում էր ուժեղացնել Գանձասարը: Քաղաքական հանգամանքները հաշուի առնելով՝ նա Եսայի կաթողիկոսին եւ հակաթոռ Ներսէսին ճանաչեց, որպէսզի ինչ-որ կերպ վերահսկի արեւելեան թեմերի ընթացքը, կասեցնի երկպառակութիւնը եւ խոչընդոտի օտար տիրակալների միջամտութեանը: Արդիւնքում, Եսայի եւ Ներսէս կաթողիկոսների միջեւ հաշտութիւն կայացաւ, ինչը յետագայում Ռաֆֆուն հիմք է տուել ասելու, որ զոյգ կաթողիկոսները, միացած Արցախի մելիքների հետ, գործում էին Հայրենիքի ազատագրման համար (Ռաֆֆի, հ. 9, 476):

Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանը, վստահելով Օրու ծրագրին՝ ազատագրել Հայաստանը Ռուսական կայսրութեան օգնութեամբ, կամեցել էր նրա հետ մեկնել Ռուսաստան: 1711 թ. օգոստոսին նրանք ժամանեցին Աստրախան, ուր մի քանի օր անց Օրին մահացաւ: Եսայի կաթողիկոսը վերադարձաւ Գանձասար: Նա համոզուել էր, որ մինչեւ դրսից օգնութիւն ստանալը անհրաժեշտ է տեղում համախմբել սեփական ռազմական ուժերը ազատագրական պայքարի համար:

Հազարամեակների փորձով իմաստնացած հայ ժողովրդի ազատատենչ ոգին անմար էր: Հայկական լեռնաշխարհի արեւելքում ինքնապաշպանութեան կենտրոններ էին մնում բերդերն ու բնական ամրութիւնները՝ սղնախները, որոնց ռազմական ուժերը կազմուած էին հայ մելիքների զինուած ջոկատներից: Եսայի Հասան-Ջալալեան կաթողիկոսը XVIII դարում հայ ազատագրական պայքարի ոգեշնչող ու նշանաւոր գործիչներից էր:

‹5· ԳԱՆՁԱՍԱՐԻ ‹7‹4 ԹՈՒԱԿԱՆԻ ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎԸ

Հայոց ապստամբութեան նախաշեմին Գանձասարի Եսայի կաթողիկոսը, գլխաւորելով Հայոց Արեւելից կողմանց հոգեւորականութեանը եւ մելիքներին, հայութեան եւ յատկապէս Գանձասարի կաթողիկոսութեան առաջ ծառացած խնդիրների լուծման հրամայականով մտահոգուած, 1714 թ. Գանձասարում գաղտնի ժողով գումարեց:

Գանձասարի ժողովի որոշումներով հռչակւում էր.

«Ա. Գանձասարի կաթողիկոսն կ՚ընտրուի ժողովրդեան ազատ իրաւունքով եւ կը հաստատուի Ս. Էջմիածնի կաթողիկոսի կոնդակով:

Բ. Գանձասարի կաթողիկոսն, ըստ դարաւոր սովորութեան, պէտք է հպատակի Էջմիածնի կամքին, հայութեան միութեան կապը պահպանելու համար:

Գ. Եթէ Ջալալեան տոհմի եպիսկոպոսներից եւ ազգից չգտնուի արժանաւորագոյն կաթողիկոսացու, դրսից ընտրելու է:

Դ. Որդիաբար հնազանդիլ Գանձասարի կաթողիկոսին եւ սիրով ընդունիլ նորա հոգեւոր կարգադրութիւնները:

Ե. Իւրաքանչիւր մելիքի գաւառի վիճակաւոր եպիսկոպոսն կամ վարդապետն կ՚ընտրուի տեղական ժողովրդից եւ մելիքից, եւ սոցա վկայաթղթով հանրագրութեամբ կը ներկայացուի Գանձասարի կաթողիկոսին:

Զ. Ամէն վիճակաւոր եպիսկոպոս իրաւունք ունի ձեռնամուխ լինել միայն իւր վիճակի կարգադրութեան եւ ոչ այլոց թէ՛ ձեռնադրութեամբ եւ թէ՛ որեւիցէ գործերով:

Է. Եթէ ամէն գաւառում հարկաւոր են վարդապետ, քահանայ, սարկաւագ եւ դպիր, վիճակաւոր եպիսկոպոսներն նախ պարտաւոր են գրով կանխաւ զեկուցանել Գանձասարի

կաթողիկոսին եւ ապա ձեռնադրել նորա հրամանաւ:

Ը. Ամէն եպիսկոպոս պէտք է հոգայ իւր վիճակի եւ իւր վանքի լուսաւորութեան եւ որչափ կարելի է ձեռնադրել ուսեալները եւ ոչ թէ տգէտները:

Թ. Վանահայրերի ընտրութիւնն կախուած է միաբանութիւններից եւ Գանձասարի կաթողիկոսի հաստատութիւնից:

Ժ. Յանցաւոր եպիսկոպոսների պատիժներն կախուած են կաթողիկոսից, իսկ միաբան վարդապետաց, սարկաւագաց եւ դպրացն՝ վանահայր եպիսկոպոսներից, եւ քահանաներինն՝ վիճակաւոր եպիսկոպոսից. բայց այս ամէնն զգուշաւոր քննութիւններից վերջն:

ԺԱ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է գահերէց ճանաչել Ջալալեան մելիքները եւ թէ՛ յայտնի եւ թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունիլ Գանձասարի վանքը: Ամէն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամէն գնդապետ՝ իւր զօրավարին եւ ամէն զօրական՝ իւր գնդապետին եւն:

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, եւ եթէ վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԴ. Իւրաքանչիւր մելիք, եթէ կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ եւ ուրիշ մելիքների իրաւունքը բռնի յափշտակել, կը պատժուի միւսների (մելիքների) ժողովով որոշած պատժով եւ ԺԴ (10.000) թուման տուգանք, կը տուժէ մելիքաց (ընդհանուր) գանձարանին եւ կը տուժէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը:

ԺԵ. Ամէն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ եւ միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների եւ գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

ԺԷ. Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական եւ մելիքական խառն ժողովոյ որոշած պատժով:

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամութիւն հաստատել եւ ո՛չ երկպառակութեամբ նոցա յարիլ:

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի, կրօնական եւ աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները եւ պահանջները:

Ի. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել եւ իւր գաւառի շահերը՝ իւր անձնական շահերից եւ օգուտներից:

ԻԱ. Մելիքներից ով որ կը յանդգնի, իւր օրինաւոր ամուսնոյն վերայ,

ուրիշ ապօրինի կին պահել, հասարակութեան տալ վատ օրինակ եւ գայթակղութիւն եւ թշնամանել Եկեղեցւոյ օրէնքը, այնպիսին անխնայ կը պատժուի արդար վրէժխնդրութեամբ:

ԻԲ. Ամէն մելիք պարտաւոր է գտնուիլ իւր զօրաց գլխին պատերազմի ժամանակ եւ խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը եւ զօրավարը:

ԻԳ. Մեզանից ով որ կը յանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց եւ կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայը հայի դէմ թշնամի յարուցանել եւ արիւնահեղութիւն պատճառել, այնպիսին մահուան պատժով կը պատժուի, միւս մելիքներն կը գրաւեն նորա բերդը եւ ինչքը ցնոր տնօրէնութիւն:

Ամէնքն ստորագրում են բնագիրը եւ արտագրուած հինգ օրինակները, յորոց մի-մի օրինակ առնում, (Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու – հեղ.) տաճարի ս. բեմը համբուրում եւ հեռանում են» (Բէկն., 210–214):

16. ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հայոց զինուած ապստամբութեան նախապատրաստման ժամանակաշրջանում կարեւոր էր նորընտիր Ամենայն Հայոց կաթողիկոս Աստուածատուր Ա Համադանցու (1715 –1725) դիրքորոշումն այդ գործում: Նա Գանձասարի Եսայի կաթողիկոսի համեմատ շատ աւելի զգուշաւոր էր գործում: Ինչպէս ասում էր Մինաս վարդապետի՝ Ռուսական կայսրութեան դեսպանական վարչութեանն ուղղուած 1717 թ. մարտի 14-ի զեկուցագրում, Աստուածատուր կաթողիկոսը մեծ մտավախութիւն ունէր Շահից, այնպէս չպատահի, որ «այդ մեծ գործը իրենց բոլորի համար կործանարար լինի: Սակայն, եթէ Նորին ցարական մեծութիւնը բարեհաճի պատերազմ սկսել Պարսկաստանի դէմ եւ իր զօրքերը այդ երկիրն ուղարկել, ապա նա իր հաւատարիմների հետ, որքանով կարող է, որպէս բարի միջոց, կ'օգնի»: Սակայն հայրապետն ասել է, որ գրաւոր հնարաւոր չէ հաւատարմութիւնը ցարին յայտնել, քանի որ այդ գործը պէտք է յոյժ գաղտնի պահել: Իսկ վարդապետին՝ քօղարկութեան համար կը տայ այնպիսի նամակ, ուր կ'ասուի, որ նա եղել է հայրապետի մօտ եւ նրա հետ տարբեր գործերի մասին սիրալիր եւ հաճելի զրոյց ունեցել: Եւ մի քանի օրից այդպիսի նամակ է նրան տուել:

Մինաս վարդապետը Ամենայն Հայոց կաթողիկոսի նամակով գնում է Գանձասարի Եսայի հայրապետի մօտ: Վերջինս տեղեկացնում է, որ այդ գործում ինքը ցարին կը ծառայի ամենայն հաւատարմութեամբ: Ի նշան իր հաւատարմութեան՝ Եսայի հայրապետը իր գրութիւնն ուղարկում է Մինաս վարդապետ Տիգրանեանի հետ:

Մինաս վարդապետը նաեւ տեղեկացնում է, որ Եսայի հայրապետի «տիրապետութեան տակ՝ Գանձասարի վանքի շրջապատում, ինը հարիւր գիւղ կայ, եւ այդ գիւղերը մեծ են. ունեն հարիւրից մինչեւ չորս հարիւր եւ աւելի տուն: Գանձասարից մինչեւ Էջմիածնի վանքը, որտեղ ապրում է միւս հայրապետը, բեռնակիր ձիերով հինգ օրուայ ճանապարհ է: Նրա տիրապետութեան տակ աւելի շատ գիւղ կայ, քան Եսայի հայրապետի» (Эзов, 322):

Մինաս վարդապետի մի տեղեկութեան համաձայն՝ եթէ առիթ լինի պատերազմելու Պարսկաստանի դէմ, Ս. Էջմիածնի եւ Գանձասարի

կաթողիկոսների ենթակայութեան տակ կը հաւաքուի մօտ 200 հազար մարդ եւ նրանք բոլորը կ՛աջակցեն ցարին, քանի որ պարսիկներից մեծ զրկանքներ են կրում:

Մինաս վարդապետի հաղորդմամբ կազմուած զեկուցագրի վերջում համեմատուած է երկու կաթողիկոսների պատրաստութիւնը ազատագրական պայքարում ցարի հետ համագործակցելու հարցում: Եւ շեշտը դրուած է Եսայի կաթողիկոսի վճռականութեան վրայ:

Գանձասարի Եսայի կաթողիկոսը 1716 թ. օգոստոսի 10-ի իր ուղերձում, դիմելով ցարին, յատուկ նշում է, որ երբ ռազմական գործողութիւնները սկսուեն, ինքը և իրեն հաւատարիմ մարդիկ պատրաստ կը լինեն ծառայութեան (Эзов, 317, 325):

1719 եւ 1721 թթ. Եսայի կաթողիկոսի երկու այցերը Ս. Էջմիածին բխում էին հայ ժողովրդի ազատագրական պայքարում Գանձասարի կարեւորութիւնից: Աստուածատուր Համադանցին հնարաւոր ամէն ինչ անում էր նպաստելու Գանձասարի կաթողիկոսութեան հզօրացմանը:

17. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ ՍԻՒՆԻՔՈՒՄ ԵՒ ԱՐՑԱԽՈՒՄ

1722 թ. կովկասեան լեզգիների, ինչպէս նաեւ խազարների եւ հոնների ցեղախմբերի աւերիչ ասպատակութիւնները հասան մինչեւ Արցախ, որտեղ Վարանդա գաւառում, ինչպէս նաեւ Գանձասարի մօտ թշնամին հայոց ուժերից վճռական հարուած ստացաւ: Թշնամու զօրքն այնուհետեւ պաշարեց Գանձակը, սակայն այստեղ նոյնպէս հանդիպեց քաղաքացիների դիմադրութեանը: Նրանց իր զօրքով օգնութեան հասաւ Քարթլիի Վախթանգ VI թագաւորը, ինչը լեզգիներին ստիպեց փախուստի դիմել:

Օտար նուաճողների դէմ հայկական ուժերի համախմբման խիստ անհրաժեշտութիւնից դրդուած, Սիւնեաց Կապանում ազատագրական շարժման կազմակերպման նախաձեռնող դարձած մեղրեցի Ստեփանոս Շահումեանը մեկնում է Վիրք, որտեղ գաղթած հայերի միջավայրում, Դաւիթ Բեկի գլխաւորութեամբ, 2000 մարտիկներից բաղկացած զօրամիաւորում է գումարւում (Այվ., 76–85):

Այդ նոյն ժամանակաշրջանում, Եսայի Հասան-Ջալալեանն ուղիներ էր փնտրում երկիրը ազատագրելու օտար լծից: Եսայի կաթողիկոսը 1722 թ. մայիսի 28-ին մեկնում է Տփղիս, ուր պէտք է մասնակցած լինէր Դաւիթ Բեկի գլխաւորութեամբ հայոց զօրական ուժերը Հայաստան վերադարձնելու ծրագրի մշակմանն ու իրականացմանը: Դաւիթ Բեկը Վիրքից յուլիսին գալիս է Սիւնիք:

Ռուսական կայսրութիւնը Վիրքը եւ Հայաստանն օտար լծից ազատագրելուն ձգտող ուժերի հետ յարաբերութիւնները կառուցում էր ելնելով իր քաղաքական ու տնտեսական շահերից: Վրաց թագաւորութիւնը նոյնպէս իր շահերից ելնելով էր հայ ազատագրական ուժերի հետ համագործակցում այն պահերին, երբ վերջիններս նրան պէտք էին լինում սեփական ծրագրերն իրականացնելու համար: Դրանով էր թելադրուած հայկական Ուտիքի տարածքում՝ Գանձակի մօտ վրացական զօրքերի մի քանի անգամ յայտնուելը, որոնցից վերջինը տեղի էր ունեցել Պետրոս Մեծի հետ ունեցած նախնական պայմանաւորուածութեամբ: Այդտեղ էին նաեւ եկել Եսայի Հասան-Ջալալեանի գլխաւորած հայկական ուժերը:

Հասան-Ջալալեանների գործունէութեան շնորհիւ Գանձասարը դարձաւ Խամսայի հինգ մելիքութիւնների [Գիւլիստանի (կենտրոնը՝ Գիւլիստանի բերդ) Մելիք-Բեգլարեանների, Ջրաբերդի (կենտրոնը՝ Ջրաբերդ ամրոց) Մելիք-Հայկազն-Եսայեանների, Խաչէնի (կենտրոնը՝ Խօխանաբերդի ամրոց եւ Գանձասար) Հասան-Ջալալեանների, Վարանդայի (կենտրոնը՝ Ծովատեղ-Աւետարանոց եւ Ծօշ կամ Քարագլուխ սղնախ) Մելիք-Շահնազարեանների, Դիզակի (կենտրոնը՝Տող եւ Քիրս սղնախ) Մելիք-Եգանեանների] (Ռաֆֆի, հ. 9) հոգեւոր ու ռազմաքաղաքական կենտրոնը, որտեղից էլ Գանձասարի կաթողիկոս Եսային ղեկավարեց հայ ժողովրդի ազատագրական պայքարը:

Պետրոս I-ի «Կասպիական արշաւանքի» (ռուսական բանակը 1722 թ. օգոստոսի 23-ին գրաւեց Դերբենդը եւ շարժուեց դէպի հարաւ) եւ հայկական ու վրացական զօրքերի հետ միանալու համար դէպի Շամախի արշաւելու մասին լուրերը մեծ ոգեւորութիւն առաջացրին ինչպէս հայկական Սիւնիք եւ Արցախ նահանգներում, այնպէս էլ Արեւելեան Վրաստանում:

Մինչ Դաւիթ Բեկը յաղթականօրէն կռուում էր Սիւնիքում, Վախթանգն ու Եսայի կաթողիկոսը հիւսիսարեւելեան ուղղութեան վրայ գործունէութիւն էին ծաւալում՝ սպասելով ռուսական բանակի արշաւանքին: Եսայի կաթողիկոսը հաւաստիացնում էր ռուսական հրամանատարութեանը, որ հայերը պատրաստի 40 հազար զինուորներ ունեն, իսկ առաջիկայում, երբ տեսնեն Ռուսաստանի կայսեր ողորմածութիւնը եւ

Արցախը եւ Ուտիքը
Գանձասարի կաթողիկոսության
ժամանակաշրջանում

յուսադրումը, ապա եւս այդքան կը հաւաքուի:

Սակայն «Կասպիական արշաւանքը» չշարունակուեց, եւ Պետրոս Ի-ը, կայազօր թողնելով Դերբենդում, վերադարձաւ Աստրախան: Երկու ամիս Գանձակի մօտ Պետրոս Ի-ին ապարդիւն սպասելուց յետոյ Վախթանգն ու Եսայի կաթողիկոսը իրենց զօրքերով հեռացան:

Այսպիսով, հայ ազգային գործիչների՝ օտարների միջոցով ազատագրուելու ձգտումները չիրականացան, ինչը պէտք է համոզէր, որ դրան կարելի էր հասնել միայն սեփական ուժերով: Այնուամենայնիւ, հայ գործիչները Հայրենիքի ազատագրման պայքարում շարունակեցին պահպանել քրիստոնեայ Ռուսաստանի հետ զինակցելու յոյսը:

Սիւնիքում եւ Արցախում շարունակուեց ազատագրական պայքարը: Ռազմական համբաւ էին ձեռք բերել «Շիրվանցի տղերքը»: Նրանք Շիրվանում ծառայող հայ զինուորականներն էին, որոնք Աւան իւզբաշու (հարիւրապետ) գլխաւորութեամբ վերադարձել էին Արցախ:

Այդ ժամանակաշրջանում էր, որ Եսայի կաթողիկոսի պահանջով Մինաս վարդապետը ձգտում էր ցարից հրամանագիր ստանալ հայերին գոնէ յուսադրելու համար: Պետրոս Ի-ի 1723 թ. յունիսի 3-ի հրամանագրով՝ հայ առեւտրականները վերցուում էին կայսերական հովանաւորութեան տակ՝ որոշ արտօնութիւններ ստանալով: Պետրոս Ի-ը հաւաստում էր, որ հակուած ու պատրաստ է հայերին առնել իր պաշտպանութեան տակ եւ ազատել անհաւատների լծից, բայց պէտք է հասկանալ, որ նախ հարկաւոր է ռուսական իշխանութիւնը հաստատել Կասպից ծովի վրայ, տիրանալ դրա շրջակայ վայրերին եւ ըստ ամենայնի պատրաստուել՝ հայերի մօտ արշաւելու համար: Պետրոս Ի-ը միեւնոյն ժամանակ խորհուրդ էր տալիս գաղտնի պահել Ռուսաստանից սպասուող օգնութեանը վերաբերող տեղեկութիւնները (Эзов, 355):

1723 թ. յունիսին թուրքերը գրաւեցին Թիֆլիսը, գահընկէց արեցին Վախթանգին, այնուհետեւ յարձակուեցին Գանձակի վրայ, որի պաշտպանութեանը մասնակցում էին նաեւ հայկական սղնախներից ժամանած ռազմական ուժերը: Գանձակի պատերի տակ թուրքերը խայտառակ պարտութիւն կրեցին ու նահանջեցին: Պարսկաստանը 1723 թ. սեպտեմբերի 12-ին պայմանագիր կնքեց Ռուսաստանի հետ, որով մերձկասպեան շրջանները վերջինիս անցան:

Սիւնիքում Դաւիթ Բեկը մի շարք յաղթանակներ տարաւ: Հայոց ուժերի համախմբման շնորհիւ յաջողուեց Սիւնիքը ազատագրել օտար քոչուոր՝ թրքախօս, ինչպէս նաեւ՝ քրդական ցեղերից:

Եսայի կաթողիկոսը եւ մելիքները Պետրոս Մեծին տեղեկացնում էին, որ թէեւ թշնամիները հարուածում էին չորս կողմից, հայերը, ամրագոյն տեղերում կռուելով, պահում էին հայրենի երկիրը՝ սպասելով ռուսական զօրքերի գալուն, մանաւանդ որ զէնքի պակաս էր զգացուում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Արցախի զինուորականութեանն ուղղուած 1724 թ. մարտի 13-ի նամակում նշւում էր, որ Երեւանի մարզի հայերը նոյնպէս սպասում էին ռուսական օգնական զօրքին: Միեւնոյն ժամանակ, նրանք մտավախութիւն ունէին, որ եթէ ռուսական զօրքը չհասնէր, ապա իրենց մեծ վտանգ կը սպառնար (АРО, II, 86, 99):

Ս. Էջմիածինը ազատագրական պայքարի գործի ղեկավարումն իրականացնում էր Գանձասարի միջոցով: Պարսկական եւ թուրքական լրտեսներն արդէն բացայայտել էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ ազատագրական պայքարը հովանաւորելու գաղտնիութիւնը:

1724 թ. մարտի 24-ին Շահ Թահմազ II-ի դեսպանորդների, Ռուսաստանի ներկայացուցիչ Իւան Կարապետի եւ Գանձակի խանի միջեւ կնքուեց Գանձակի պայմանագիրը, որով վաւերացուում էր քրիստոնեայ եւ ոչ քրիստոնեայ հակաթուրքական ուժերի համախմբումը:

Հայ բանագնացները, ժամանելով Պետերբուրգ, մի յուսահատական միտք են արտայայտում. «Եթէ Նորին կայսերական մեծութիւնը իրենց՝ հայերին, օգնական զօրքեր չբարեհաճի ուղարկել, ապա նրանք խնդրում են, որ Կայսերական մեծութիւնը բարեհաճի նրանց ընդունել իր հովանու տակ եւ հրաման տայ նրանց համար տեղեր յատկացնել Կասպից ծովի մօտ...» (Эзов, 386):

Նոյնիսկ ամենադժնդակ պայմաններում Եսայի կաթողիկոսը դէմ էր հայերին վերաբնակեցնելու քաղաքականութեանը: Աւելին, նրան չէր լքում Հայրենիքը զէնքով պաշտպանելու խոր համոզմունքը:

Գանձակի պայմանագրի կնքումն, այնուամենայնիւ, յետ չպահեց թուրքերին իրենց զաւթողական մոլուցքից:

Ռուսական կայսրութեան եւ Օսմանեան կայսրութեան միջեւ Կոստանդնուպոլսում կնքուած պայմանագրով (1724 թ. յունիսի 12) ազդեցութեան ոլորտների բաժանում տեղի ունեցաւ (ПСЗРИ, VII, 303–309, ДРВ, IV, XVIII), ինչը ծանր հետեւանք-

ներ ունեցաւ հայ ազատագրական պայքարի համար (Ուլուբ., 1998 թ., 223), քանզի թուրքերը, օգտուելով իրավիճակից, յաջորդ ամիսներին շարունակեցին ներխուժումը Թաւրիզի եւ Երեւանի ուղղութիւններով (Ջուլ., 96, Aiv., 13–17): Երեւանի հերոսական պաշտպանութիւնը տեւեց երեք ամիս (Աբրա.):

1724 թ. ամռանը Սիւնիքի հայ մարտիկները Դաւիթ Բեկի հրամանատարութեամբ յաղթանակներ տարան թուրքերի դէմ՝ Կապանի կողմերում: Արցախի սղնախների 2000 մարտիկներից կազմուած զօրքը՝ Աւան հարիւրապետի եւ Իւան Կարապետի գլխաւորութեամբ, օգնութեան է հասնում Դաւիթ Բեկին՝ կռուի թեժացած պահին:

Ապստամբ Արցախն ու Սիւնիքը Ռուսական կայսրութիւնից ռազմական օգնութիւն էին սպասում, որն այդպէս էլ չստացուեց: Հայերը սեփական ուժերով կռուեցին թշնամու դէմ:

Պետրոս Ի-ի մահից (1725 թ. յունուարի 28) յետոյ Եսայի կաթողիկոսը եւ նրա զինակիցները ահազանգում էին, որ եթէ, ցարի հրամանի համաձայն, վերաբնակեցման նպատակով հազարաւոր մարդկանց տեղահանեն եւ դուրս բերեն իրենց ունեցուածքով, ապա թշնամին նրանց շուտ կը յաղթի ու կը գերեվարի տեղահանման ընթացքում:

1725 թ. փետրուարի վերջին Արցախ ներխուժած թուրքական հրոսակներին հայերը ջախջախեցին Վարանդա գաւառում (մարտի 1-ին): Թուրք երկու փաշաները սպանուեցին, իսկ երրորդը՝ գերի ընկաւ: Գերի թուրք փաշայի հարցաքննութիւնից երեւում է, որ արդէն իսկ այն ժամանակ Ռուսաստանի եւ Իրանի հետ հակամարտելիս, օսմանեան կառավարողները մոլագարօրէն համակուած պանթուրքիզմի մարդատեաց գաղափարախոսութեամբ, Հայաստանն ու հայ ազգը համարելով խոչընդոտ թուրքական զաւթումների՝ դէպի Կասպից ծովի աւազանը եւ աւելի արեւելք ճանապարհին, ծրագրել էին հայերի ոչնչացումը (Эзов, 422): Արցախում թուրքական հրոսակների ջախջախումը հաղթանակած հայերի պատասխանն էր պանթուրքիզմի ջատագովներին:

Մխիթար սպարապետի գլխաւորած ուժերը թուրքերին պարտութեան մատնեցին Կապանում՝ Հալիձորի պատերի տակ, եւ Մեղրիում: Պարսից Շահ Թահմազ II-ը միեւնոյն ժամանակ ակտիւացրեց հակաթուրքական պայքարը եւ բարիդրացիական յարաբերութիւն հաստատեց Սիւնիքի եւ Արցախի հայկական ուժերի հետ: Սակայն խանական զօրամիաւորումներն Ագուլիսի ճակատամարտում փախուստի դիմեցին: Դաւիթ Բեկը, յետ մղելով թուրքերի գրոհները, հետապնդեց մարտադաշտը լքած խաներին: Թուրքերը թարմ ուժերով յարձակուեցին հայկական ապստամբ երկրամասի վրայ: Աւան եւ Թարխան հարիւրապետերը փորձեցին ռուսական հրամանատարութեանը համոզել մերձկասպեան զօրքերը շարժելու Արցախ, սակայն՝ նորից ապարդիւն:

1728 թուականը ծանր կորուստների տարի էր: Ռաֆֆին նշել է, որ այդ տարի դաւաճանի թոյնը Դաւիթ Բեկին գերեզման տարաւ: Նոյն թուականին մահացաւ նաեւ Գանձասարի Եսայի կաթողիկոսը: Նրա վախճանից յետոյ որպէս Գանձասարի կաթողիկոս մնաց Ներսէսը:

Ինչպէս նշել է Ռաֆֆին, շնորհիւ հայ ազատատենչ ոգու, Արցախում հզօրացել էր «Խամսայի մելիքութիւններ» կոչուող հայկական հինգ մելիքութիւններից կազմուած անկախ վարչաքաղաքական միաւորը, որի իրաւունքները ճանաչեց Նադիր Շահը (Ռաֆֆի, հ. 9, 418): Թուրքերի դէմ պատերազմ մղող Արցախի մելիքները ուխտ արեցին անխախտ պահել միաբանութիւնը:

Յովհաննէս Հասան-Ջալալեանը 1763-ին Գանձասարի կաթողիկոս ձեռնադրուեց:

18. ՅՈՎՍԷՓ ԷՄԻՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Յովսէփ Էմինը (1726–1809), ոգեւորուած Հայոց պատմութեամբ եւ տիրապետելով եւրոպական ռազմական արուեստին, որոշեց ձեռնարկել Հայաստանի ազատագրումը թուրք-պարսկական լծից:

Դեռեւս Հնդկաստանի հայկական գաղթօջախում եղած ժամանակ նա լսել էր Արցախի մելիքների իշխանութիւնների, նրանց քաջութեան եւ խիզախութիւնների մասին: Մեկնելով Անգլիա եւ այնտեղ ռազմական կրթութիւն ստանալով՝ Էմինը երկար դեգերումներից յետոյ 1766 թ. եկաւ Արցախի Գետաշէն՝ Գիւլիստանի մելիք Յովսէփի մօտ, որը մինչ այդ աչքի էր ընկել օտար նուաճողների դէմ մղուած պայքարում:

Մելիք Յովսէփի ուժերը, Էմինի մասնակցութեամբ, կասեցրին խանական յարձակումները Գետաշէնում, այնուհետեւ խաղաղութիւն կնքուեց մելիք Ադամի միջնորդութեամբ: Մելիք Յովսէփի հետ Էմինը Գիւլիստանում մնաց տասն ամիս: Մելիք Յովսէփը, անհանգստացած այն բանից, որ Էմինը շատ յայտնի անձնաւորութիւն էր, զգուշանալով հարեւան աւազակային խաներից, նրան առաջարկեց հեռանալ Գիւլիստանից:

Յովսէփ Էմինն ուղեւորուեց Գանձասարի վանք (1767 թ.), ուր նրան սիրալիր ընդունեց Յովհաննէս կաթողիկոսը (1763–1786)՝ չթաքցնելով, սակայն, իր անհանգստութիւնը նրա ժամանման հնարաւոր հետեւանքների կապակցութեամբ: Էմինը գնաց Շուշի, այնուհետեւ վերադարձաւ Գանձասար:

Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսն Էմինին ներկայացրեց իր խոհերը Հայաստանի ազատագրման մասին, սակայն պահը նպաստաւոր չհամարեց: Էմինը երեք օր անց հեռացաւ Գանձասարից եւ երկու տարի դեգերելուց յետոյ վերադարձաւ Հնդկաստան:

19. ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՆԸ ՍԻՄԷՈՆ Ա ԵՐԵՒԱՆՑՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Յովհաննէս Հասան-Ջալալեանը Գանձասարի կաթողիկոսական գահ բարձրացաւ ծանր ժամանակաշրջանում: Ներսէս հայրապետը թէպէտ ստորագրութիւն էր տուել, որ իրեն յաջորդ չի նշանակի, այնուամենայնիւ, Գանձակում իրեն յաջորդ էր թողել իր եղբօր թոռանը՝ Իսրայէլին:

Գանձակը զաւթած խանական իշխանութիւնը, հովանաւորելով Իսրայէլին, Գանձասարի կաթողիկոսութեանը դրել էր ծանր վիճակի մէջ, ինչը մեծ անհանգստութիւն էր առաջացրել Մայր Աթոռում: Քայլեր ձեռնարկուեցին Ս. Էջմիածնի հովանու ներքոյ Հայոց Արեւելից կողմանց եկեղեցական գործերը կարգաւորելու համար:

Գանձասարի կաթողիկոսական աթոռին բարձրանալու օրինական կարգի պահպանման գրաւականն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ճանաչուելը եւ նրա հովանու տակ մնալը: Սիմէոն Ա Երեւանցի կաթողիկոսը հաստատեց Ս. Էջմիածին ժամանած Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսի կարգավիճակը: Գանձասարի կաթողիկոսական աթոռի գոյութիւնը տուեալ ժամանակաշրջանում Սիմէոն կաթողիկոսը դիտում էր ոչ թէ որպէս պառակտում Ս. Էջմիածնից, այլ Մայր Աթոռի հովանա-

ւորութեան տակ Հայ Առաքելական Եկեղեցու արեւելեան թեւի պաշտպանութիւն, քանզի օտար ուժերը յոյժ քաղաքականացրել էին «Աղուանից» կաթողիկոսութեան պառակտման ընթացքը, որի ամբողջական պահպանումը Գանձասար կենտրոնով չափազանց բարդ խնդիր էր դարձել: Ռաֆֆին գրել է. «Այդ հակաթոռ Իսրայէլ կաթողիկոսը կործանեց այն մեծ շէնքը, որ Յովհաննէսը եւ Ղարաբաղի երեք մելիքները մեծ ջանքերով կառուցել էին…» (Ռաֆֆի, հ. 9, 480):

Սիմէոն կաթողիկոսը Գանձասարի կաթողիկոս Յովհաննէսին պատուիրեց միշտ հնազանդ մնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Այնուհետեւ հինգ կէտից բաղկացած կանոնադրութիւն հաստատուեց (1765 թ.), որով կանոնակարգւում էր Գանձասարի կաթողիկոսութեան տեղը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նուիրապետութեան մէջ: Յատկապէս նշւում էր Գանձասարի կաթողիկոսութեան ենթակայութիւնը Ամենայն Հայոց կաթողիկոսին (ԴՀՊ, Գ, 413):

Գանձասարի կաթողիկոսութեան կարեւորութիւնը վկայում է, որ Արցախը դարեր շարունակ մեծ տեղ է ունեցել հայոց թէ՛ քաղաքական կեանքում եւ թէ՛ եկեղեցական նուիրապետութեան մէջ: Իրօք, Արցախը եւ Ուտիքի մեծ մասը Արշակունիների թագաւորութեան անկումից (428 թ.) յետոյ պահպանել էին իրենց ինքնուրոյնութիւնը՝ ընդգրկուած լինելով հայկական պետականութեան զարգացումների մէջ (Վաչագանի թագաւորութեան, Բագրատունեաց թագաւորութեան, Զաքարեանների իշխանապետութեան, Խաչէնի իշխանութեան, Խամսայի մելիքութիւնների):

Մայր Աթոռը, կանոնադրութեամբ որոշելով Գանձասարի կաթողիկոսութեան կարգավիճակը, ելնում էր հէնց պատմական այն մեծ դերից, որ Հայ Առաքելական Եկեղեցու արեւելեան հիմնասիւնը՝ Գանձասարի կաթողիկոսութիւնը ստանձնել էր հայոց հոգեւոր եւ քաղաքական հրատապ հարցերի լուծման գործում:

Սիմէոն կաթողիկոսը տեսնում էր այն պառակտիչ դերը, որ Իսրայէլն իրականացնում էր թէ՛ Հայոց Արեւելից կողմերում եւ թէ՛ Ռուսաստանի սահմաններում գտնուող համայնքներում: Սիմէոն Ա-ը, խստութիւններ կիրառելով, նաեւ մեծ զգուշաւորութիւն էր ցուցաբերում Յովհաննէս կաթողիկոսի եւ հակաթոռ Իսրայէլի միջեւ յարաբերութիւնները կարգաւորելիս: Օտար ուժերի միջամտութեամբ «Աղուանից» Աթոռի երկփեղկման խորացման պայմաններում անհրաժեշտ էր իրավիճակը պահել հսկողութեան տակ եւ, հնարաւորութեան դէպքում, առաջ մղել ու բաց կերպով հովանաւորել Գանձասարի կաթողիկոսութեանը: Յովհաննէս կաթողիկոսը Հասան-Ջալալեանների փառապանծ տոհմից էր եւ իր պապերի հոգեւոր-ազգային արժէքների կրողը: Յովհաննէս կաթողիկոսը մեծաթիւ կողմնակիցներ ունէր նաեւ Գանձակում:

Գանձասարի կաթողիկոսութիւնը Հայ Առաքելական Եկեղեցու արեւելեան պատուարն էր դարձել, եւ Սիմէոն կաթողիկոսն ամէն կերպ ջանում էր Յովհաննէս կաթողիկոսին պաշտպանել Գանձակը զաւթած խանի ու նրա հովանու տակ գործող Իսրայէլի նենգութիւններից:

Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմէոն Երեւանցու վարած եկեղեցական քաղաքականութիւնն ամրացնում էր Հայ Առաքելական Եկեղեցու ազգային հիմքերը եւ ուղղուած էր Հայոց Արեւելից կողմանց եկեղեցական թեմերի ազգային էութեան

պահպանմանը եւ, ընդհանրապէս, դրանց գոյութեան երաշխիքների ամրապնդմանը:

20. ԱՐՑԱԽԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը նոր յոյսեր ներշնչեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի նուիրեալներին:

Արցախի մելիքներից մէկի գլխաւորութեամբ Հայոց թագաւորութեան վերականգնումն էր նախատեսում Աստրախանում հաստատուած, մետաքսի ձեռնարկատէր ու նաւաշինարար Մովսէս Սարաֆեանի՝ 1769 թ. կազմած եւ Ռուսաստանի արտգործնախարարութեան կոլեգիային ներկայացրած ծրագիրը:

Մշոյ Ս. Կարապետի վանահայր Յովնանը քայլեր էր ձեռնարկում Արեւմտեան Հայաստանում օսմանեան լծի դէմ հայերի ապստամբութեան կազմակերպման ուղղութեամբ (ՀԺՊ, IV, 203):

Հնդկաստանի Մադրաս քաղաքում Շահամիր Շահամիրեանի (1723–1797) գլխաւորած հնդկահայ հայրենասէր գործիչների ծրագրի համաձայն՝ հայ ժողովուրդը օտար լծից կարող էր ազատագրուել ապստամբութեան միջոցով, որը գլխաւորելու էին Արցախի մելիքներն ու Ս. Էջմիածնի հոգեւորականութիւնը: Խումբը նամակագրութիւն ունէր Արցախի մելիքների, Սիմէոն Ա կաթողիկոսի, վրաց Հերակլ II թագաւորի եւ այլ պետական, հոգեւոր ու քաղաքական գործիչների հետ:

Յակոբ Շահամիրեանի «Որոգայթ փառաց» գիրքը (1773 թ.) շարունակեց եւ հրատարակեց (1788/89 թթ.) նրա հայրը՝ Շահամիր Շահամիրեանը: Այն մտածուած էր որպէս ապագայ անկախ Հայկական Հանրապետութեան Սահմանադրութիւն (Համբ.):

Ռուս-թուրքական 1774 թ. պայմանագրով զգալիօրէն ամրապնդուեցին Ռուսաստանի դիրքերը Սեւ ծովի տարածաշրջանում, ինչը խթանեց Ռուսական կայսրութեան արեւելեան քաղաքականութիւնը:

1780 թ. յունուարին Պետերբուրգում իշխան Գէորգի Պոտեմկինի, ականաւոր զօրավար եւ ռազմագիտութեան տեսաբան, գեներալ-պորուչիկ (յետագայում գեներալիսիմուս) Ալեքսանդր Սուվորովի, Յովսէփ արք. Արղութեանի եւ հայ նշանաւոր գործիչ, իշխան Յովհաննէս Լազարեանի (Եղիազարեան) մասնակցութեամբ տեղի ունեցաւ խորհրդակցութիւն, ուր հայ հոգեւոր եւ աշխարհիկ գործիչները Պոտեմկինին հայերէն մի հին քարտէզի վրայ ցոյց տուեցին Հայաստանի սահմանները եւ արծարծեցին Մեծ Հայքի պետութեան վերականգնման հարցը (Յովս., 510–512, Օրմ., Բ, 3702):

Յովհաննէս Լազարեանի՝ յունուարի 10-ին Ալեքսանդր Սուվորովին յանձնած տեղեկագրի համաձայն՝ Հայաստանի ազատագրումը կարելի էր իրականացնել հայերից մէկի ղեկավարութեամբ, որը հաստատուելու էր Դերբենդում: Նա ռուսական ուժերի օգնութեամբ ազատագրելու էր Շամախին եւ Գանձակը, ապա Արցախից նրան կը միանային շատ հայեր: Այդ միացեալ ուժերով նա կ'ազատագրէր Երեւանը եւ միւս քաղաքները: Արեւելեան, այնուհետեւ՝ Արեւմտեան Հայաստանը, ազատագրուելով պարսկական եւ թուրքական լծից, մտնելու էին ռուսական գերիշխանութեան տակ: Հայերն իրենց միջոցներով պահելու էին 15–20 հազար, իսկ պատերազմի ժամանակ՝ 60 հազար զօրք, որն անհրաժեշտութեան դէպքում կարելի էր ուղղել թուրքերի կամ այլ թշնամիների դէմ (Ио., 23): Այդ տեղեկագիրը Եկատերինա

II կայսրուհուն ներկայացնելուց յետոյ Սուվորովը մեկնեց Աստրախան, որտեղ ձեռնամուխ եղաւ արշաւանքի նախապատրաստմանը: Այդ նպատակով նա կապեր հաստատեց Արցախի մելիքների հետ, սակայն ռուսական արշաւանքը յետաձգուեց:

21. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսը 1783 թ. յունուարի 22-ին Եկատերինա II-ին ուղղած խնդրագրում «Ղարաբաղի եւ Խամսայի հայերի» անունից թախանձագին խնդրում էր Ռուսաստանի հովանաւորութեան տակ վերցնել անհաւատների ձեռքից տառապող բազում քրիստոնեաներին եւ յատկապէս հայութեանը: Եկատերինա II կայսրուհին խոստացաւ «յարմար պարագայում» Ղարաբաղի (Արցախ) մարզը, «որը կազմուած է հայերից, յանձնել ազգային կառավարման եւ այդ միջոցով Ասիայում վերականգնել քրիստոնէական պետութիւնը» (APO, IV, 209, 241):

Տ. Յովսէփ արք. Արղութեանը Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին եւ Արցախի մելիքներին 1783 թ. օգոստոսին գրած նամակում հաստատապէս հաւաստիացնում էր ռուսական զօրքի արշաւանքի կայանալու մասին, նոյնիսկ քննարկում էր նախատեսուող պարէնի մատակարարման գները:

Ռուսական արշաւանքի մասին լուրը ազատագրման յոյսեր էր ներշնչել նաեւ Երեւանի բնակչութեանը: Այդ շարժման նշանաւոր դէմքերից մէկը՝ մեծահարուստ Ստեփան Տէր-Սահակեանը կամ, ինչպէս անուանում էին նրան, «Արարատեան դեսպանը», 1783 թ. աշնանը մեկնում է Արցախ, տեղեկանում մելիքների ռազմական ուժերի մասին եւ դեկտեմբերին ռուսական հրամանատարութեանը յայտնում, որ նրանց տրամադրութեան տակ կայ 5000 մարդուց բաղկացած զօրք, ինչպէս նաեւ պարէնի բաւարար պաշար (ՀԺՊ, հ. IV, 224):

1784 թ. գարնանը ռուսական զօրքերը, չնայած որ պատրաստ էին արշաւանքին, Եկատերինա II-ի հրամանով կրկին յետ կանչուեցին:

Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսի՝ 1784 թ. մայիսի 14-ին գեներալ Պ. Ս. Պոտեմկինին գրած նամակից երեւում է, որ սպասուող օգնութեան ուշացումը յուսահատութեան տեղիք էր տուել հայ բնակչութեան մէջ (APO, IV, 305–306):

Մադրասի հայ հայրենասէրների կապը Ռուսաստանի հայ համայնքի եւ Արցախի մելիքների ու Գանձասարի կաթողիկոսի հետ չընդհատուեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցու (1780–1799) օրոք: Ժամանակի բերումով՝ յարաբերութիւնները շեշտակիօրէն զգուշութեան երանգ էին ստացել:

Իբրահիմ խանը, խաղաղութեան դաշնագիր կնքելու պատրուակով, որոշ հայ մելիքների «հրաւիրում» էր իր կողմից բռնազաւթուած Շուշի բերդը եւ դաւադրաբար ձերբակալում նրանց:

Գանձասարի վանքի վրայ կախուած էր թշնամու կողմից աւարի ու կողոպուտի ենթարկուելու սպառնալիքը, որը կասեցուեց հայ քաջերի ջանքերով:

Որոշ ժամանակ անց Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին դաժանօրէն սպանեցին նենգ Իբրահիմ խանի հրամանով, իսկ Գանձասարի վանքը մատնեցին աւարի ու կողոպուտի:

Գանձասարի վանքի գաւթի հարաւ-արեւելեան կողմում, մեծ եւ տափակ, երեսին գաւազանի պատկերով տապանաքարի վրայ արձանագրուած է. «Այս է տապան Յոհաննէս Աղուանից կ[ա]թ[ո]ղ[ի]կ[ո]սին, որ է յազգէն Ջալալ Դօլին: Թվ[ին] :ՌՄԼԵ: (1786)» (ԴՀՊ, Ա, 19):

Հայ մելիքները գաղտնի բանբերների միջոցով տեղեկանում են, որ Բուռնաշով զօրապետը 4 հազարանոց ռուսական զօրքով գալիս է Արցախ:

Իբրահիմ խանը եւ նրա յանցակիցները, նոյնպէս տեղեկանալով այդ մասին, իրենց գործած չարիքների հետքերը վերացնելու նպատակով, որոշում են ամէն գնով ձեռք բերել Գանձասարի վանքի կաթողիկոսական դիւանի եւ հնադարանի բոլոր թղթերն ու ձեռագրերը (Ռաֆֆի, հ. 9, 483): Ուստի խանը, մի կողմից, զօրք է հաւաքում դիմակայելու Գանձակի (Ուտիքում) եւ Արցախի ուղղութեամբ շարժուող Բուռնաշովի գլխաւորած ռուսական զօրքին, իսկ միւս կողմից՝ զինուորներ է ուղարկում Գանձասար՝ փորձելով յափշտակել յիշեալ փաստաթղթերը:

Շուտով յայտնի է դառնում, որ Սարգիս եպիսկոպոսը, իր վեց եղբայրների հետ միասին, բանտարկուած է Շուշիում: Պատճառը՝ Իբրահիմը պահանջում էր իրեն յանձնել հայերի եւ ռուսների միջեւ եղած պաշտօնական գրութիւնները: Արցախի հայորդի քաջերը նոյն օրը մտնում են Շուշի, յարձակում գործում ու հրդեհում խանի ապարանքը՝ազատելով ձերբակալուածներին:

Իսկ երբ Գանձասարի հնադարան-մատենադարանի վրայ վտանգ է կախւում, մելիքները բոլոր ձեռագրերը վաղօրօք բաժանում են երեք մասի ու թաքցնում տարբեր տեղերում: Գանձասարի ձեռագրերի եւ թղթերի մի մասը հայրենասէր մելիքները թաքցնում են Գանձասարի եւ Խութավանքի մէջտեղում գտնուող մի քարայրում, երկրորդ մասը՝ Ջրաբերդի մի ստորերկրեայ եւ անյայտ քարայրում, իսկ երրորդը՝ Գիւլիստան գաւառի Հոռեկայ վանքի մօտակայքում (Բէկն., 89, ԴՄ, 14.): Հայոց վանքերում պահուող ձեռագրերի եւ դրանց անհետացման նոյնպէս մի օրինակ է Սաղմոսա-

վանքի (Արագածոտն գաւառում) գրատան եւ այն ժամանակաշրջանի համար բաւական հարուստ մատենադարանի ճակատագիրը (ՀՀԳ, 25):

Արցախի հայոց պաշտպանական ուժերը Տրտու գետի կիրճի ճակատամարտում ջախջախում են Գանձասարի վրայ շարժուող Իբրահիմ խանի աւազակային զօրքը:

22. ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆԸ

Ականատես լինելով Իբրահիմ խանի վայրագութիւններին՝ հայրենասէր մելիքները խիզախ քայլերի դիմեցին Յովհաննէս կաթողիկոսի եղբօրը՝ Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալեանին եւ վանքի միաբաններին օգնելու համար: Գանձասարի վանքի վրայ Իբրահիմի յարձակման ժամանակ հայերը կարողացել էին թաքցնել վանքի գանձերի մի մասը միայն, որովհետեւ Սարգիս եպիսկոպոսի հեռանալը շատ արագ էր կատարուել:

Սարգիս եպիսկոպոսի եղբայրները՝ Դանիէլ Բեկը եւ Ջալալ Բեկը բազում քաջագործութիւններից յետոյ գաղտնի եկան Գանձասարի վանք, որպէսզի վանքի թաքցրած կայքերը դուրս հանէին եւ տեղափոխէին Գանձակ, բայց նրանք հակաթոռ Իսրայէլի մատնութեամբ յայտնուեցին Իբրահիմ խանի դահիճների ձեռքում, որոնք նրա հրամանով դաժանօրէն սպանեցին նրանց. «Ջալալ Բեկի գլուխը կտրեցին, իսկ Դանիէլ Բեկին կենդանի տարան խանի մօտ… Մի քանի օրից յետոյ նրան բանտից դուրս բերելով՝ հրամայեց մաս-մաս կտրատել… Իբրահիմ խանը դաւաճան (Իսրայէլ) կաթողիկոսին մատուցած ծառայութիւնների համար… տուեց Ամարասայ վանքը եւ Ղարաբաղի վրայ հովիւ կարգեց: Այդ ժամանակ Երից-Մանկանց վանքում փոքր Սիմոն անունով մէկը կաթողիկոս էր: Եւ այսպէս Ղարաբաղում երկու կաթողիկոսներ կային…» (Ռաֆֆի, հ. 9, 491–494): Ահաւոր ոճրագործութիւններից յետոյ Իբրահիմը կողոպուտի ենթարկեց Գանձասարը:

Գանձակում 1794 թ. Հայոց Արեւելից կողմանց եպիսկոպոսները Սարգիս եպիսկոպոսին Գանձասարի կաթողիկոս ընտրեցին: Ժողովուրդը նրան անուանել էր «Կենդանի նահատակ»՝ դեռեւս իր եպիսկոպոսութեան ժամանակ Իբրահիմ խանից կրած տառապանքների համար: Սարգիս կաթողիկոսին ժողովուրդը սիրում եւ յարգում էր:

XVIII դ. վերջում – XIX դ. սկզբին տեղի ունեցած պարսից արշաւանքների հետեւանքով երկիրն աւերւում էր, եւ էլ աւելի էր ծանրանում ժողովրդի վիճակը: Արցախից տեղի ունեցած արտագաղթի տխուր իրողութեան մասին են վկայում Ռուսական կայսրութեան փաստաթղթերը: Անկայուն եւ վտանգաւոր վիճակ էր ստեղծուել կեանքի թէ՛ քաղաքական եւ թէ՛ եկեղեցական ոլորտներում: Մինչ Գանձասարի Սարգիս կաթողիկոսը որպէս վանահայր գտնուում էր Հաղբատում, «Աղուանից» կաթողիկոսութիւնում միանձնեայ «տնօրինում էր» հակաթոռ Իսրայէլը:

1804-ին սկսուեց Ռուս-պարսկական պատերազմը: Ռազմական գործողութիւններն ընթացաւ Ռուսական կայսրութեան առաւելութեամբ: 1806 թուականին հայերի մի մասը վերադարձաւ հայրենի Արցախ աշխարհի գաւառները: Պատերազմն աւարտուեց 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գիւլիստանում կնքուած պայմանագրով, որով Պարսկաստանը ճանաչեց հայկական հիւսիսարեւելեան որոշ տարածքների (Լոռի, Փամբակ, Զանգեզուր, Արցախ, Ուտիքը Գանձակով), ի թիւս այլ երկրամասերի եւ քաղաքների, անցումը Ռուսական կայսրութեանը:

Գանձասար վերադարձած Սարգիս կաթողիկոսը եւ նրա եղբօր՝ Դանիէլ Բեկի որդի Բաղդասար վարդապետը բարեկարգեցին Արցախի վանքերը ուսումնարաններով ու նորոգումներով եւ համալրեցին միաբաններով ու վանահայրերով:

Սակայն Մեհդի-ղուլի խանի գաղտնի թելադրանքով Արցախում շարունակւում էին մարդասպանութիւնները, գողութիւններն ու աւարառութիւնները: Իսկ կայսերական իշխանութիւնները յանցագործ խանին անպատիժ էին թողնում: Ինչպէս նշուել էր 1814 թ. Գանձասարի գաղտնի ժողովի որոշումներում, այդ ամէնը խիստ բացասաբար անդրադարձաւ Արցախի կեանքի բոլոր ոլորտների վրայ, ինչն արտա-

քին միջամտութեան պայմաններում խարխլում էր Գանձասարի կաթողիկոսութեան հիմքերը (Բէկն., 312):

1814 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Ձորագեղցու (1809–1831) կողմից Հայ Առաքելական Եկեղեցու Տփղիսի (Թիֆլիս) հոգեւոր թեմի առաջնորդ նշանակուած Ներսէս Աշտարակեցու եւ Ռուսական կայսրութեան պաշտօնական ներկայացուցիչների միջեւ բանակցութիւնների արդիւնքում վերացուեց Գանձասարի կաթողիկոսութիւնը, իսկ Սարգիս կաթողիկոսը 1815 թ. պաշտօնապէս յայտարարուեց Գանձասարի կամ Արցախի արքեպիսկոպոս կամ մետրոպոլիտ: Այսպէս վերացուեց Գանձասարի կաթողիկոսութիւնը:

Սարգիս Հասան-Ջալալեանն իրեն օգնական եւ յաջորդ պատրաստելու համար իր եղբօրորդի Բաղդասարին ուղարկեց Էջմիածին, ուր Եփրեմ կաթողիկոսը նրան եպիսկոպոս ձեռնադրեց: Բաղդասար եպիսկոպոսը ստորագրեց երդմնագիր՝ Հայ Առաքելական Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հաւատարմօրէն ծառայելու մասին:

Ռուս-պարսկական Թուրքմենչայի (1828 թ. փետրվարի 10) պայմանագրով Ռուսական կայսրութեան սահմանագիծը հարաւում հասցուեց մինչեւ Արաքս գետը, եւ Պարսկաստանը պաշտօնապէս ճանաչեց Երեւանի ու Նախիջեւանի «խանութիւնների» եւ Օրդուբադի (Որդուատ) գաւառի միացումը Ռուսական կայսրութեանը:

1828 թ. դեկտեմբերի 19-ին վախճանուեց Գանձասարի նախկին կաթողիկոս Սարգիս արք. Հասան-Ջալալեանը:

23. ԲԱՂԴԱՍԱՐ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Բաղդասար մետրոպոլիտի գործունէութիւնը բարձր գնահատելով՝ Լէոն գրել է, որ նրա «շինարար ջանքերը երբեք չեն ընդհատուում եւ

նրանք մեծագոյն մասամբ նուիրուած են Գանձասարի վանքին, որ մի տեսակ նուիրական պաշտամունք էր նրա համար: Մետրոպոլիտը միաժամանակ միջոցներ էր գտնում եւ չգտած ժամանակ էլ իր սեփական միջոցներն էր ծախսում այն ամէն բարեզարդութիւնների համար, որոնք հարկաւոր էին Գանձասարը բարձրացնելու եւ նախկին հռչակին մօտեցնելու համար: Մանաւանդ շատ էր աշխատում, որ Հասան-Ջալալեանների հռչակաւոր վանքը դառնայ մտաւոր գործունէութեան եւ դաստիարակութեան կենտրոն» (Լէո, 1914 թ., 99–114):

Խութայ վանքից վար՝ Թարթառ գետի ձախ ափին գտնուող մի քարայրում, XIX դարի 30-ական թուականներին մի որսորդ գտաւ վերոյիշեալ թաքցուած ձեռագրերի մի մասը եւ ցոյց տուեց Բաղդասար մետրոպոլիտին ու պարգեւ ստացաւ: Գտնուած որոշ ձեռագրերի թուարկումը վկայում է, թէ որքան հարուստ են եղել Գանձասարի կաթողիկոսական դիւանը եւ հնադարանը[7]:

Մետրոպոլիտը մեծ հոգատարութիւն էր ցուցաբերում թեմի վիճակը բարելաւելու համար: Նրա ջանքերով Գանձասարի, Խաթրայ, Ս. Յակոբայ եւ Ամարասի վանքերին վերադարձուեցին նրանցից բռնազաւթուած հողային տիրոյթները: Ռաֆֆին բարձր է գնահատել Բաղդասարի այս ձեռնարկումը: Ներսէս Ե Աշտարակեցի կաթողիկոսի (1843–1857) հրամանով, Բաղդասար մետրոպոլիտի ղեկավարութեամբ ստեղծուեց մի յանձնախումբ, որը հաշուառման ենթարկեց Արցախի վանքապատկան կալուածները եւ կազմեց դրանց ցուցակը, որում առաջինը բերուած են Գանձասարի վանքապատկան կալուածները: Բաղդասար մետրոպոլիտը իր ուշադրութեան կենտրոնում էր պահում նաեւ Ամարասի, Խութայ, «այնինքն է վանքն Դաթէի (Դադի)» եւ Ս. Յակոբայ վանքերի կալուածները (Լէո, 1914 թ., 132–135, 175):

Բաղդասար մետրոպոլիտի օրօք կրթական գործն աշխուժացում ապրեց Շուշիում եւ Գանձասարում, որի ուսումնարանն առանձնապէս աչքի ընկաւ հայկաբան քահանաներ պատրաստած Յովսէփ վարդապետի ջանքերով:

Հայ Եկեղեցու արեւելեան կողմերի պահպանման հոգածութիւնից էր բխում Բաղդասար մետրոպոլիտի ձգտումը՝ բարձր տեսնել Գանձասա-

ը, միեւնոյն ժամանակ սերտ կապի մէջ լինել Ս. Էջմիածնի հետ:

Բաղդասար մետրոպոլիտը վախճանուեց 1854 թ., ինչը մեծ վիշտ պատճառեց Արցախի ամբողջ բնակչութեանը:

Գանձասարի վանքի գաւթի հարաւ-արեւելեան կողմում գտնուող մեծ՝ երեսին գաւազանի պատկերով տապանաքարի վրայ արձանագրուած է. «Այս է տապան մետրապոլտին, Բաղտասարայ Մեծի Արհին... յազգէն Ջալալ Մեծ իշխանին տեառն Արցախական աշխարհին: Թուին :ՌՅԳ: Գ յուլիսի»:

24. ՍԱՐԳԻՍ ԱՐՔ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ

XIX դարի երկրորդ կէսին Արցախի թեմի առաջնորդի խնդիրը բարդ ընթացք ստացաւ, ինչը զգալիօրէն պայմանաւորուած էր Հասան-Ջալալեանների տոհմից ժառանգական կարգի խախտմամբ: Վիճակը յատկապէս անկայուն էր Բաղդասար մետրոպոլիտի մահուանը յաջորդած տարիներին: Ըստ Լէոյի՝ «մեզ ծանօթ երկու եկեղեցական դպրոցները – Ամարասի եւ Գանձասարի, փակուած էին, իսկ նորերը բաց անելու հնարաւորութիւն չկար, յարմար շինութիւններ չլինելու պատճառով» (Լէո, 1914 թ., 277):

Գէորգ եպս. Վեհապետեանի եւ նրա յաջորդների կարճատեւ պաշտօնավարութիւնը անտէրունչ վիճակի մէջ էր գցել թեմական կեանքը, եւ Շուշիի անհանգստացած բնակիչները դիմել էին Մատթէոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսին (1858–1865)՝ խնդրելով թեմական առաջնորդ նշանակել Սարգիս արք. Հասան-Ջալալեանին:

Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսին (1866–1882) ուղղուած վաւերագրում բարձր են գնահատում Արցախի թեմի առաջնորդ Սարգիս արք. Հասան-Ջալալեանի արժանիքները՝ հաշտարարական եւ միաւորչական ջանքերի հետ մէկտեղ մշակութային կեանքի աշխուժացման գործում, մասնաւորապէս՝ Շուշիում դպրոցաշինութեան եւ Գանձասարում վանքի վերանորոգման աշխատանքների առումով: Արցախի ազգային հոգեւոր դպրոցի գործերն առաջընթաց ապրեցին (ՎՀԵՊ, Թ, 321):

Սարգիս արքեպիսկոպոսի հեղինակութիւնն այնքան բարձր էր Մայր Աթոռում, որ Գէորգ Դ կաթողիկոսը, օսմանեան թշնամական եւ պառակտիչ քաղաքականութեան հետեւանքով արեւմտահայութեան առջեւ ծառացած ազգային-եկեղեցական խնդիրներով անհանգստացած, նրան վստահեց Կ. Պոլիս գնալու դժուարին առաքելութիւնը (1868 թ. հոկտեմբեր): Սարգիս արքեպիսկոպոսը Կ. Պոլսից Հայրենիք վերադարձաւ 1869 թ. կէսին: Ինչպէս հետեւում է Գէորգ Դ-ին ուղղուած յայտարարութիւնից, նա յաջողութեամբ էր կատարել իրեն տրուած յանձնարարութիւնը: Այդ մասին էր վկայում նաեւ օսմանեան իշխանութիւնների թշնամական վերաբերմունքը հայ հոգեւորականի այցի նկատմամբ:

Սրտառուչ է Գէորգ Դ կաթողիկոսի շնորհակալական խօսքը Սարգիս արքեպիսկոպոսին՝ նրա ուղարկած նուէրի՝ գրասեղանի ծաղկանկար ծածկոցի համար: Վեհափառը խնդրում էր Ս. Էջմիածնի յատակների եւ նորաշէն պահարանների համար ուղարկել նաեւ կարպետներ, գորգեր ու ծածկոցներ: Սա վկայում է Արցախի գորգագործութեան եւ ձեռագործ արուեստի բարձր մակարդակի մասին:

Տ. Սարգիս արքեպիսկոպոսը մատաղ սերնդին կրթութիւն տալու համար իր թոշակի մի մասը յատկացնում էր աշակերտների ուսուցմանը:

1876 թ. յուլիսին Գէորգ Դ կաթողիկոսին ներկայացրած խնդրագրով նա, իր ծերութեան ու երկարատեւ հիւանդութեան պատճառով, վեհափառից խնդրում էր իրեն ազատել պաշտօնից եւ իր փոխարէն նշանակել առողջական լաւ վիճակ ունեցող առաջնորդի:

Շուշի քաղաքի հասարակութիւնն այնքան բարձր էր գնահատում Սարգիս արքեպիսկոպոսի արժանիքները, որ առաջարկում էր նրա մահից յետոյ Գանձասարի վանքում «արժանաւոր մահարձանաւ պատուել զդամբարան նորա» (ՎՀԵՊ, Թ, 333):

25. ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Տ. Սարգիս արքեպիսկոպոսը թէպէտ որոշ ժամանակ մնաց Արցախի թեմակալի պաշտօնում, սակայն այդ ընթացքում, սկսած 1875 թ. երկրորդ կէսից, Արցախի թեմում փոխանորդի պաշտօնն ութ ամիս վարեց Գէորգ վարդապետ Սուրէնեանցը: Երբ Սուրէնեանցը հեռացաւ Շուշի քաղաքից, Ս. Էջմիածնի Սինոդը նրա փոխարէն նշանակեց Արիստակէս վարդապետ Սեդրակեանին, որի օրօք Արցախի թեմական եւ միւս դպրոցներն առաջընթաց ապրեցին: Գէորգ Դ-ը 1877 թ. փետրուարի 5-ի կոնդակով Արիստակէս վարդապետին լանջախաչ շնորհեց: Ինչպէս նշել է Լէոն, «Ժամանակի ոգին ըմբռնող այդ հոգեւորականը, չնայած իր սահմանափակ իշխանութեան եւ անհաստատ պաշտօնական դրութեան, խիզախ կրթական ձեռնարկութիւնների հետամուտ եղաւ եւ ունեցաւ կատարեալ յաջողութիւն: Նա արդէն հիմք էր դրել ժողովրդական լայն կրթութեան, հաստատելով թեմական տեսչութիւն... Նրա փոխանորդութեան ժամանակը ամենայն իրաւամբ Շուշու հասարակական կեանքի փայլուն շրջաններից մէկն է կազմում... Դա 1877–1878 թուականների ռուս-թուրքական պատերազմներին հետեւած զարմանալի ժամանակն էր: Հայոց հարցը կենտրոնն է այն լայն շարժման, որ ծաւալուած է ամբողջ հայութեան մէջ...» (Լէո, 1914 թ., 398–404):

Գրող Ղազարոս Աղայեանը, դպրոցական գործիչ Ալեքսանդր Յովհաննիսեանը, թեմական տեսուչ Յովհաննէս Տէր-Գրիգորեանը, ամէնքը աջակցութիւն էին գտնում Արիստակէս վարդապետի մօտ: 1880 թ. ապրիլի վերջին նա գնաց Էջմիածին եւ այլեւս չվերադարձաւ, ինչը մեծ հարուած էր յատկապէս Շուշի քաղաքի դպրոցների համար:

1881 թ. փետրուարին թեմի առաջնորդ նշանակուեց Կարապետ վարդապետ Այվազեանը:

Վանական կալուածների շուրջ պարբերաբար վէճեր էին լինում,

բայց դրանք առաւել սուր բնոյթ ստացան 1877–1885 թթ., երբ սահմանաչափութիւններ էին կատարւում Ս. Յակոբայ վանքի, Գանձասարի, մասամբ եւ Խութայ (Խօթայ) վանքի կալուածներում: Այս գործը հետաքննելու համար Գանձասար էր ժամանել Արցախի Հայոց թեմական դպրոցի հոգաբարձութեան փաստաբանը: Վերը նշուած ժամանակամիջոցում, ի թիւս այլ կալուածների, յատկապէս «Գանձասարին պատկանածներից, դատարանով հաստատուեցին վանքերի վրայ իբրեւ անվէճ սեփականութիւն»:

Մակար եպս. Բարխուտարեանցը, հետազօտելով Գանձասարի ճարտարապետութիւնը եւ վիմագիր արձանագրութիւնները, ցաւով նշել է, որ բարոյապէս եւ նիւթապէս քայքայւում էր աննման վանքը, ամիսներով ժամ չէր ասւում վանքում, քանզի ոչ կարդացող կար, ոչ դպրոց, ոչ միաբան: Վանական կեանքի ծանր վիճակի հետ Արցախի թեմում շարունակում էր դժուարութիւններ ապրել նաեւ ուսումնական գործը (Բարխ., 254), որը չբարելաւուեց նաեւ XIX դարի վերջին տասնամեակներում:

26. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԵՒ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին (1892–1907 թթ.)՝ Խրիմեան Հայրիկը, 1894 թ. հոկտեմբերին Անտոն վարդապետ Վարդազարեանցին կարգեց Գանձասարի վանքի վանահայր (ՎՀԵՊ, Թ, 383):

Խրիմեան Հայրիկը թուրքական ջարդերից արեւմտահայութեանը վրայ հասած ողբերգութեան տարիներին, հայ ազգի համար ստեղծուած այդ ծանր պայմաններում (ՎՀԵՊ, 98, Կոստ., 378–395) բազում ջանքեր էր գործադրում Արեւմտեան Հայաստանից բռնագաղթուած հայրենակիցներին օգնելու եւ նրանց հայրենի օջախները վերադարձնելու, վանքերին եւ որբանոցներին օգնութիւն ցուցաբերելու, Սասուն-Մուշի տուժած հայութեանը դրամական միջոցներ ուղարկելու համար:

Այդ ամէնի հետ մէկտեղ, Խրիմեան Հայրիկը մեծ ուշադրութիւն էր դարձնում նաեւ Գանձասարի վանքին: Նրա նշանակած վանահայրը բազմաթիւ դժուարութիւնների էր հանդիպել իր գործունէութեան ընթացքում եւ 1896 թ. սեպտեմբերին կաթողիկոսից խնդրում էր իրեն ազատ արձակել վանահայրական պաշտօնից: Սակայն Խրիմեան Հայրիկը Անտոն վարդապետին յաջորդ տարուայ սկզբներին յատուկ կոնդակով վերականգնում է նախկին պաշտօնում (ՎՀԵՊ, Թ, 384):

Արցախի թեմի եկեղեցիների եւ յատկապէս Գանձասարի վանքի նկատմամբ Խրիմեան Հայրիկի ցուցաբերած հոգածութիւնը բարձր է գնահատել նրա ժամանակակից Մաղաքիա արք. Օրմանեանը՝ գրելով, որ դէպի Սիւնիք եւ Արցախ կատարած իր հովուապետական այցելութեան ժամանակ Մկրտիչ Ա Խրիմեանը Տաթեւն ու Գանձասարը եւ բազմաթիւ այլ վանքեր տեսաւ եւ զբաղուեց նրանց նշանակութեամբ, անցեալով ու ներկայով (Օրմ., Գ, 5752):

Խրիմեան Հայրիկը, իր ուշադրութեան ներքոյ պահելով ամբողջ Ար-

ցախի թեմը, մի շարք միջոցառումներ ձեռնարկեց ի նպաստ Գանձասարի: Խրիմեան Հայրիկը մտահոգուած էր նաեւ որոշ վանքապատկան շինութիւնների՝ վարձով տրուած լինելու փաստով:

Վեհափառ Հայրապետը մտահոգուեց նաեւ գոլիցինեան վարչարարական գործողութիւններից հարուած կրած, հայոց կրթական գործի մասը կազմող Արցախի թեմական դպրոցի դառը ճակատագրով: Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ եւ ռազմական օկրուգի զօրքերի հրամանատար իշխան Գոլիցինի նախաձեռնութեամբ, դպրոցներն ու նրանց մատակարարութիւնը 1898 թ. փոխանցուեցին Ռուսական կայսրութեան պետական պաշտօնէութեանը: Խրիմեան Հայրիկը ջանք չէր խնայում վերականգնելու Արցախի թեմական դպրոցի իրաւունքները ի թիւս հայկական միւս դպրոցների:

Այդ ժամանակաշրջանում Անտոն վարդապետը բարեխղճօրէն կատարում էր իր պարտականութիւնները Գանձասարի վանքում:

Ցարական կառավարութեան՝ Հայ Եկեղեցու կալուածների եւ ունեցուածքի բռնագրաւման մասին 1903 թ. յունիսի 12-ի օրէնքի հետեւանքով եկեղեցակրթական գործերին վրայ հասան աղէտալի ժամանակներ, որոնք աւարտուեցին 1905 թ. օգոստոսի 1-ին, երբ այդ օրէնքը վերացուեց:

Հայոց Հայրապետ Մկրտիչ Ա-ի օրհնութեամբ 1906 թ. սեպտեմբերին Շուշիում հիմնուեց որբանոց-դպրոց այն հայ երեխաների համար, որոնք ծնողակորոյս էին (ՎՀԵՊ, Թ, 449–454) (1904–1906 թթ. Արցախ ներխուժած «կովկասեան թաթարների» գործած կոտորածների հետեւանքով):

1907 թ. հոկտեմբերի 28-ին վախճանուեց Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա-ը: Մկրտիչ Ա-ի աճիւնը հողին յանձնուեց Ս. Էջմիածնի Մայր տաճարի մուտքի մօտ՝ Ներսէս Ե Աշտարակեցու գերեզմանի կողքին:

27. ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՀԱՄԱԽՈՀՈՒԹԻՆԸ «ՊՈԼՈԺԵՆԻԷԻ» ԴԷՄ ՇԱՐԺՄԱՆԸ

1908 թ. սեպտեմբերի 21-ին տեղի ունեցաւ Երեւանի թեմի ծխական համայնքների ընդհանուր ժողովը, որն արձանագրեց, որ հայոց եկեղեցական բարձրագոյն վարչութեան կենտրոնը՝ իր գոյութեան ընթացքի ամէնից անշուք վիճակում էր: Ազգային Եկեղեցու այդպիսի դրութեան պատճառ համարուեցին գործող վարչական համակարգի այն հիմնական պակասութիւնները, որոնք հետեւանք էին 1836 թ. «Պոլոժենիէի» («Կարգադրութիւն»): Դրա պատճառով ժողովուրդը զրկուել էր եկեղեցական վարչական գործերին մասնակցելու իրաւունքից, որ յանձնուել էր բացառապէս հոգեւորականներից բաղկացած սինոդին, հոգեւոր կառավարութիւններին (կոնսիստորիաներին) եւ գործակալներին: Որոշուեց Երեւանի թեմի հայոց ձայնը տալ Մատթէոս արք. Իզմիրլեանին՝ իբրեւ կաթողիկոսական առաջին թեկնածուի:

Արցախի թեմական ժողովի որոշումն ընդունուեց Երեւանի թեմի ժողովի բանաձեւի ոգով:

1908 թ. նոյեմբերի 1-ին Մատթէոս Բ Իզմիրլեանն ընտրուեց Ամենայն Հայոց կաթողիկոս (1908–1910): Նոյն օրը Ս. Էջմիածնում կայացած Ազգային-եկեղեցական ժողովը յանգեց այն եզրակացութեան, որ հայ ժողովուրդն իր ազգային նուիրապետութիւնը կենսունակ, բարեկարգ եւ ազգային կեանքի պահանջներին համապատասխան պայմանների մէջ դնելու համար հրամայական պահանջ է համարում իր Եկեղեցու ժողովրդավարական ոգու եւ լայն ընտրական սկզբունքների համեմատ կարգաւորել եկեղեցական վարչութիւնը (ՎՀԵՊ, Ը, 159–162):

28. ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՆԸ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿՈՒՄ

XX դարի սկզբում Գանձասարի վանքը հիմնականում ինքը պէտք է հոգ տանէր իր տնտեսական կարիքների մասին: Վանքապատկան տնտեսութիւնը ներառում էր նոր առեւտրաարդիւնաբերական յարաբերութիւնների ոլորտը:

Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շիրէեանի նախաձեռնութեամբ եւ բաքուաբնակ Քրիստափոր Թումայեանցի ղեկավարութեամբ 1905-ին ստեղծուեց վեց հոգուց կազմուած «ակցիոներական» կոչեցեալ ընկերութիւնը, որը զբաղուելու էր թեմի վանական կալուածների անտառային, հանքային եւ արդիւնաբերութեան այլ ճիւղերով:

Գանձասարի վանքապատկան հողերի վիճակի մասին տեղեկացուում է նորաստեղծ ակցիոներական ընկերութեան նախագահ Քրիստափոր Թումայեանցի՝ Աշոտ եպիսկոպոսին ուղղուած գրութեան մէջ (1908 թ. դեկտեմբեր). Թումայեանցը, ընդունելով թեմի վանական կալուածները շահագործելու մասին Աշոտ եպիսկոպոսի առաջարկութիւնը եւ այն օգտակար համարելով Ս. Էջմիածնի, տեղի հայութեան եւ իրենց համար, մի խումբ հայ վաճառականների անունից յայտնում է, որ կը ցանկանային կապալով վերցնել այդ թեմում գտնուող Գանձասարի եւ Խութայ վանքերի կալուածները՝ շահագործելու թէ՛ դրանցում եղած հանքերը եւ թէ՛ անտառային ու միւս արդիւնաբերութիւնները: Նրանք պարտաւորուում էին հոգալ արդիւնաբերութեան եւ հարկային բոլոր ծախսերը, որի համար հաստատուն պայման կը կապեն օրէնքով սահմանուած ամենաերկար ժամանակամիջոցով եւ Մայր Աթոռին որոշ տոկոս կը տան կա՛մ զուտ արդիւնքից, կա՛մ համախառն եկամտից (ՎՀԵՊ, Թ, 463):

29. ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ ՁԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐՕՔ

Ձաւէն վարդապետի համառօտ տեղեկագրից (1912 թ. յունուար) երեւում է, որ Գանձասարի վանքի պղնձահանքի կապալառու Մանուչար Աւագեանցը սկսել էր արդիւնահանման գործը: Նոյն տեղեկագրից իմացուում է Խութայ, Գանձասարի, Ս. Ղեւոնդեանց (Ղոնդիկ) վանքերին պատկանող անտառների շահագործման օգտակարութեան մասին:

Գանձասարի վանքի կալուածների եկամուտների եւ ծախսերի թուերը 1906–1910 թթ. ընկած ժամանակաշրջանում ցոյց են տալիս, որ ամենացածր մուտքը գրանցուել է 1906-ին, իսկ յաջորդ տարիներին այն աճել է: Գանձասարի եւ Խութայ վանքերի կալուածների կառավարիչ Մարկոս Տէր-Աստուածատրեանի մի գրութիւնից (1912 թ.) հետեւում է, որ հնարաւոր է եղել «վճարել անցեալ տարիների ապառիկ հարկը եւ փրկել կալուածքը աճուրդի վտանգից» (ՎՀԵՊ, Թ, 563):

Միջազգային արդիւնաբերող շրջաններում Գանձասարի պղնձահանքի հնարաւոր նշանակութեան մասին է վկայում Պ. Տօնապետեանի՝ 1914 թ. յունուարին ուղարկած նամակը Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե Սուրէնեանցին (1911–1930) (ՎՀԵՊ, Թ, 584–586):

Արցախի Հայոց թեմական դպրոցի հոգաբարձութեան՝ Գէորգ Ե-ին

ուղղուած 1915 թ. յունուարի 26-ի դիմումում տեղեկացուում էր, որ ստեղծուած ծանր իրավիճակում դպրանոցի գոյութիւնը պէտք է պահպանել անհրաժեշտաբար, ինչ գնով ուզում է լինի, եւ խնդրում էր կարգադրել, որ Գանձասարի վանքի պղնձահանքի կապալառու պ. Մանուչար Աւագեանցի վճարելիք տարեկան 3000 ռուբլին եւ երկանաքարի կապալավարձը եթէ ոչ մշտապէս, գոնէ որոշ ժամանակով յատկացուի թեմական դպրանոցին:

Օսմանեան կայսրութեան զաւթած Արեւմտեան Հայաստանում եւ Հայկական Կիլիկիայում՝ հայ ժողովրդի Հայրենիքի մեծագոյն մասում եւ այլ վայրերում XIX դ. երկրորդ կէսից մինչեւ 1923 թ. սուլթանական, երիտթուրքերի եւ քեմալական կառավարութիւնների վարած պանթուրքական պետական քաղաքականութեամբ իրագործուեց Հայոց ցեղասպանութիւնը, որի գագաթնակէտն էր 1915 թ. ապրիլի 24-ը: Ցեղասպանութեան՝ մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ գործած հանցագործութեան պատասխանատուն Թուրքիան է (Ներ., 130–132; Барс., 1990 թ., 4–5, 24; 2002 թ., 8–11; CKSS, 788):

Ցեղասպանութիւնից փրկուած հայերի մի մասը եկաւ Արեւելեան Հայաստան: Գէորգ Ե կաթողիկոսի յանձնարարութեամբ, նրանց խնամքով զբաղուեց Խորէն եպիսկոպոս Մուրադբեկեանը: Փախստականների թւում էին նաեւ քահանաներ: Նրանցից մէկը՝ Աղթամարի թեմի Նարեկ գիւղի քահանայ Մարկոս Տէր-Յարութիւնեանը, բնակուեց Արցախի թեմի Ղարաչինար գիւղում:

1918 թ. դեկտեմբերի 4-ի նամակում Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տէր-Գրիգորեանը Գէորգ Ե-ին գրել է, որ Արցախում դպրոցական կեանքը գրեթէ դադարել էր. «60-ից աւելի դպրոցներից ոչ մէկը գոյութիւն չունի գիւղերում: Միայն Շուշիում (վերա)բացուել են Մարիամ-Ղուկասեան դպրոցը, իսկ ներկայ դեկտեմբերից թեմական դպրոցը՝ կիսով չափ հաւաքուած աշակերտներով... Թուրքերի եւ «կովկասեան թաթարների» արշաւանքն աւերել է 35-ի չափ գիւղեր... Ամարասի վանքն աւերուած է» (ՎՀԵՊ, Թ, 662):

«Հայկական Ղարաբաղի մասին տեղեկագրում» (մայիս 5, 1919 թ.) ասւում է, որ «Արեւելեան Անդրկովկասի տարածքում (Մերձկասպեան ցածրավայրը եւ յարակից՝ Կուր գետի ստորին աւազանը) առաջացած պետական կազմաւորումն իրեն սեփականացրել է «Ադրբեջան»[8] անուանումը» եւ «ոտնձգում է իր սահմաններում ընդգրկել Լեռնային Ղարաբաղի տարածքը՝ մինչեւ այժմ այնտեղ ապրող եւ մեծամասնութիւն կազմող հայ ժողովրդի բնիկ սեփականութիւնը»: Վաւերագրի շարունակութիւնում ասուած է. «Հայ արուեստի յուշարձաններից ներկայումս ուշադրութիւն են գրաւում երկու վեհաշուք տաճար, որոնք դարեր շարունակ եղել են մտաւոր եւ քաղաքական կենտրոններ՝ Տաթեւի եւ Գանձասարի վանքերը... Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում հնարաւոր չի գտնել ոչ մի քիչ թէ շատ ուշադրութիւն գրաւող թաթարական մշակոյթի յուշարձան»[9] (ՎՀԵՊ, Թ, 685, 689):

Ռուսական կայսրութեան՝ նախքան Առաջին համաշխարհային պատերազմը հրապարակած պաշտօնական տուեալների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղում հայերի թիւը կազմում էր 280 հազար: Ղարաբաղի (Արցախ) թեմն ունեցել է 224 հայկական գիւղ, 222 գործող եկեղեցի իրենց քահանաներով (Բալ., 293):

Աւերուած գիւղերը չէին վերականգնւում, գործնականօրէն ոչ մի ֆինանսաւորում չէր յատկացուում հայկական դպրոցների գործունէութեան համար: Աւելին՝ 1919 թ. դեկտեմբերին «ԱդՀ» գիւղատնտեսութեան եւ պետական գոյքի նախարարութիւնն իր աւազակային թաթը դրեց Գանձասարին, Խութավանքին եւ Ս. Յակոբայ վանքին պատկանող 60 հազար դեսեատին (162 հազար ակր) տարածութեամբ անտառների վրայ (Hov., 132–133):

1920 թ. մարտի 23-ին «ԱդՀ» մուսավաթականների զօրքերը սկսեցին յարձակումը Արցախի դէմ: Թշնամու ուժերը մի քանի տասնեակ հազար աւազակներ էին կազմում: Հայ մարտիկները թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին (500 սպանուած ու վիրաւոր): «ԱդՀ» հակահայկական քաղաքականութեան սեւ կիզակէտը եղաւ Շուշիի հայ բնակչութեան կոտորածը եւ քաղաքի հայկական կենտրոնական թաղամասի ոչնչացումը հրդեհի բոցերի մէջ: Բազմահազար զոհուած հայերի թւում էր թեմական առաջնորդ Վահան եպս. Տէր-Գրիգորեանը, որի հետ դաժանօրէն սպանուեցին նաեւ քահանաներ (Աբր., 2003 թ., 183, 317):

1920 թ. ապրիլի կէսերին ստեղծուեց Ղարաբաղի (Արցախ) ժամանակաւոր կառավարութիւնը, որը ղեկավարւում էր Հայաստանի Հանրապետութեան (1918–1920) օրէնքներով: Կապանի ուժերի մի մասից կազմուած ջոկատը, հայ ժողովրդի պանծալի զաւակ, պետական եւ ռազմական մեծ գործիչ Գարեգին Նժդեհի հրամանատարութեամբ

ջախջախելով «ադրբեջանական-թուրքական» զաւթիչների զօրքը, մտաւ Դիզակ:

Արցախի հայութեան՝ 1920 թ. ապրիլի 25-ին կայացած IX համագումարը հռչակեց Լեռնային Ղարաբաղի վերամիաւորումը Հայաստանի Հանրապետութեանը՝ որպէս նրա անբաժան մասը, եւ Մոսկուայում գտնուող ՀՀ պատուիրակութեանը խնդրեց այդ մասին յայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարութեանը: Սակայն քաղաքական իրադրութիւնը փոփոխւում էր «Ադրբեջանի» խորհրդայնացմամբ (ապրիլի 28) եւ նրան աջակցող Կարմիր բանակի զօրքերի ճնշման հետեւանքով: Թշնամին արդէն իսկ յարձակումներ էր կատարում հայերի պաշտպանական դիրքերի վրայ Արցախում:

Վիճակը յատկապէս սրուել էր Գանձասար լեռան ստորոտում գտնուող Վանք գիւղի շրջակայքում: Մայիսի 21-ին Կարմիր բանակի մի հարիւրեակ, որին յանձնարարուած էր ձերբակալել պաշտպանութեան հրամանատար գնդապետ Ջաքար Մեսեանին, յարձակուեց Վանք գիւղի վրայ, սակայն արդիւնքի չհասաւ (Աբր., 2003 թ., 193, 206):

30. ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԲՌՆԻ ՓԱԿՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայոց Արցախի լեռնային մասի (Լեռնային Ղարաբաղ) ապօրինի բռնակցմամբ Խորհրդային Ադրբեջանին (ՌԿ(բ)Կ Կովկասեան բիւրոյի 1921 թ. յուլիսի 5-ի յանցաւոր որոշմամբ) կտրուկ վատթարացաւ երկրամասի բնիկ հայութեան վիճակը:

Ս. Էջմիածինը խիստ մտահոգուած էր Արցախի մասնատուած թեմի յետագայ ճակատագրով, քանի որ Բիւզանդ ծ. վարդապետի, ապա Սուրէն վարդապետի առաջնորդութեան օրօք թեմն արդէն հասել էր կազմալուծման եզրին: Նոյնիսկ այսպիսի ծանր վիճակում Գանձասարի վանքը ժողովրդի մէջ պահպանում էր իր բարձր հեղինակութիւնը:

Գէորգ Ե կաթողիկոսի 1922 թ. մարտի 27-ի կոնդակով Անանիա արք. Համազասպեանը կարգուեց Արցախի թեմի առաջնորդ (նստավայրը՝ Վարանդա գաւառի Աւետարանոց գիւղը): Նրա առաջին իսկ գրութիւնները վկայում էին, որ Արցախի թեմը համարեա կազմալուծուել էր: Յուսահատուած Անանիա արքեպիսկոպոսը Մայր Աթոռի Գերագոյն հոգեւոր խորհրդից խնդրեց ընդունել իր հրաժարականը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե-ի մէկ այլ կոնդակով Վրթանէս ծ. վարդապետը կարգուեց Արցախի թեմի առաջնորդ եւ Գանձասարի ու Ամարասի վանահայր (ՎՀԵՊ, Թ, 832): Վրթանէս ծ. վարդապետի՝ Արցախի թեմից Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղարկած համարեա բոլոր գրութիւններում խոր տագնապի զգացում կար: Վրթանէս ծ. վարդապետի ճիգերը՝ կարգաւորելու իրեն վստահուած թեմի վիճակը, բախւում էին երկրում տիրող դաժան իրականութեանը (Աբր. 2009 թ., 205–215):

Վրթանէս ծ. վարդապետի դիմումը Ժողկոմխորհին՝ Գանձասարի եւ Ամարասի վանքերի պահպանման համար հողեր տրամադրելու խնդրանքով, մնացել էր անպատասխան:

Լեռնային Ղարաբաղը (Արցախի լեռնային մասը) 1923 թ. յուլիսի 7-ին վերածուեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ)՝ առանց Արցախի դաշտային մասի, որը բռնազաւթել էր Խորհրդային «Ադրբեջանը»: Օգտուելով կենտրոնական իշխանութեան վարած ամբողջատիրական քաղաքականութիւնից՝ Բաքուն, իր հերթին, իր դրածոների միջոցով ամէն ջանք գործադրում էր խոչընդոտելու Խորհրդային Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի կապին: Այդ կապի կենդանի օղակներից էր Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը: Այսպէս, Գերագոյն հոգեւոր խորհուրդը, նկատի ունենալով Արցախի թեմի առաջնորդ վարդապետի իրար յաջորդող խնդրագրերն, թեմին տարեկան 300 ռուբլու չափով նպաստ յատկացրեց Մայր Աթոռի գանձարանից:

Վրթանէս ծ. վարդապետը մեծ զգուշութեամբ պահպանում էր Գանձասարի վանքի սրբութիւնները եւ գոյքը, որոնց ստացման մասին արձանագրութեան (1925 թ. նոյեմբեր) պատճէնը նա ուղարկել էր Ս. Էջմիածին: Գէորգ Ե-ին 1925 թ. դեկտեմբերին գրած նամակում Վրթանէս ծ. վարդապետը տեղեկացնում էր, որ իշխանութիւններին է դիմել Խաչէնի եւ Ջրաբերդի շրջանների ութ գիւղերի եկեղեցիները վերաբացելու համար: Այդ նամակի յետգրութիւնում Վրթանէս ծ. վարդապետի յիշատակած հասցէն աւարտւում էր նշումով. «… գիւղ Վանք-Գանձասար» (ՎՀԵՊ, Թ, 856):

Վրթանէս ծ. վարդապետը Գանձասարի առաջնորդարանից Գերագոյն հոգեւոր խորհրդին եւ Գէորգ Ե կաթողիկոսին 1926–1927 թթ. յղած գրութիւններով ուղղակի աղերսում էր նպաստել այդ անելանելի վիճակից թեմը դուրս բերելու: Նոյնիսկ իշխանութիւնների կողմից Գանձասարի վանքապատկան հողերի մասնակի վերադարձը վանքին՝ չշտկեց

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս (1955–1994)
Его Святейшество Вазген I Верховный Патриарх, Католикос Всех Армян (1955—1994)
His Holiness Vazgen I Supreme Patriarch, Catholicos of All Armenians (1955–1994)

վիճակը, քանզի միջոցներ էին պէտք դրանք գործի դնելու համար, մինչդեռ իշխանութիւնների վարած հակաեկեղեցական քաղաքականութեան պատճառով բոլոր ջանքերն ապարդիւն էին մնում:

Այդ դժուարին ժամանակներում Վրթանէս ծ. վարդապետը, իմանալով Գէորգ Ե կաթողիկոսի հիւանդութեան մասին, 1927 թ. սեպտեմբերի 11-ին Գանձասարի վանքում մատուցում է ս. պատարագ՝ ազգիս Վեհափառ Հայրապետի ապաքինման առթիւ: Ամենայն Հայոց հայրապետը պատասխան գրութեամբ իր հայրական գոհունակութիւնն է յայտնում Արցախի թեմի առաջնորդին ու հաւատացեալ ժողովրդին՝ նրանց յղելով իր հայրապետական օրհնութիւնները:

Նկատի ունենալով երկրում սանձազերծուած աթէիզմի եւ քաղաքական բռնատիրութեան մթնոլորտը՝ 1929 թ. յունուարի 1-ին Վրթանէս ծ. վարդապետի՝ Գէորգ Ե կաթողիկոսին ուղարկած հաւատքով լի շնորհաւորագիրը կարելի է խիզախ քայլ համարել: Նա գրել է. «Արցախի համայն հոգեւոր դասը, հաւատաւոր ժողովուրդը եւ նուաստս նոր տարուայ առթիւ այսու մեր որդիական շնորհակալութիւններն ու բարեմաղթութիւններն ենք բերում Հանուրց Հայոց Սրբազնասուրբ Հայրապետիդ՝ աղօթելով, որ Բարձրեալն Աստուած երկար կեանք եւ քաջառողջութիւն պարգեւէ մեր պաշտելի տիրոջդ, յօգուտ Առաքելական Եկեղեցու պայծառութեան եւ բարեզարդութեան եւ յուրախութիւն համայն հայ հաւատացեալ ժողովրդին» (ՎՀԵՊ, Թ, 881): Արցախի թեմի առաջնորդը այդ գրութիւնը ստորագրել է արդէն եպիսկոպոսի կարգավիճակում:

Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի փակման ազդանշանը եղաւ 1930 թ. փետրուարի 7-ին Վրթանէս եպիսկոպոսի ձերբակալութիւնն ու արգելափակումը Շուշիի բանտում, որտեղ նա նուաստացուցիչ տառապանքներ կրեց: Թէեւ Վրթանէս սրբազանը արդարացուեց, սակայն կալանքից ազատուեց 23 ամիս արգելափակուած մնալուց յետոյ՝ 1932-ի տարեմուտին:

Գերագոյն հոգեւոր խորհրդին ուղարկած 1932 թ. ապրիլի 12-ի զեկուցագրում ներկայացնելով Արցախի թեմի եկեղեցիների, վանքերի ու քահանայութեան ողբալի վիճակը՝ Վրթանէս եպիսկոպոսը Գանձասարի վանքի մասին գրել է՝ «Ներկայումս այդ վանքում ապրում է Վանք գիւղացի մի այրի կին՝ իր հինգ զաւակներով, որոնք եւ նայում են վանքին…» (ՎՀԵՊ, Թ, 896):

Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա Մուրադբեկեանին (1932–1938) ուղարկած յայտարարութեամբ (ապրիլի 4, 1933 թ.), Վրթանէս եպիսկոպոսը վկայում էր, որ Արցախի թեմի փակումը արդէն տեղի ունեցած փաստ էր: Խորհրդային պետական մարմինները Վրթանէս եպիսկոպոսին արգելեցին Արցախի թեմ վերադառնալ: Ստեղծուած վիճակի հիմքում այն իրողութիւնն էր, որ այդ ամէնը հետեւանք էր խորհրդային կենտրոնական իշխանութիւնների վարած հակաեկեղեցական եւ նրանց կողմից խրախուսուող Բաքուի վարչակարգի հակահայկական յանցաւոր գործողութիւնների:

Արցախի թեմի փակումը շարունակութիւնն էր Խորհրդային Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի հայութեանը հոգեպէս եւ ֆիզիկապէս ոչնչացնելուն ուղղուած քաղաքականութեան, այնպէս, ինչպէս դա տեղի ունեցաւ Հայոց աշխարհի Նախիջեւան գաւառում, որը եւս ապօրինաբար բռնակցուել էր Խորհրդային Ադրբեջանին: Այդ քաղաքականութեան արտայայտութիւններից է հայ ժողովրդի մշակոյթի պատմական յուշարձանների ոչնչացումը[10]: Շահէն Մկրտչեանը որոշ թուեր է ներկայացրել, որոնցից հետեւում է, որ «միայն նախկին ԼՂԻՄ-ի տարածքում քանդուել, աւերուել, հողի երեսից ջնջուել են 167 եկեղեցի, 8 վանական համալիր, 47 բնակավայր եւ բազմաթիւ հին գերեզմանատներ»: Բաքւում միշտ թշնամաբար մերժում էին պատմական յուշարձանների՝ վանքերի ու եկեղեցիների պահպանմանը վերաբերող բազում բողոք-նամակները (Մկրտչ., 1996 թ., 154; 2001 թ., 120):

Գանձասարի վանքը նոյնպէս վտանգուած էր: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ը (1955–1994) Արցախ կատարած իր հովուապետական այցելութեան ժամանակ՝ 1957 թ. սեպտեմբերի 25-ին, Ստեփանակերտում Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր «Կրօնական պաշտամունքների գործերի խորհրդի» լիազօր ներկայացուցչին յանձնում է բացման ենթակայ եկեղեցիների եւ վանքերի մի ցուցակ, որում նշում է Գանձասարի եւ Ամարասի վանքերը եւ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին: Վեհափառ հայրապետը սեպտեմբերի 26–27-ին այցելում է Գանձասարի եւ Ամարասի վանքեր: Վազգէն Ա-ն առաջարկում է վերանորոգել Գանձասարը եւ վանքը փոխանցել Ս. Էջմիածնի հովանու տակ, ինչը սակայն այդ ժամանակ չիրականացաւ:

ՅԻ. ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՊԱՐԳԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ

Արցախեան (Ղարաբաղեան) շարժումով 1988 թ. փետրուարին սկսուեց նաեւ հայ հոգեւոր կեանքի ազատագրումը: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ի հայրապետական կոնդակով 1989-ին վերակազմաւորուեց Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը՝ Պարգեւ սրբազանի առաջնորդութեամբ:

Թեմի կառավարման կենտրոնը եւ առաջնորդանիստը Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցու մոտ են՝ ազատագրուած Շուշիում, իսկ հոգեւոր կենտրոնը Գանձասարի վանքում:

Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանը (աւազանի անունով՝ Գուրգէն), ծնուել է 1954-ին, Սումգայիթում: Մեծացել է Չարդախլուում, սկզբում սովորել Սումգայիթում, այնուհետեւ 12 տարեկան հասակում ընտանիքով տեղափոխուել է Երեւան, 1976-ին աւարտել Վ. Բրիւսովի անուան Ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտը: Նրա դիպլոմային աշխատանքը՝ «Արուեստի եւ բարոյականութեան խնդիրը Միխայիլ Բուլգակովի «Վարպետը եւ Մարգարիտան» վէպում», արժանացել է նախկին ԽՍՀՄ դիպլոմային աշխատանքների համամիութենական մրցոյթի առաջին մրցանակի եւ ոսկի մեդալի: Գուրգէն սարկաւագ Մարտիրոսեանը «Ջրադաշտականութեան արձագանքները Ե դարի հայ մատենագրութեան մէջ եւ պայքարը դրա դէմ» գերազանց աւարտաճառով 1984-ին աւարտել է Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանը: 1985-ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ի հրամանով մեկնել Սանկտ Պետերբուրգ՝ շարունակելու աստուածաբանական կրթութիւնը տեղի Հոգեւոր ակադեմիայում: Այդտեղ 1987 թ. պաշտպանել է «Աստուածճանաչողութիւնը քրիստոնէական աւանդութեան եւ ոչ-քրիստոնէական խորհրդապաշտական ուսմունքների՝ եոգայի, թէոսոֆիայի եւ անթրոպոսոֆիայի մէջ» թեմայով ատենախօսու-

Պարգեւ արք. Մարտիրոսեան՝ առաջնորդ Արցախի թեմի
(լուսանկարը՝ Զաւէն Սարգսեանի)
Его Преосвященство архиепископ Паргев Мартиросян, владыка епархии Арцаха
(фото Завена Саргсяна)
His Eminence Archbishop Pargev Martirosyan, the Prelate of the Artsakh diocese
(photo by Zaven Sargsyan)

թիւն: Նա ստացել է աստուածաբանութեան դոկտորի աստիճան: 1987-ին ստացել է վարդապետական, իսկ յաջորդ տարի՝ ծայրագոյն վարդապետական աստիճանները: 1988 թ. նոյեմբերին ձեռնադրուել է եպիսկոպոս: 1987–1988 թթ. պաշտօնավարել է որպէս Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ եւ ապա Ս. Հռիփսիմէի վանահայր՝ այդ ընթացքում աստուածաբանութիւն դասախօսելով ճեմարանում:

Վազգէն Ա-ի օրհնութեամբ եւ բարձր հրամանով, 1989 թ. մարտի 12-ին Պարգեւ եպիսկոպոսը նշանակուել է Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ:

1991-ից Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամ է: Արքեպիսկոպոսի պատիւ է ստացել 1999-ին: Նոյն թուականի դեկտեմբերից Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանի «Կլոր սեղանի» նախագահն է:

Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայութիւնների համար Պարգեւ սրբազանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իշխանութիւններից պարգեւատրուել է պետական բարձրագոյն՝ ս. Գրիգոր Լուսաւորչի շքանշանով, ինչպէս նաեւ «Խիզախութեան համար» մեդալով՝ Արցախի մայրութեան ֆոնդի կողմից: Պարգեւատրուել է նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ ս. Դանիէլի առաջին կարգի շքանշանով եւ ս. Անդրէաս Նախակոչ առաքեալի շքանշանով:

1999 թ. Պարգեւ սրբազանին շնորհուել է Արցախի պետական համալսարանի պատուաւոր դոկտորի գիտական աստիճան: 2000 թ. օգոստոսին ընտրուել է Բնութեան եւ հասարակութեան միջազգային ակադեմիայի իսկական անդամ՝ ստանալով ակադեմիկոսի կոչում:

Պարգեւ սրբազանն Արցախի թեմին իր առաջին այցը կատարեց Վրթանէս վարդապետ Աբրահամեանի ուղեկցութեամբ: 1989 թ. մարտին վերադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Պարգեւ սրբազանը Վեհափառ Հայրապետին զեկուցեց եկեղեցական եւ վանական համալիրների վիճակի մասին: Այն ժամանակ ԽՍՀՄ կենտրոնական իշխանութիւնը ԼՂԻՄ-ում Յատուկ կառավարման կոմիտէի նախագահ էր նշանակել Արկադի Վոլսկուն, ում մասին Ջորի Բալայեանը գրում է, որ նրան յաջողուեց բացել եկեղեցիները եւ վերահաստատել նրանցում կատարուող ծառայութիւնը: 1989 թ. ապրիլին Վոլսկին Մոսկուայից ստացաւ Գանձասարի եւ Ամարասի վանքերի, ինչպէս նաեւ Մարտակերտի Ս. Կարապետ, Հադրութի Ս. Յարութիւն եւ այլ եկեղեցիների բացման պաշտօնական թոյլտուութիւնը (Bal., 400): Պարգեւ սրբազանին եւ Վրթանէս վարդապետին շուտով միացան Միքայէլ վարդապետ Աջապահեանը[11], տ. Մկրտիչ քահանայ Թովմասեանը եւ տ. Թադէոս քահանայ Գեւորգեանը:

Պարգեւ սրբազանի հրամանով 1989 թ. ապրիլին Գանձասարի վանահայր նշանակուեց Միքայէլ վարդապետ Աջապահեանը՝ այդ պաշտօնում սպասաւորելով մինչեւ 1990 թ. նոյեմբերը: Պարգեւ սրբազանի հրամանով՝Գանձասարի վանահայր նշանակուեց Գրիգոր քահանայ Մարկոսեանը, իսկ Ամարասի վանահայր՝ Վրթանէս վարդապետ Աբրահամեանը[12]:

Երկար լռութիւնից յետոյ ղօղանջեցին Գանձասարի զանգերը: Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու վերաօծումը տեղի ունեցաւ 1989 թ. հոկտեմբերի 1-ին, երբ ՀԽՍՀ-ում եւ ԼՂԻՄ-ում մոլեգնում էր պարետային ժամը: Պատարագիչն էր Պարգեւ եպիսկոպոսը: Իր քարոզում նա յայտնեց խոր համոզմունք՝ հայ ժողովրդի արդարացի պայքարի մօտալուտ յաղթանակի մասին: Վաղ առաւօտից մինչեւ ուշ երեկոյ շարունակւում էր ուխտաւոր ժողովրդի այցը Գանձասար: Այդ օրը տեղի ունեցան բազմաթիւ մկրտութիւններ:

Միքայէլ եպիսկոպոս Աջապահեան, առաջնորդ Շիրակի թեմի
Епископ Микаэл Аджапагян, владыка епархии Ширака
Bishop Michael Ajapahyan, the Prelate of the Shirak diocese

Գանձասարի վանքից ծաւալուած հոգեւոր զարթօնքի ճառագայթները պատռեցին խորհրդա-«ադրբեջանական» բռնապետութեան թանձր խաւարը: Արթնացաւ Հայկեան եւ Վարդանանց միաբանութեան Ուխտով ներշնչուած ազգային-ազատագրական պայքարի ոգին: Չնայած խորհրդային կենտրոնական իշխանութեան հովանաւորութիւնը եւ աջակցութիւնը վայելող Խորհրդային Ադրբեջանի պարագլուխների կիրառած բռնութիւնների եւ ահաբեկչական գործողութիւնների՝ Հայ ազգը համախմբուած մէկ բռունցք դարձաւ:

Իրավիճակն է՛լ աւելի էր ծանրացել Սումգայիթում (1988 թ. փետրուարի 27–29) եւ Բաքւում (1990 թ. յունուար) հայ բնակչութեան ցեղասպանութեան (որն իրագործեցին «ադրբեջանական» հանցաւոր իշխանութիւնները), ինչպէս նաեւ 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի աղէտի հետեւանքով:

Ջորի Բալայեանը գրել է. «Անհնար էր պատկերացնել Ղարաբաղեան շարժումը առանց Պարգեւ եպիսկոպոսի…: Վեց տասնամեակ զանգերը լռել էին Ղարաբաղի հայկական եկեղեցիներում: Արցախում, ինչպէս եւ ամենուր Ռուսաստանում, անգթօրէն իրագործուած կոմունիստական գաղափարախօսութիւնը ամէնից առաջ խեղեց հոգին: Եւ այդ անելու համար առաջին հերթին քանդուեցին եկեղեցիները… Պար-

գեւ եպիսկոպոսը ժամանեց Ղարաբաղ, երբ «հակա-քրիստոսի շարժումը» արդէն մարում էր, սակայն դեռեւս երկար ճանապարհ կար անցնելու մինչեւ չարի վերջնական կործանումը» (Bal., 400):

Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու վերաբացման պատարագով, Վազգէն վեհափառի օրհնութեամբ, ինչպէս վկայում է Շահէն Մկրտչեանը, «Արցախում դրուեց հոգեւոր կեանքի վերածնունդի նոր հիմքը, որն, ինչ խօսք, նաեւ Արցախի ազգային-ազատագրական պայքարի արդիւնքն է: Քաջակորով ժողովուրդը, յանձին իր թեմի խիզախ առաջնորդ Պարգեւ սրբազանի, ռազմի դաշտում տեսնում էր իր նոր Ղեւոնդ Երէցին[13]: Երախտապարտ ժողովուրդը, յանձին իր լուսաւորիչ եւ շինարար Սրբազանի, տեսնում է իր նոր Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանին...» (Մկրտչ., 1996 թ., 121):

Ռաֆայէլ Խաչատրեան
Рафаэль Хачатрян
Rafayel Khachatryan

32. ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1991 թ. սեպտեմբերի 2-ին Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների ժողպատգամաւորները, բոլոր մակարդակների Խորհուրդների ժողպատգամաւորների մասնակցութեամբ, ընդունեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան (ԼՂՀ) հիմնադրման Հռչակագիրը: Հիմնուելով 1991 թ. դեկտեմբերի 10-ի Հանրապետական հանրաքուէով ԼՂՀ ժողովրդի կամքի արտայայտման վրայ, 1992 թ. յունուարի 6-ին ԼՂՀ Գերագոյն Խորհուրդը հաստատեց ԼՂՀ անկախ պետութեան Հռչակագիրը: Այսպիսով հինաւուրց Հայոց Արցախում վերականգնուեց հայոց անկախ պետականությունը՝ Հայաստանի Հանրապետութեան հետ հայրենական միասնութեամբ:

Խորհրդանշական է, որ Գանձասարի զանգերի ղօղանջներին համահունչ էին վանական համալիրի գեղեցկութիւնը վերակերտող հայ շինարարի մուրճի զարկերը: Դրանց գումարուեց Արցախեան մարտադաշտերից եկող հրազէնի հռնդիւնը: Արցախի թեմի արթուն առաջնորդը իր զինակից հոգեւորականների հետ ազատամարտի թեժ ճակատային գծում էր: Թեմը զոհեր ունեցաւ. Գանձասարի սարկաւագ Ռաֆայէլ Խաչատրեանը (Տէրտէր) (ծն. 1964 թ. Մարտակերտում) զոհուեց 1991 թ. նոյեմբերի 16-ին, Հադրութի շրջանի Ծամձոր գիւղի ազատագրման ժամանակ: Պատերազմի վերջում սահմանագծին զոհուեց Գանձասարի դպիր Արմէն Թովմասեանը[14]:

Ամենանշանակալի յաղթանակը Շուշիի ազատագրումն էր (8–9 մայիսի, 1992 թ.): Երկար լռութիւնից յետոյ Ս. Ամենափրկիչ եկեղեցուց վերստին երկինք բարձրացան գոհաբանական աղօթքները: Աստուծոյ տաճարը, որը թշնամու զինանոցի էր վերածել, մաքրուեց մահաբեր հրթիռներից եւ դարձաւ հայ հոգեւոր-ազգային յաղթանակների խորհրդանիշ: Պարգեւ սրբազանի խօսքով՝ «Շուշիի աներեւակայելի յաղթանակը դարձաւ հայոց ռազ-

Գագիկ Եոլչեան
Гагик Елчян
Gagik Yolchyan

մական պատմութեան լաւագոյն էջերից մէկը, ցոյց տուեց հայորդիների արիութիւնն ու հաւատը»:

1992 թ. ամռան ամիսներից Շահումեանի եւ Մարտակերտի շրջանները ենթարկուեցին աւերիչ ռմբակոծման: Թշնամին Վանքից եւ Գանձասարից մի քանի կիլոմետրի՝ հրետանային կրակոցի հեռաւորութեան վրայ էր գտնուում: Տեղի պաշտպանական ջոկատները կենաց եւ մահու պայքար էին մղում. շատ էին զոհերն ու վիրաւորները:

Թշնամին սկսեց կրակել Գանձասարի վրայ, սակայն ինչպէս Պարգեւ սրբազանն էր ասում, ս. Յովհաննէս Մկրտչի մասունքների զօրութիւնն էր, որ թոյլ չէր տալիս ռումբերն ընկնէին եկեղեցու վրայ: Պատարագի ժամանակ ռմբակոծութիւնն այնքան էր սաստկանում, որ աղօթքի ձայնը չէր լսւում, սակայն արարողութիւնները չէին ընդհատւում[15]:

Արցախից յոյժ տագնապալի լուրեր էին հասնում Երեւան: Վազգէն Սարգսեանի 1992 թ. օգոստոսի 15-ի կոչով հաւաքուեց Մահապարտների զօրագունդը: Մահապարտների գումարտակի ստեղծման գործում Վազգէն Սարգսեանին ոգեշնչողը եւ գաղափար տուողը եղել է Պարգեւ սրբազանը: Գումարտակը 1992 թ. օգոստոսի 31-ին հասաւ Վանք գիւղ: Նրա մի վաշտը խրամատաւորուեց Չլդրանի մատոյցներում՝ տեղի երկրապահների դիրքերում: Լոյսը բացուեց թշնամու հրանօթային ռմբակոծումներով եւ գրոհով:

Հայաստանի գրողների եւ լրագրողների միութիւնների անդամ, ՀՀ Գերագոյն խորհրդի պատգամաւոր, հրապարակագիր Սամուէլ Շահմուրադեանը իր օրագրում նշել է, որ ծանր էին Չլդրանի համար մղուող մարտերը: Այդ նոյն ժամանակ, Վանք-Վաղուհաս ուղղութեամբ շարժուող նրա գլխաւորած ջոկատը հանդիպում է դարանակալած թշնամուն: Հայ ազատամարտիկները խրամատաւորւում են եւ փոխհրանգութիւն է սկսւում: Տարբեր տեղամասերում կռիւներ էին մղւում եւ միայն շնորհիւ ազատամարտիկների յաջող գործողութիւնների՝ հնարաւոր եղաւ պահպանել ռազմաճակատի գիծը: Անհրաժեշտ էր պաշտպանել Խաչէնի հովիտը՝ Վանքից մինչեւ Կիչան: Ս. Շահմուրադեանն

Պարգեւ արք. Մարտիրոսեանը եւ Մեսրոպ արք. Աշճեանը Գանձասարում
Архиепископы Паргев Мартиросян и Месроп Ашчян в Гандзасаре
Archbishops Pargev Martirosyan and Mesrop Ashjian in Gandzasar

ասաց ազատամարտիկներին. «Եթէ թողնենք այս դիրքերը, թշնամին կը պղծի Գանձասարը՝ յուսահատեցնելով ամբողջ հայութեանը: Նահանջելու տեղ չի մնացել» (Շահմ.):

Աւարայրի ճակատամարտից առաջ սրբոց Վարդանանց նման[16], այնպէս էլ այժմ, ազատամարտիկներից նրանք, ովքեր կնքուած չէին, ճակատամարտի նախորդ գիշերը մկրտուեցին Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցում Պարգեւ սրբազանի եւ Յովհաննէս քահանայի ձեռամբ:

Սամուէլ Շահմուրադեանը նշել է, որ սեպտեմբերի 10-ին տ. Յովհաննէս քահանան Գանձասարի վանքի բակում շարուած զինուորներին օրհնում է յաջորդ օրուայ յաղթանակի համոզմունքով: «Օրհնանքից յետոյ լսւում է «Միացէ՛ք, հայե՛ր» երգը. «Ուս ուսի տուած, Առիւծի նման»: Մասիսցի Կեաժ Սամուէլն է երգում, բոլորս ձայնակցում ենք՝ վեր պարզած բռունցքներս: Վանք ենք վերադառնում երգով ու յաղթանակի համոզմունքով: Ահա այսպէս Գանձասարը արթնացնում է Ոգին, ամրացնում այն: Տղաների դէմքերը պայծառ են, մենք եղբայրներ ենք: Առաւօտեան չորսին գնում ենք կռիւ: Յաղթելու ենք: Վաղուհասի բարձունքի ճակատով «կեղծ» մարտ է լինելու, լաւագոյն ջոկատները, այդ թւում՝ մերը, հարուածելու են թիկունքից: Վաղը մենք յաղթելու ենք... Ինչ գեղեցիկ է Գանձասարի սուրբ Յովհաննէս եկեղեցին գիշերով՝ զինուորների հարիւ-

1992–2007 թթ. Գանձասարի հոգեւոր հովիւ Յովհաննէս քահանայ Յովհաննիսեան
Духовный пастырь Гандзасара священник Ованнес Ованнисян
Fr. Hovhannes Hovhannisyan, Prior of Gandzasar

ռաւոր մոմերով լուսաւորուած...»: Այս խօսքերը օրագրում արուած վերջին գրառումներն են (Շահմ.): Յաջորդ օրը՝ սեպտեմբերի 11-ին, Սամուէլ Շահմուրադեանը հերոսաբար զոհուեց մարտում:

1992 թ. սեպտեմբերին կատաղի կռիւներ էին մղւում ԼՂՀ ամբողջ տարածքում՝ «Լաչինի միջանցքից» մինչեւ Մարտունի եւ Հադրութից մինչեւ Թարթառի հովիտը: Հակառակորդի ռմբակոծիչը հարուածեց Գանձասարի վանքին, եղան մարդկային զոհեր, աւերուեց միաբանական շէնքը, ռումբի բեկորները վնասեցին եկեղեցու պատերը, բայց Գանձասարը մնաց աներեր:

Պարգեւ սրբազանը, դատապարտելով Գանձասարի վանքը աւերելու թշնամու փորձը, ասաց, որ դա «գրոհ էր մեր հոգու վրայ եւ ոտնձգութիւն Ղարաբաղի հայերի սրբութիւն սրբոցի վրայ, քանզի Գանձասարը մեր ժողովրդի հոգին է»: Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխօսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսը Գանձասարի վանքը գնահատել է որպէս «Ղարաբաղի ժողովրդի ամուր հաւատքի յուշարձան»: Բարոնուհի Քոքսը Սփիւռքից ժամանած հայ եպիսկոպոսների հետ Գանձասարի վանք կատարած իր այցելութիւնը նկարագրելով՝ գրել է. «Մինչ որոշւում է Ղարաբաղի ճակատագիրը, Եկեղեցին փորձում է վերականգնել ազգի հոգին: Սփիւռքից եկած հայ եպիսկոպոսներն օգտուեցին զինադադարից եւ ուխտագնացութիւն կատարեցին Գանձասարի վանք...»: Բարոնուհին պատմում է, թէ չորս աղջնակներ պատարագի իրենց հոգելից երգեցողութեամբ զմայլել էին ուխտաւորներին (Cox, 196):

1992 թ. դեկտեմբերին Գանձասար կատարած իր այցը նկարագրել է ֆրանսահայ ֆոտոլրագրող Մաքս Սիվասլեանը: Ժամանելով Վանք գիւղը՝նա, օրուայ վերջին, քսան ֆիդայիների հետ հասնում է Գանձասար, ուր ականատեսն է դառնում ի

յիշատակ 1988 թ. երկրաշարժի զոհերի հոգեհանգստի պատարագին. «Երբ մենք եկանք, պատարագն արդէն սկսուել էր: Պատարագը մատուցում էր տէր Յովհաննէս քահանան, ներկայ էր Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանը...» (Siv., 58):

Ինչպէս նշել է Արցախեան ինքնապաշտպանութեան պատերազմում քաջաբար կռուած «Կոռնիձոր» ջոկատի հրամանատար, մայոր Արա Խուդավերդեանը (Կոռնիձորի Արո/Արայիկ), «երբ լսում էինք, որ Պարգեւ սրբազանը Արցախում է, պատերազմի դաշտում, Աստուծոյ թեւերով էինք սկսում կռուել...» (Խուդ.):

Գանձասարի վանքի եւ շրջակայ տարածքներում մղուած մարտերում, ինչպէս եւ Արցախի միւս ռազմաճակատներում (ԼՂՀ եւ ազատագրուած տարածքներում), իրենց հերոսութեամբ 1991–1994 թթ. Արցախի ազատամարտում կերտելով հաղթանակը՝ մահից անմահութեան անցան շատ ազատամարտիկներ: Հայրենիքի ազատութեանը իրենց կեանքը զոհաբերած ազատամարտիկների անունները գրանցուեցին Հայկազունների հերոսական բազմադարեան մատեանում:

33. «ԳԱՆՁԱՍԱՐ» ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Արցախի թեմն իր վերագործունէութեան հէնց սկզբից առանձնայատուկ հոգածութեան առարկայ դարձրեց հրատարակչական գործը՝ որը կարեւոր գործոն է հայ ժողովրդի հոգեւոր գիտակցութիւնը կրթելու եւ նրան զանազան աղանդաւորական օտարածին ուսմունքներից զերծ պահելու ասպարէզում: Այս նպատակով 1991 թ., պատերազմական ծանր ժամանակաշրջանում, Վազգէն Ա Հայրապետի օրհնութեամբ եւ Պարգեւ սրբազանի հրամանով հիմնուեց «Գանձասար» աստուածաբանական կենտրոնը, որի նախագահ եւ գլխաւոր խմբագիր նշանակուեց տ. Մեսրոպ քահանայ Արամեանը (պաշտօնավարում է մինչեւ օրս):

Կենտրոնի աշխատանքների շուրջ համախմբուեցին բազմաթիւ հոգեւորականներ, ակադեմիական գիտնականներ եւ արուեստագէտներ: Հրատարակուած գրքերը ոչ միայն սիրուեցին արցախահայութեան կողմից, այլեւ լայն ճանաչում ձեռք բերեցին եւ՛ Հայաստանի Հանրապետութիւնում, եւ՛ ԼՂՀ-ում, եւ՛ Սփիւռքում: Սեփական ժողովրդին աստուածաբանական գրականութիւն մատուցել իր մայրենի լեզուով, հաղորդակից դարձնել իր հայրերի փառահեղ հայրախօսական ժառանգութեանը եւ համաքրիստոնէական արժէքներին. ահա՛ այն խնդիրները, որոնք իր առջեւ դրեց «Գանձասար» կենտրոնը եւ յաջողութեամբ իրագործում է առ այսօր: Կենտրոնի աշխատանքների շնորհիւ դրուեցին հայ հոգեւոր ժառանգութեան ուսումնասիրութեան եւ մատուցման, յատկապէս քննական բնագրերի պատրաստման եւ թարգմանութեան բարձր գիտական չափանիշեր: Այսօր կենտրոնն ունի վաթսունից աւելի հրատարակութիւն, որոնցից կարելի է առանձնացնել «Գանձասար» աստուածաբանական հանդէ-

Մեսրոպ քահանայ Արամեան
Священник Месроп Арамян
Fr. Mesrop Aramian

սի եօթ հատորները: Կենտրոնը ծրագրուած կերպով աշխատում է «Հայ աստուածաբանական մատենադարան» շարքի հրատարակութեան վրայ, որը պիտի ներառի բոլոր հայ հոգեւոր հայրերի գործերի գրաբար քննական բնագրերը՝ զուգահեռ՝ աշխարհաբար թարգմանութեամբ: Հատորները պէտք է թարգմանուեն նաեւ օտար լեզուներով:

1992 թ. Հայաստանի Հանրապետութեան թերթերից մէկում մի համառօտ ակնարկ տպագրուեց, որում դիպուկ ասուած էր. «Այս տարիներին մենք սովորել էինք, որ ամէն ինչ պէտք է իմանանք Արցախից, բայց որ աստուածաբանութիւնն էլ պէտք է սովորենք այնտեղից, դա իսկապէս զարմանալի է»: Իսկ պատերազմական ծանր օրերին Արցախի օգնութեան համար ԱՄՆ-ում կազմակերպուած դրամահաւաքի ժամանակ մեծանուն ազգային բարերար Ալեք Մանուկեանը, տեսնելով «Գանձասար» կենտրոնի հրատարակութիւնները, յուզուել է եւ Դետրոյտում, ամբողջ հայ համայնքի ներկայութեամբ անձամբ Պարգեւ եպիսկոպոսին ասել է. «Այն ժողովուրդը, որ պատերազմական իրավիճակում այսպիսի հոգեւոր արժէքներ է արարում, անպարտելի է»:

Յիրաւի, կարեւոր է ազատամարտի թեժ ճակատներում կերտուած յաղթանակներն ամրագրել ներքին-հոգեւոր յաղթանակներով՝ ազատամարտիկների կեանքի գնով ձեռքբերածը դիւրութեամբ չկորցնելու համար:

Ձանալով հաւատարիմ մնալ ստացած բարձր անուանը եւ օրհնութեանը՝ «Գանձասար» կենտրոնը դարձաւ մեր հոգեւոր գանձերի մատակարարման մի հզօր աղբիւր եւ իր կարեւոր ներդրումն ունեցաւ հոգեւոր-անտեսանելի պայքարի ոլորտում տարած մեր յաղթանակների մէջ:

34. ԳԱՆՁԱՍԱՐԸ ԱՐՑԱԽԵԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԵՏՈՅ

Արցախեան պատերազմում հայ ազատամարտիկների փայլուն յաղթանակով ազատագրուեցին Լեռնային Արցախը (Ղարաբաղ) Դաշտային Արցախի մի մասի հետ: Արցախեան ազատամարտի կարեւորագոյն արգասիքներից են հայ հոգեւոր կենտրոնների ազատագրումը, վերականգնումը եւ պաշտպանութիւնը: Պատերազմից անմիջապէս յետոյ Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմում սկսուեցին լայն ծաւալի եկեղեցաշինական աշխատանքներ. հնամենի վանքերի վերականգնմանը զուգընթաց կառուցւում են նոր եկեղեցիներ:

Գանձասարի վանական համալիրը ամբողջապէս վերանորոգուեց: Ռմբակոծուած եւ աւերուած նախկին միաբանական շէնքի (որի պատերի միջից բացուեցին XII–XIV դարերի երկու տասնեակ խաչքար) փոխարէն կառուցուեց միաբանական երկյարկանի նոր շէնքը, ուր եւ հիմնուեց աստուածաբանական գրադարանը:

Վանքի հիւսիսային պարսպի մօտ աւարտուել է Հոգեւոր ճեմարանի երկյարկանի շէնքի կառուցումը: Ամբողջովին նորոգուել են Գանձասարի կաթողիկոսների ընդունարանը, սեղանատունը, 8 խուցերը, տաճարի գաւիթը, վանքի պարիսպները, սալապատուել է վանքի ներքին բակը:

Վանական համալիրն ամրացնելու համար վանքի արեւելեան եւ արեւմտեան կողմերում կառուցուեցին մօտ 100 մետր երկարութեամբ պարիսպներ: Վանք գիւղից դէպի Գանձասարի վանք նախկին 1,7 կմ

դժուարին ճանապարհի փոխարէն արեւմտեան կողմից 3 կմ նոր ճանապարհ կառուցուեց եւ ասֆալտապատուեց եկեղեցու յարակից տարածքի հետ միասին: Ճանապարհն ամրացնելու համար այն եզերուեց 90 մետր երկարութեամբ եւ 3 մետր բարձրութեամբ պարսպով:

Երեք կիլոմետր երկարութեամբ ջրատար խողովակով ջուր անցկացուեց դէպի վանք: Ամբողջ վանական համալիրն ապահովուել է էլեկտրականութեամբ եւ գազով: Նշուած աշխատանքները կատարուեցին բարերար Լեւոն Հայրապետեանի հովանաւորութեամբ:

Պետութիւնը Գանձասարի վանքին վերադարձրել է մշակովի որոշ հողակտորներ:

Թեմին կից գործում է Մարդասիրական օգնութեան յանձնաժողովը, որը հինգ տարուց ի վեր իր բարերարների միջոցով կոյրերի (պատերազմում տեսողութիւնը կորցրած անձանց) միութեանը տարեկան տրամադրում է 7200 ԱՄՆ դոլար: Թեմն իր խնամքի տակ է վերցրել Արցախի 71 երկկողմանի որբերի, Շուշիի ամենաաղքատ տասը ընտանիքների եւ փորձում է իր օգնութիւնը հասցնել զանազան կարիքաւորների: 1989–1991 թթ. Մարդասիրական օգնութեան յանձնաժողովը իր խնամքի տակ վերցրեց Արցախի միայնակ ծերերին, այնուհետեւ այդ գործը շարունակեցին ԼՂՀ իշխանութիւնները: Դեռեւս 1990–1991 թթ. թեմը ձեռնամուխ եղաւ Երեւանում «Զատիկ» մանկատան հիմնմանը, որը մինչեւ այսօր մեծ հոգածութիւն է ցուցաբերում այնտեղ ապրող երեխաների նկատմամբ:

Հայաստանում քրիստոնէութիւնը առաջինն աշխարհում (301 թ.) պետական կրօն հռչակելու 1700-ամեակը, ի թիւս այլ միջոցառումների, նշանաւորուեց նաեւ ուխտագնացութիւններով, որոնցից մէկը կայացաւ Ս. Էջմիածնից Գանձասար: 2001 թ. յուլիսի 27-ին ուխտագնացների 41 հոգանոց խումբը հաւաքուեց Ս. Էջմիածնում, աղօթք եւ ուխտ կատարեց Իջման Սուրբ Սեղանի առջեւ ու մեկնեց Գանձասար եւ օգոստոսի 16-ին վերադարձաւ Ս. Էջմիածին:

Գանձասարում պարբերաբար հրաւիրւում եւ կազմակերպւում են գիտաժողովներ՝ նուիրուած հայ եկեղեցագիտութեանը եւ հայագիտութեան հարցերին:

2003 թ. օգոստոսին՝ Պարգեւ սրբազանի հրաւէրով ժամանած, Ղպտի Ուղղափառ պատրիարքութեանը ենթակայ Բրիտանական Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ մետրոպոլիտ Սերաֆիմի եւ հայր Սիմէոն Սմիթի հետ մենք («Վէմ» ռադիոընկերութեան գործադիր տնօրէն Մանուկ Հերգնեանը եւ ես) մեկնել էինք Արցախ: Երբ մետրոպոլիտ Սերաֆիմը տեսաւ, թէ ինչ խաղաղ հոգեւոր շինարարութեամբ է զբաղուած Պարգեւ սրբազանի առաջնորդած թեմը, բացականչեց. «Ես հիմա հասկացայ, որ Արցախի ազատագրումը քրիստոնէական արժէքների պաշտպանութիւնն էր, որը նաեւ մեր պայքարն էր»: Այդ ուխտագնացութեան պսակն էր Շուշիի Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցում ս. Պատարագի մատուցումը: «Դա մի խորապէս յուզիչ պատարագ էր, եւ մինչ պայծառ առաւօտի արեգակի լոյսն էր շիթում սրբավայրի պատուհաններից, հասկանալի էր դառնում այն խոր հաւատը, որը ոգեշնչել է նրանց, ովքեր պայքարել են այդ տեղը որպէս քրիստոնէական սրբավայր պահպանելու համար, երբ դա ընդմիշտ կորցնելու պահը չափազանց մօտեցել էր»[17]:

Հայ ժողովուրդը միշտ խորին երախտագիտութեամբ է յիշում եւ մեծարում իր պանծալի նախնիներին: 2004 թ. յուլիսին, Վարդավառի օրը, Հասան-Ջալալեան տոհմի ժառանգորդները Գանձասարի վան-

քում եւ Վանք գիւղում տօնակատարութիւն կազմակերպեցին՝ ի նշանաւորումն հայ ժողովրդի ականաւոր զաւակ Հասան-Ջալալ Դօլայի Արցախում՝ Խաչէնի իշխանական գահ բարձրանալու 790-ամեակի եւ Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու օծման 764-րդ տարեդարձի: Պատարագիչն էր Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսեանը: Սրբազանն օրհնեց Հասան-Ջալալեան տոհմի դրօշը, որն ի պահ տրուեց Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցուն:

35. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ[18] ՅՈՒՇԵՐԸ ՊԱՐԳԵՒ ՍՐԲԱԶԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարգեւ սրբազանը Արցախում ծառայելու համար հոգեւորականների կարիք ունէր: Իմ ընկերներից մէկը, որ երկար տարիներ կաթողիկոսի քարտուղարն էր, ինձ մօտ եկաւ եւ խնդրեց միասին գնալ Պարգեւ սրբազանի մօտ: Ընկերս լսել էր, որ Պարգեւ սրբազանը եւ ես հարեւաններ ենք եղել, սովորել ենք նոյն դպրոցում: Ընկերս ուզում էր քահանայ ձեռնադրուել Պարգեւ սրբազանի ձեռամբ եւ ծառայել Արցախում:

Պարգեւ սրբազանը մեզ շատ սիրալիր ընդունեց, խոստացաւ ընկերոջս ձեռնադրել եւ, անակնկալ կերպով, ինձ նոյնպէս յորդորեց քահանայ դառնալ:

1990 թ. մայիսի վերջին Պարգեւ սրբազանն ինձ առաջարկեց 15 օրով գնալ Արցախ եւ մասնակցել Գանձասարի Ս. Յովհաննէս եկեղեցում պատարագի: Արցախահայութիւնը տրամադրուած էր պայքարելու մինչեւ վերջ, ընդհուպ մինչեւ միացում Հայաստանի Հանրապետութեան հետ: Արցախահայութեան ոգին եւ անկախութեան սուրբ գործը նոր լիցք էին ստացել Պարգեւ սրբազանի ներկայութեամբ: Բոլորն անհամբեր սպասում էին նորանոր եկեղեցիների վերաբացմանը եւ կրկնում Պարգեւ սրբազանի «Զանգը հնչի՝ թուրքը փախչի»՝ կարգախօս դարձած բառերը:

Վերանորոգւում էին Ամարասի վանքը, Խնածախի եւ Ներքին Հոռաթաղի եկեղեցիները:

Արցախից իմ ստացած առաջին տպաւորութիւնը ժողովրդի մեծ սէրն ու վստահութիւնն էր Պարգեւ սրբազանի նկատմամբ: Նրա տունը, որը նաեւ նորաբաց թեմի առաջնորդարանն էր (այդ ժամանակ դեռեւս Ստեփանակերտում), լիքն էր արցախցիներով: Բոլորը ցանկանում էին սրբազանից լսել, որ յաղթանակը մե՛րն է լինելու: Պարգեւ սրբազանի հեղինակութիւնը շատ մեծ է Արցախում: Նա վստահեցնում էր, որ Աստուծոյ կամօք եւ նախախնամութեամբ մենք յաղթելու ենք: Արցախահայերը, փառք տալով Աստծուն, գնում էին իրենց տները:

Ժամանակ առ ժամանակ առաջնորդարան էին այցելում Արցախեան շարժման ակտիւիստները՝ Զորի Բալայեանը[19], Ռոբերտ Քոչարեանը[20], Բորիս Դադամեանը, Սերժ Սարգսեանը[21], Ժաննա Գալստեանը[22]՝ խորհրդակցելու եւ ստանալու Պարգեւ սրբազանի օրհնութիւնը յետագայ պայքարի համար: Մի քանի անգամ սրբազանի հետ հանդիպել էր նաեւ Արկադի Վոլսկին: Առաջնորդարանը յատկապէս մարդաշատ էր լինում, երբ սրբազանը Երեւանից գալիս էր Ստեփանակերտ: Բոլորն ակնկալում էին նրանից լսել երեւանեան նորութիւնները, իսկ Ստեփանակերտի եւ մօտակայ գիւղերի նորաստեղծ զինուած խմբերի հրամանատարները Պարգեւ սրբազանից զէնք ու զինամթերք էին խնդրում: Արցախ մտնող զէնքերի մեծ մասը սրբազանի անմիջական մասնակցութեամբ էր բերուած: Շատ վտանգաւոր էր այդ տարիներին զէնքի հայթայթումը եւ, առաւել եւս, նրա տեղափոխումը Արցախ:

1989 թ. ձերբակալուեց[23] անվտանգութեան ծառայութեան փոխգնդապետ Ռոբերտ Գրիգորի Ջանգիրեանը (ծագումով՝ Վանք գիւղից), որը Լէոնիդ Ազգալդեանի ջոկատին էր յանձնել տասներկու «Կալաշնիկով»

Արթուր Փափազեան, Արկադի Տէր-Թադեւոսեան, Իւրա Յովհաննիսեան եւ Ֆելիքս Գզողեան
Երեւան, Հանրապետութեան հրապարակ
Артур Папазян, Аркадий Тер-Тадевосян, Юра Ованнисян и Феликс Гзогян. Ереван, Площадь Республики.
Arthur Papazyan, Arkadi Ter-Tadevosyan, Yura Hovhannisyan and Felix Gzoghyan. Yerevan, the Republic Square.

ինքնաձիգ եւ երկու արկղ նռնակ: Երկու տարի մոսկովեան «Լեֆորտովո» բանտում ազատազրկուած մնալուց յետոյ՝ 1991 թ. սեպտեմբերին նա ազատ արձակուեց: Պարգեւ սրբազանին զէնքի հայթայթման գործում օգնում էր նաեւ Գաւրուշ Վարդանեանը:

Մի քանի անգամ Պարգեւ սրբազանին տնային կալանքի էին ենթարկել: Պետական անվտանգութեան կոմիտէի աշխատակիցները գալիս էին նրա մօտ եւ մինչեւ լոյս մնում առաջնորդարանում, յատկապէս այն օրերին, երբ «ազերիները» որեւէ բռնի գործողութիւն էին կատարում եւ շարժման ակտիւիստներից որեւէ մէկին ձերբակալում, հաւանաբար նրա համար, որպէսզի Պարգեւ սրբազանն իր համակուրսեցի, «ՌԻԱ-Նովոստի» գործակալութեան երեւանեան գրասենեակի տնօրէն Աւետ Դեմուրեանի միջոցով ի լուր աշխարհի չտարածի «ազերիների» եւ խորհրդային զինուորների անօրինութիւնների լուրերը:

1990 թ. օգոստոսի 20-ին նորից մեկնեցի Արցախ: Սրբազանը մտադրուել էր Աստուծոյ կամօք վերստին օծել Ամարասի Ս. Գրիգորիս եկեղեցին: Շաբաթ օրը՝ սեպտեմբերի 8-ի երեկոյեան, սկսուեց եկեղեցու վերաօծումը: Ամարասի վանքում էին թեմի բոլոր հոգեւորականները: Տասնամեակներ լռելուց յետոյ, Ամարասի Ս. Գրիգորիս եկեղեցու զանգերը նորից ղօղանջեցին սեպտեմբերի 9-ին՝ մի անգամ եւս աւետելով Արցախ աշխարհի հոգեւոր զարթօն-

քը: Այդ օրը պատարագիչն էր Պարգեւ սրբազանը, որի ձեռամբ էլ ես դարձայ սարկաւագ:

Ուշ երեկոյեան, երբ բոլոր հիւրերը գնացել էին Ամարասից, Ֆիզուլիից 20 խորհրդային զինուորականներ եւ «ադրբեջանցի» ՕՄՕՆ-ականներ եկան Ամարաս: Վանքում նրանք զէնք էին փնտրում: Երբ համոզուեցին, որ զէնք չկայ, գնացին: Մենք՝ Ամարասի վանահայր Վրթանէս վարդապետը, ես եւ Երեւանից եկած մի հաւատացեալ երիտասարդ, գնացինք Մաճկալաշէն գիւղը: Հայր Վրթանէսը գնաց Ծովատեղ գիւղը: Ժամը 23-ին մօտ մաճկալաշէնցի երիտասարդների մի խմբի հետ գնացինք գիւղամէջ: Գիւղացիները հաւաքուել էին գրասենեակի մօտ եւ քննարկում էին խորհրդային զինուորականների եւ «ադրբեջանցի» ՕՄՕՆ-ականների լկտի գործողութիւնները: Լուր բերեցին, որ Ֆիզուլիից դէպի Ամարաս երեք աւտոբուս է գալիս: Գիւղում խուճապ սկսուեց: Կէսգիշերին կրակոցներ լսուեցին: Կրակում էին Ամարասի վանքում: Գիւղի գրասենեակից զանգեցի Ստեփանակերտ՝ Պարգեւ սրբազանին: Նա շատ հանգիստ լսեց ինձ եւ ասաց, որ ժամը մէկ զանգահարեմ իրեն: Ճիշտն ասած՝ զարմացել էի սրբազանի հանգստութեան վրայ:

Գրասենեակում ռադիոկապ կար, որից լսւում էր Մարտունու շրջանի գործկոմի նախագահ Օլեգ Եսայեանի ձայնը: Նա եւ էլի երկու հոգի մեքենայով ընկել էին շրջափակման մէջ, եւ քանի որ մեքենայի լոյսերը չէին կարող վառել, ռադիոկապով օգնութիւն էին խնդրում: Գիւղում գտնուեց մի ծերունի, որը տեղանքը լաւ գիտէր. նա ռադիոկապի օգնութեամբ գտաւ մեքենան եւ երեք ուղեւորներին հանեց շրջափակումից:

Երբ լոյսը բացուեց, իմացանք, որ «ազերիները» 24 հայ են բռնել, մէկին էլ սպանել: Շուտով Պարգեւ սրբազանը եկաւ Մաճկալաշէն: Նա ինձ ասաց, որ գիշերը հերթական տնային կալանքի մէջ էր եղել: Սրբազանից նաեւ իմացայ, որ ձերբակալուել էր Արթուր Ալեքսանեանը (Ամարասի Արթուրը): Միասին գնացինք Ամարաս: Եկեղեցում աղօթելուց յետոյ գնացինք Ստեփանակերտ:

Մօտ մէկ շաբաթ մնացի առաջնորդարանում՝ Պարգեւ սրբազանի մօտ, ուր ծանօթացայ Աբովեան քաղաքի մօտակայ Բիւրեղաւանից ընտանիքով Արցախ եկած Սամուէլ Վարդանեանի հետ: Նա ջոկատ էր հաւաքել արցախցի տղաներից՝ թշնամու դէմ պայքարելու համար: Պարգեւ սրբազանը հովանաւորում էր այդ ջոկատը, որի տղաներն աչքի էին ընկնում իրենց նուիրուածութեամբ: Արցախի ազատագրման գաղափարով ներշնչուած՝ նրանց գործողութիւնները խուճապ էին առաջացնում խորհրդային եւ «ազերի» զինուորականների մէջ: Երբ հայ ազատամարտիկներին յորդորում էին զգոյշ լինել, հրամանատարը՝ Սամուէլ Վարդանեանը, ասում էր. «Մեր առաջնորդը Պարգեւ սրբազանն է, Տէրը՝ Աստուած... Մենք վախենալու ոչինչ չունենք, յաղթանակը մե՛րն է լինելու...»: Պարգեւ սրբազանը հովանաւորն էր ոչ միայն այդ ջոկատի, այլեւ բազմաթիւ զինագործ անհատների եւ այլ ջոկատների, որոնց գործի համար նա զինամթերք, գումար եւ պահեստամասեր էր հայթայթում:

Սամուէլ Վարդանեան
Самвел Варданян
Samvel Vardanyan

1990 թ. սեպտեմբեր ամսից Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանում երկամեայ քահանայական դասընթացների ուղարկուեցին Վանք գիւղից երկու երիտասարդ՝ Հրանտ Յովհաննիսեանը եւ Արամ Մովսէսեանը: Նրանք պէտք է համալրէին Արցախի թեմի հոգեւորականների շարքերը:

1990 թ. նոյեմբերի 25-ին Պարգեւ սրբազանի ձեռամբ ձեռնադրուեցի քահանայ եւ նրա բարեհաճ կարգադրութեամբ նշանակուեցի Գանձասարի վանահայր՝ հայր Միքայէլի Էջմիածին տեղափոխուելու պատճառով:

Ամէն կիրակի օր Պարգեւ սրբազանը ներկայ էր լինում Գանձասարում ժամերգութիւններին եւ մատուցուող պատարագին: Գանձասարի վանքը շաբաթ եւ կիրակի օրերին դառնում էր արցախեան ազատամարտի առաջամարտիկների հաւաքատեղի: Պարգեւ սրբազանին հանդիպելու էին գալիս Լէոնիդ Ազգալդեանը, Շահէն Մեղրեանը, Վազ-

գէն Սարգսեանը, բոլոր նրանք, ովքեր չէին կարող գնալ Ստեփանակերտի առաջնորդարան՝ Պարգեւ սրբազանին հանդիպելու:

Պարգեւ սրբազանի խորհրդով՝ Գանձասարի մօտ ուղղաթիռների համար տարածք հարթեցրին, իսկ խորհրդային զինուորականներին ասում էին, որ կարուսելի համար է դա արւում:

Քանի որ որոշել էի ապրել Գանձասարի վանքում, Պարգեւ սրբազանի տնօրինութեամբ սկսեցինք եկեղեցու յարակից խուցերի վերանորոգումը եւ բաղնիքի կառուցումը: Վանքում էին ապրում նաեւ Երեւանից եկած երկու երիտասարդ՝ մանրանկարիչ Լեւոն Ջաքեանը եւ Արշակ Ֆարիշեանը (այժմ՝ Բագրատ քահանայ): Վանքի պահակն էր Բենիկ Յակոբեանը, որը քարտաշութիւն էր անում, թէեւ բարձրակարգ տրակտորիստ էր, որսորդ եւ լաւ գիտէր տարածքը:

Գիշերները Վանք գիւղից Գանձասար էին բարձրանում եւ մինչեւ լոյս հերթապահում գիւղի տղաները (Սերեոժա Մարտիրոսեան, Մամիկոն Ասրեան, Արկադի Օհանեան, Աբել Հայրապետեան, Արտուշ Ասրեան, Եաշա Ազատեան, Ռաֆիկ Յովհաննիսեան, Արթուր Բաղրամեան), քանի որ «ազերիները» Նարեշտար գիւղից (Գանձասարից 7 կմ հեռու) մի քանի անգամ փորձել էին Վանք գիւղի հայ գիւղացիներից անասուններ առեւանգել: Այնպէս որ այդ տղաների գիշերային հերթապահութիւնը մեծ օգնութիւն էր Գանձասարի վանքում ապրող քահանայի, դպիրների եւ պահակի համար:

Ամէն օր Գանձասարի զանգերը Խաչէնագետի ձորակում հնչում էին թէ՛ առաւօտեան եւ թէ՛ երեկոյեան ժամերգութիւններին: Երբեմն Գանձասարի վանք էին գալիս նաեւ խորհրդային զինուորները՝ զէնք եւ զինամթերք գտնելու նպատակով: Բնականաբար, նրանց ջանքերն ի զուր էին անցնում:

Լէոնիդ Ազգալդեան
Леонид Азгалдян
Leonid Azgaldyan

1991 թ. ապրիլ ամսին Պարգեւ սրբազանի հետ գնացինք Շահումեան: Այդ ժամանակ Շահումեանի շրջանում էին տեղակայուած խորհրդային բանակի զօրամասերը, սակայն հայկական ուժերը, Շահէն Մեղրեանի հրամանատարութեամբ, անտեսելով նրանց ներկայութիւնը, գնդակոծում էին «ազերիների» դիրքերը: Լէոնիդ Ազգալդեանն իր ջոկատով մի քանի ամիս Շահումեանում էր եւ մասնակցում էր այդ մարտական գործողութիւններին:

Պարգեւ սրբազանը ուղղաթիռով Շահումեանից գնաց Գետաշէն: Շահէն Մեղրեանն ինձ եւ Պարգեւ սրբազանի վարորդ Կարէն Ղազարեանին առաջարկեց գնալ Մարտունաշէն: Այնտեղ հասնելով՝ իմացանք, որ մի «թեթեւ» մարտ պէտք է տանք «ազերիներին» Սարուսու գիւղի ուղղութեամբ: Մարտունաշէնում էր Լէոնիդ Ազգալդեանի ջոկատը, որի տղաները պէտք է փորձարկէին ինքնաշէն ականանետները, իսկ շահումեանցի տղաները «Ալազանով» պէտք է հրթիռակոծէին թշնամուն:

Շահէնը Կարէնին աւտոմատ տուեց, իսկ ինձ՝ կարաբին, եւ խնդրեց փամփուշտները խնայողաբար օգտագործել: Երբ մարտը թեժացաւ, յանկարծ մեր դիմացի բարձունքի յետեւից ուղղաթիռ երեւաց: Մեզ թուաց, որ դա «ազերիների»

ուղղաթիռն էր, իսկ թշնամուն թուաց, թէ մերն էր, եւ երկու կողմից սկսուեց ուղղաթիռի գնդակոծումը: Որոշեցի պայթուցիկ փամփուշտով կրակել ուղղաթիռի վրայ: Նշան բռնելու պահին Կարէնը յանկարծ գոռաց, թէ Պարգեւ սրբազանը ուղղաթիռի մէջ է: Ինչքան հայ մարտիկ կար, բոլորը դուրս եկան իրենց դիրքերից եւ սկսեցին կրակել թշնամու դիրքերի վրայ: Ուղղաթիռը բարեյաջող վայրէջք կատարեց: Այնտեղից դուրս եկան Պարգեւ սրբազանը, Անդրանիկ Մարգարեանը[24], Իգոր Մուրադեանը[25], Գառնիկ Իսագուլեանը եւ Վրոյր Կարապետեանը[26]:

Շահէն Մեղրեան
Шаген Мегрян
Shahen Meghryan

Մեզ ասել էին, որ Պարգեւ սրբազանը իմացել էր մարտին մեր մասնակցութեան մասին եւ զայրացել: Սրբազանը Կարէնին ոչինչ չասաց, իսկ ինձ յանդիմանեց: Անգամ Շահէն Մեղրեանի՝ ինձ գովաբանելը չօգնեց: Սրբազանն ասաց, որ ինձ եւ տղաներին իր օրհնութիւնը չէր տուել, դրա համար էլ յաջողութեան չէինք հասել: Իսկապէս, չէինք կարողացել «Ալազան» հրթիռ արձակել, որովհետեւ փչացել էր հրթիռն արձակող սարքը: Ինչեւիցէ, Պարգեւ սրբազանը երեկոյեան տուեց իր օրհնութիւնը Շահէնին, Լէոնիդին եւ տղաներին: Սրբազանը ինձ էլ օրհնեց: Ինձ զէնքը յանձնելով՝ ասաց. «Դու քահանայ ես, եւ քո գլխաւոր զէնքը խաչն է: Խաչի զօրութիւնը ոչ մի զէնք չունի: Այս պատերազմը Տիրոջ կամքով եւ զէնքով պէտք է յաղթենք, Աստուած քեզ պահապան»: Այդպէս Պարգեւ սրբազանն օրհնեց ինձ, ինքն էլ զէնք վերցրեց, եւ գնացինք մարտի: Եւ իսկապէս, սրբազանի օրհնութիւնը զօրաւոր էր: Առաջին իսկ հրթիռը հասաւ նպատակին: Տղաները, ոգեւորուած սրբազանի ներկայութեամբ, հասան յաջողութեան:

Ապրիլի 24-ին Գանձասարում պատարագ մատուցուեց եւ հոգեհանգիստ կատարուեց Հայոց ցեղասպանութեան նահատակների յիշատակին: Պատարագից յետոյ Պարգեւ սրբազանի հետ մեկնեցինք Երեւան:

Արցախում եւ յատկապէս Շահումեանում վիճակը վատ էր: «Ազերի-թուրքերը» խորհրդային հրամանատարութեան հովանաւորութեամբ հայաթափեցին Գետաշէնը, Մարտունաշէնը, բռնազաւթեցին Էրքեջ, Բուզլուխ եւ Մանաշիդ գիւղերը:

Մի քանի անգամ Պարգեւ սրբազանի հետ փորձեցինք Արցախ գնալ, չյաջողուեց, որովհետեւ «ադրբեջանական» ՕՄՕՆ-ը զաւթել էր Ստեփանակերտի օդանաւակայանը եւ հայկական ինքնաթիռներ չէր ընդունում: Փորձեցինք ռուսական ուղղաթիռով մեկնել: Ուղղաթիռը բարձեցինք ալիւրով եւ օդ բարձրացանք: Երբ թռչում էինք Սեւանի վրայով, ուղղաթիռի ռուս հրամանատարը սրբազանին ասաց, որ վատացող եղանակային պայմանների պատճառով պէտք է իջնենք... Կիրովաբադում (Գանձակ): Սրբազանը մի կերպ համոզեց օդաչուներին վերադառնալ Երեւան:

Օրերով սպասում էինք «Էրեբունի» օդանաւակայանում եւ ոչ մի կերպ չէինք կարողանում թռչել: Սրբազանը անհանգիստ էր, որովհետեւ սկսուել էր տխրահռչակ «Կոլցո» («Օղակ») օպերացիան, եւ նա ձգտում էր ամէն գնով հասնել Արցախ:

«Հոգեւոր առաջնորդը պէտք է իր հօտի հետ լինի»,– ասում էր նա:

Մայիսի վերջին Երեւանում տեղի ունեցաւ Շահումեանում զոհուած հինգ ազատամարտիկների յուղարկաւորութիւնը:

«Արցախ» կոմիտէում էին հաւաքուել Ջորի Բալայեանը, Գրիգոր Յարութիւնեանը, Պարգեւ սրբազանը: Շահումեանից հեռագրել էր մոսկովեան «Կուրանտի» թերթի թղթակից Կիրիլ Ալեքսէեւսկին: Նա խնդրում էր Շահումեանի շրջան հոգեւորական ուղարկել, որի կարիքն իսկապէս կար: Երեկոյեան սրբազանը հեռաձայնեց ինձ եւ ասաց, որ Շահումեանում քահանայի կարիք կայ, սակայն նա չի կարող ինձ այնտեղ ուղարկել իմ կամքին հակառակ: Ես համաձայնեցի գնալ: Առաւօտեան գնացի «Արցախ» կոմիտէ՝ սրբազանի օրհնութիւնը ստանալու: Կոմիտէում եռուզեռ էր. հաւաքուել էին բժիշկներ, ազատամարտիկներ: Երեկոյեան Պարգեւ սրբազանի եւ Ջորի Բալայեանի հետ գնացինք «Էրեբունի» օդանաւակայեան, որտեղ կազմ ու պատրաստ ուղղաթիռի անձնակազմը, Ստեփան Նիկողոսեանի հրամանատարութեամբ, սպասում էր օդ բարձրանալու: Ուղղաթիռում էին Կոռնիձորի Արոյի ջոկատը եւ երեք բժիշկ՝ Գուրգէն Սահակեանը, Սիլվա Խաչատրեանը եւ Ռաֆայէլ Նիգմատուլինը: Ուղղաթիռը վայրէջք կատարեց Կամո (Գաւառ) քաղաքի օդանաւակայեանում, իսկ առաւօտեան ժ. 4-ին մեկնեցինք Շահումեան: Լուսաբացին Գիւլիստանում էինք: Շահէն Մեղրեանը, որն ընդունում էր Երեւանից ժամանող բոլոր ուղղաթիռները, ուրախ էր «Կոռնիձորի Արոյի» ջոկատի ներկայութեան համար:

Շահումեանցիներն ունէին իրենց ջոկատները, սակայն Երեւանից եկող ջոկատների համար շատ էին ուրախանում, որ Հայաստանի Հանրապետութիւնը մտածում է իրենց՝ Շահումեանցիների մասին: Եկել էին նաեւ սփիւռքահայ հայրենասէրներ՝

Վերին Շէնի ջոկատը: Կենտրոնում՝ տ. Գրիգորը եւ Շահէն Մեղրեանը:
Отряд Верин Шена. В центре священник Григор и Шаген Мегрян.
The regiment of Verin Shen. In the centre: Fr. Grigor and Shahen Meghryan.

Ժիրայր Սեֆիլեանը, Մարտիրոս Ժամկոչեանը, Մոնթէ Մելքոնեանը[27] եւ այլք:

Շահէն Մեղրեանի հետ գնացի Վերին Շէն, ուր տեղակայուած էր ջոկատների գործողութիւնները ղեկավարող շտաբը: Վերին Շէնը Շահումեանի շրջկենտրոնից մեծ գիւղ էր: Գիւղի մի ծայրից միւսը 7.5 կիլոմետր էր, սակայն գիւղում շատ բնակիչ չէր մնացել: Գիւղացիների մեծ մասը լքել էր իր տունը եւ բնակւում էր կա՛մ շրջկենտրոնում, կա՛մ էլ մօտակայ գիւղերում՝ բարեկամների մօտ:

Երեք օրում գիւղը լցուեց բնակիչներով: Երեք շաբաթ, առաւօտից մինչեւ կէսօր, Վերին Շէնի Ս. Աստուածածին եկեղեցում մկրտութեան խորհուրդ էի կատարում: Մկրտուելու էին գալիս հարիւրաւոր մարդիկ՝ ասելով. «Եթէ պէտք է զոհուենք, քրիստոնեայ զոհուենք»: Այդ խօսքերը ինձ էլ էին ուժ տալիս: Երեք շաբաթում մօտս եղած մեռոնը վերջացաւ:

Գիւլիստան գիւղից (այնտեղ էր գտնւում հզօր ռադիոկայեանը) կապուեցինք «Արցախ» կոմիտէի հետ եւ մեռոն խնդրեցինք Պարգեւ սրբազանից: Մեր խնդրանքը հասցրել էին սրբազանին, որն արդէն Ստեփանակերտում էր: Մինչ կը ստանայի սրբազանից մեռոնն ու խաչերը (որոնց կարիքը շատ մեծ էր), գնում էինք շրջանի գիւղերը եւ ժողովրդի հետ զրոյցներ ունենում: Պարզուեց, որ չմկրտուածների թիւը մեծ էր: Եկեղեցի ունեցող գիւղերում մաքրում էին եկեղեցիները եւ խնդրում Աւետարան բաժանել: Նոր Կտակարան էի տալիս ջոկատներին եւ խնդրում տղաներին կարդալ ժողովրդի համար: Հայ Պարիս գիւղում փոքրիկ եկեղեցի կար, որը մաքրել էին Երեւանից եկած ջոկա-

«Կոռնիձոր» ջոկատը. առաջին շարքում՝ Արտեուշա, Սամո, Աշոտ, Յովսէփ, երկրորդ շարքում՝ Արամ, Մոնթէ (Աւո), Սերգո, Կոռնիձորի Արո (հրամանատար), Յարութ, Կարէն:
Отряд "Корнидзор". В первом ряду — Артюша, Само, Ашот, Овсеп; во втором ряду — Арам, Монте (Аво), Серго, "Корнидзори Аро" (командир), Арут, Карен.
The regiment of Kornidzor. In the first row — Artyusha, Samo, Ashot, Hovsep; in the second row — Aram, Monté (Avo), Sergo, "Kornidzori Aro" (the commander), Harut, Karen.

տի տղաները, իրենց ուժերով մի խաչքար էին պատրաստել եւ կանգնեցրել եկեղեցու մուտքի մօտ: Այդ եկեղեցում ոչ միայն մկրտութիւններ եղան: Այդտեղ պսակի արարողութիւն էլ կատարեցի[28]:

Շահէն Մեղրեանն ինձ ասաց, որ Պարգեւ սրբազանն ինձ է սպասում Ստեփանակերտում, մէկ օրով պէտք է գնամ եւ ինքս էլ մեռոնն ու խաչերը բերեմ: Շահէնը խնդրեց, որ Ստեփանակերտ ուղեկցեմ երկու միջազգային դիտորդների: Նրանց հետ գնացի Ստեփանակերտ:

1991 թ. յունիս–յուլիս ամիսներին Շահումեան էին գալիս բազմաթիւ դիտորդներ Մոսկուայից, պատգամաւորներ, հասարակական գործիչներ՝ բարոնուհի Ք. Քոքսը, Ա. Սմիրնովը, Շաբադը, Գայդարը եւ շատ-շատեր: Բարոնուհի Ք. Քոքսը, գլխաւորելով «Միջազգային քրիստոնէական համերաշխութիւն» կազմակերպութիւնը, 1991 թուականից բազմիցս եղել է Արցախում:

Երբ մտայ առաջնորդարան, այնտեղ տեսայ Սամուէլ Վարդանեանին, որը եկել էր Պարգեւ սրբազանի մօտ՝ ջոկատի հինգ տղաների հետ: Պարզուեց, որ սրբազանը գիտէր Սամուէլի գալուստի մասին եւ ինձ էլ էր կանչել Ստեփանակերտ: Այդ օրը երեկոյեան, Խաչէնագետի ձորակում, Քոլատակ գիւղի մօտ, պէտք է ուղղաթիռ իջնէր եւ զէնք ու զինամթերք բերէր ջոկատի համար: Կասկածից վեր էր, որ դրանք Պարգեւ սրբազանի ջանքերով էին ձեռք բերուել Երեւանից: Ուղղաթիռը ժամանակին վայրէջք կատարեց: Զէնքն ու զինամթերքը տարանք Գանձասար: Ամբողջ գիշեր ջոկա-

տի տղաները հերթապահում էին Գանձասարում: Առաւօտեան շարժուեցինք Շահումեան:

Պարգեւ սրբազանի «Նիվա» մեքենայում էին Կիրիլ Ալեքսէեւսկին, սրբազանը, ես եւ վարորդ Կարէնը: Սամուէլ Վարդանեանը որոշել էր զէնքն ու զինամթերքը անտառով տանել: «Կամազ» մակնիշի բեռնատարը ջոկատի տղաների ուղեկցութեամբ մեզանից շուտ ճանապարհ ընկաւ: Բեռնատարի հետ հանդիպելու էինք Մարաղա գիւղի մօտ: Ռուսական ՕՄՕՆ-ը ճանապարհին մի քանի անգամ զննութեան ենթարկեց սրբազանի մեքենան: Խորհրդային զինուորները գազազած էին. օրեր առաջ նրանցից մի խումբ գերի էր ընկել Հաթերք գիւղի կանանց ձեռքը՝ ի պատասխան հայ երիտասարդների ձերբակալման:

Պարգեւ սրբազանի եւ ինձ մօտ զէնք կար: Սրբազանի վստահ կեցուածքը ինձ էլ էր ոգեշնչում: Ճանապարհին մեզ հասաւ Սամուէլի գլխաւորած ջոկատի տղաներից Էդուարդ Դաւթեանը եւ ասաց, որ «Կամազ»-ը շուռ է եկել եւ շտապ տրակտոր է պէտք: Սրբազանի հետ գնացինք «Կամազ»-ի մօտ: Իսկապէս բեռնատարը հնարաւոր չէր առանց տրակտորի օգնութեան շարժել տեղից: Մօտակայ գիւղերի բնակիչները, լսելով, որ սրբազանին օգնութիւն է հարկաւոր, եկել էին օգնելու: Շուտով մօտեցաւ նաեւ տրակտորը, որի օգնութեամբ «Կամազ»-ը հանեցին ձորից: Լաւ էր, որ զէնքին ու զինամթերքին ոչինչ չէր պատահել:

Երեք ժամից Շահումեանում էինք: Սրբազանին դիմաւորելու էին եկել Շահումեանի համարեա բոլոր գիւղերից: Գիւղացիները իրար հետ խօսելիս նշում էին. «Եթէ Պարգեւ սրբազանը եկել է, թուրքի վայն էլ հետն է եկել»:

Ինչպէս եւ սպասւում էր, Պարգեւ սրբազանը մնաց Սամուէլ Վարդանեանի ջոկատի հետ: Նա մերժեց ապահով տեղում իջեւանելու՝ Շահէն Մեղրեանի յորդորները: Սրբազանի գլխի համար մեծ դրամական պարգեւ խոստացած «ազերիները» նրանից ընդամէնը 100 մետր էին հեռու:

Պարգեւ սրբազանը յոգնած էր: Նա հինգ–վեց օր չէր քնել: Երբ Սամուէլ Վարդանեանն առաջարկեց մի երկու ժամ հանգստանալ, մերժեց՝ ասելով, որ հանգստեան տուն չի եկել:

Գիշերը, տարբեր ջոկատներից երեքական զինուոր հաւաքուել էին Վերին Շէնի շտաբում, որոշել էին փորձնական մարտի մէջ մտնել Էրքեջ գիւղի ուղղութեամբ: Պարգեւ սրբազանն օրհնեց տղաներին, եւ նրանք ոգեւորուած գնացին մարտի: Տղաները մտել էին Էրքեջ, սակայն շուտով ստիպուած թողեցին իրենց դիրքերը: Վիրաւորուել էին Կնեազ Համբարձումեանը (Կնո), «Կոռնիձորի Արոն» եւ Ռուբէն Գալստեանը (Դոստի): Դիրքերը թողնելու պատ-

Ազատամարտիկ Լեւոն (Լոլո) Մովսիսեանը՝ գազանացած «ազերիների» կողմից ռմբակոծուած միաբանական շէնքի աւերակների դիմաց:
Боец-освободитель Левон (Лоло) Мовсисян перед руинами жилого помещения монашеской братии, разбомбленного зверствующими “азерами”.
Fighter-liberator Levon (Lolo) Movsisyan in front of the ruins of the cloister of the Gandzasar monastery bombarded by the atrocious “Azeris”.

ճառներից մէկն էլ զինամթերքի պակասութիւնն էր: Յաջորդ օրը «ազերիները» խորհրդային բանակի օժանդակութեամբ հրակոծեցին Վերին Շէնը: Այդ օրը անձրեւ էր գալիս. Սամուէլի հրամանով վառել էին փայտօջախը, որ հերթապահութիւնից եկած տղաները տաքանան: Սրբազանը, օջախի մօտ նստած, քնեց:

Թշնամու հրակոծմանը պատասխանեցինք «Ալազան» հակակարկտային սարքի՝ Սամուէլ Վարդանեանի կատարած ձեւափոխման շնորհիւ մարտական դարձած հրթիռներով: Թշնամին յետ շպրտուեց Վերին Շէնի դիրքերից, սակայն էրքեջը մնաց «ադրբեջանական» ՕՄՕՆ-ականների հսկողութեան տակ: Երբ վերադարձանք, Պարգեւ սրբազանը դեռ քնած էր: Մէկ ժամ յետոյ արթնացաւ. պարզուեց, որ նա

Լեովա Կարապետեան
Лева Карапетян
Lyova Karapetyan

այնքան խորն էր քնել, որ ոչ մի պայթող արկի ձայն չէր լսել:

Երեկոյեան ճաշկերոյթ էր ի պատիւ Պարգեւ սրբազանի: Շահումեանում տեղակայուած ջոկատների հրամանատարները եկան Վերին Շէն: Այդտեղ էին ԽՍՀՄ ԳԽ պատգամաւոր Սմիրնովը, Կիրիլ Ալեքսէեւսկին, Օսոկինը, Ցվետանա Պասկալեւան եւ ուրիշներ: Մեր ջոկատն էլ մի գառնուկ էր մատաղ արել Կնեազ Համբարձումեանի առողջանալու համար: Սամուէլ Վարդանեանը կիթառի նուագակցութեամբ երգում էր հայրենասիրական երգեր: Ցվետանան էլ ոգեշնչուած երգեց «Բուլղարացի հայդուկի երգը», որը ցնցող տպաւորութիւն թողեց խարոյկի շուրջ հաւաքուածների վրայ:

Այդ ժամանակաշրջանում Սամուէլ Վարդանեանի (զոհուեց 1991 թ. սեպտեմբերի 14-ին) ջոկատում էին Աբովեանից՝ Նիկոլ Վանեանը (զոհուեց 1991 թ. դեկտեմբերի 27-ին), Կնեազ Համբարձումեանը եւ Լեւոն Խաչատրեանը, Ստեփանակերտից՝ Էդմոն Բարսեղեանը (զոհուեց 1991 թ. օգոստոսի 28-ին Ղարաչինարում), Բենիկ Բաղդասարեանը եւ Էդուարդ Դաւթեանը (Էդո), Արմէն Սարգսեանը (Վասիսդաս, մահացել է 2005 թ.), Կաւկազ Ասլանեանը (Ռազմիկ), Աշոտ Թեւանեանը (Քաչալ Արմէն), Սուրէն Աղաջանեանը (Սաշիկ-Եասաուլ), Ռաֆիկ Արզումանեանը (Քաչալ Ռաֆո, զոհուեց 1992 թ. յունուարի 26-ին), Վիլեն Սաֆարեանը, Աշոտ Յովսէփեանը (Աշոտիկ), Լեւոն Փառաջանեանը (Ցիկլոպ), Հայասէր Աւանէսեանը (Հայո), Մարտակերտից՝ Լեւոն Կարապետեանը (Չաւուշ Լեւոն, զոհուեց 1991 թ. սեպտեմբերի 14-ին), Տաշիրից՝ Տարօն Տոնոյեանը (մահացել է 1996 թ.) եւ

Էդմոն Բարսեղեան
Эдмон Барсегян
Edmon Barseghyan

Գոռ Բաղդասարեանը, Մհեր Շախեանը (Մհերիկ, զոհուեց 1991 թ. սեպտեմբերի 14-ին) Վերին Շէնից, Մերուժան Աւանէսեանը Առաջաձորից, Լիւդան (Անահիտ) եւ Լիլիա-Շուշանիկը (Քեռակին): Մեր ջոկատում ապաստանել էր խորհրդային բանակից փախած ռուս Սաշան:

Սրբազանի հետ սեղան նստելը, նրա օրհնած հացն ուտելը մեծ պատիւ էր տղաների համար:

Սրբազանը պէտք է Երեւան գնար: Շահէն Մեղրեանը մի մեծ ցուցակ տուեց նրան՝ ասելով. «Սրբազան, մեր յոյսը դու ես, երբ զէնքերն ուղարկէք, էրքեջը, Բուզլուխը, Մանաշիդը կ'ազատագրենք»:

Շահումեանի շրջանի ազատամարտիկներին (նրանց մեծ մասը դաշնակցական էր) օգնում էր նաեւ Հ. Յ. Դ. կոմիտէն: Անկուսակցական էին Սամուէլ Վարդանեանը եւ նրա

ջոկատի տղաները: Սամուէլը միշտ ասում էր. «Մեր կուսակցութիւնը Հայ Առաքելական Եկեղեցին է, հոգեւոր հրամանատարը՝ Պարգեւ սրբազանը»: Վերին Շէնում տեղակայուած ջոկատների տղաներն ասում էին. «Գիւղի ամենաապահով տունը Սամուէլի տղաների տունն է: Ճիշտ է՝ «ազերիների» դիրքերին ամենամօտն է, սակայն սրբազանի ներկայութիւնը ամէն վտանգ չեզոքացնում է»:

Կողքի բարձունքից այդ տան վրայ թշնամու մի նշանառու էր կրակում: Փա՛ռք Աստուծոյ, որեւէ մէկին բան չպատահեց:

Սրբազանին ճանապարհեցինք Երեւան: Խորհրդային Միութեան ԳԽ-ի մի քանի պատգամաւորներ եւ միջազգային դիտորդներից ոմանք որոշեցին բաց նամակ ուղարկել Գորբաչովին, Բուշին (աւագ), ՄԱԿ-ին՝ խնդրելով սատարել Շահումեանի շրջանի հայ բնակչութեանը:

Ստեփանակերտից Շահումեան էր գալիս Սեյրան Օհանեանը, որն այդ ժամանակ այնտեղ գտնուող խորհրդային բանակի 366-րդ մեքենայացուած գնդի կապիտան էր[29]:

Սեյրանը, ռիսկի դիմելով, իր հետ զինամթերք էր բերում Վերին Շէն, այնտեղից դատարկ պարկուճներ տանում: Նրա հետ Աղդամով գալիս էին նաեւ խորհրդային բանակի մի քանի զինուոր: Նրանց մէջ էին տաջիկներ, ուզբեկներ եւ ռուսներ: Սեյրանի հրամանով՝ տաջիկները եւ ուզբեկները խոնարհաբար ծառայում էին մեր տղաներին՝ զէնք ու զինամթերք բերելով մեր դիրքերը:

Սամուէլի ջոկատում մի չգրուած օրէնք կար: Մարտից եկող տղաների ոտքերը լուանում էին նրանք, ովքեր մարտին չէին մասնակցել: Խոնարհութեան ինչպիսի՜ օրինակ: Իմ

«Եղնիկներ» ջոկատը (հրամանատար՝ Շահէն Մեղրեան, կանգնած, ձախից երկրորդը) Երից Մանկանց վանքի մօտ (1992 թ. հոկտեմբեր)
Отряд “Егникнер” (командир Шаген Мегрян, во втором ряду, второй слева) у монастыря Ериц Манканц (Трех отроков) (октябрь 1992 г.)
The regiment "Eghnikner" (commander Shahen Meghryan, in the second row, the second from the left) near the monastery of Erits Mankants (October 1992)

ոտքերը մի քանի անգամ տղաները լուացին, իսկ երբ ես էի ուզում լուալ նրանց ոտքերը, չթողեցին[30]:

Շահումեանում ազատամարտիկները պատրաստում էին ազատագրել Էրքեջ, Բուզլուխ եւ Մանաշիդ գիւղերը: Սամուէլը մեկնեց Երեւան՝ սրբազանի հայթայթած զէնքն ու զինամթերքը բերելու: Կնեազը Սամուէլի հետ Երեւան գնաց՝ բուժումը շարունակելու: Սամուէլին Վերին Շէնում Չաւուշ Լեւոնն էր փոխարինում: Էդմոնը զոհուեց: Ջոկատի տղաներից Քաչալ Արմէնը, Ռաֆոն եւ Բենիկը Էդմոնի դիակը ուղեկցեցին Ստեփանակերտ: Հինգ օրից Սամուէլը վերադարձաւ Շահումեան՝ իր հետ շատ զինամթերք բերելով: Նա ինձ Պարգեւ սրբազանի ձեռքով գրուած մի երկտող տուեց: Սրբազանը գրել էր, որ Սամուէլին լաւ նայեմ:

Նոր բժիշկների խումբ եկաւ շրջկենտրոն: Նրանք փոխարինեցին մեծ աշխատանք կատարած Նշան Մանուշակեանին, Կոնստանտին Պետրոսեանին, Գուրգէն Սահակեանին, բեյրութցի Ռոպեր Բալեանին, Վարդան Շիշմանեանին, Վարդան Բաղալեանին, Ռաֆիկին եւ Սիլվային: Երեւանից եկան Մանուէլ Եղիազարեանի գլխաւորած «Արաբո» ջոկատը եւ Արամ Թորգոմեանի հրամանատարութեամբ՝ ՀԱԲ-ի «Արամո» ջոկատը:

Մարտից առաջ ոչ ոք չէր քնել: Բոլորս Սամուէլի գլխաւորութեամբ պատրաստում էինք: Լուսադէմին

մարտը սկսուեց: Էրքեջ, Բուզլուխ եւ Մանաշիդ գիւղերն ազատագրուեցին: 1991 թ. սեպտեմբերի 14-ը եղաւ մեր յաղթական օրերից մէկը՝ ձեռք բերուած ծանր զոհերի գնով: Այդ օրը հերոսի մահով զոհուեցին Սամուէլ Վարդանեանը, Չաւուշ Լեւոնը եւ Միերիկը, իսկ Վասիսդաս Արմէնը, Բենիկը, Աբովեանից՝ Սամուէլի հետ եկած Արամ Ներսիսեանը վիրաւորուեցին՝ բոլորն էլ մեր ջոկատից[31]:

Յաջորդ օրը Երեւանից յատուկ ուղղաթիռ եկաւ՝ Սամուէլ Վարդանեանի դիակը տանելու: Այդ օրը Շահումեան էր եկել նաեւ Սեյրան Օհանեանը, որին մայորի կոչում էր շնորհուել: Նա ցանկացել էր ջոկատի տղաների հետ լինել: Սամուէլի թաղումը տեղի ունեցաւ Բիւրեղաւանում, որի թիւ 1 դպրոցն այսօր նրա անունով է կոչւում:

Սամուէլի զոհուելուց յետոյ էլ Պարգեւ սրբազանը շարունակեց հովանաւորել այդ ջոկատը: Նոր հրամանատար նշանակուեց Նիկոլ Վանեանը: Նա զոհուեց Կրկժանի համար մղուող մարտի ժամանակ, նոյն այն օրը, երբ գնդակոծուել էր սրբազանի տունը (1991 թ. դեկտեմբերի 27-ին): Սրբազանը հրաշքով փրկուեց իր ռմբակոծուած առաջնորդարանում: Նիկոլ Վանեանի աճիւնը հանգչում է Աբովեան քաղաքում: Քաղաքի թիւ 5 դպրոցը, որտեղ սովորել է Նիկոլ Վանեանը, նրա անունով կոչուեց:

Արցախեան պատերազմը նոր թափ էր ստանում: Ազատագրուել էին Խոջալուն, Կրկժանը: ԼՂՀ Գերագոյն խորհրդի 1992 թ. մարտի 4-ի որոշումով ԼՂՀ ինքնապաշտպանութեան ուժերի հրամանատար նշանակուած գնդապետ (յետագայում՝ գեներալ-մայոր) Արկադի Տէր-Թադեւոսեանը (Կոմանդոս) ոչ միայն տաղանդաւոր զօրավար էր, այլեւ հաւատացեալ հայ մարդ: Կոմանդոսը նախապատրաստում էր Շուշիի ազատագրման ծրագիրը, մի ծրագիր, որն իր նախադէպը հազիւ թէ ունենար համաշխարհային զինուորական պատմութեան մէջ: Արկադի Տէր-Թադեւոսեանի առաջարկով՝ Շուշիի ազատագրումը մի քանի ուղղութիւններով պէտք է իրականացուէր:

Նիկոլ Վանեան
Никол Ванян
Nikol Vanyan

1992 թ. ապրիլի 24-ին Պարգեւ սրբազանը թեմի բոլոր հոգեւորականների հետ եկաւ Գանձասար: Սրբազանը պատարագ մատուցեց Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Իր քարոզում նա ասաց, որ Շուշիի ազատագրման օրը մօտ է եւ կարեւոր է հոգեւորականների ներկայութիւնը մարտի դաշտում:

Պարգեւ սրբազանի վարորդ Կարէնն ինձ հաղորդեց նրա որոշումը, որ ես եմ գնալու Ստեփանակերտ, իսկ հայր Վրթանէսը՝ որպէս փոխառաջնորդ, մնում է Գանձասարում, եւ թեմի միւս հոգեւորականների հետ պէտք է աղօթի մեր յաղթանակի համար: Հայր Վրթանէսից բացի, Գանձասարում էին տ. Յովհաննէսը, տ. Կորիւնը, տ. Յարութիւնը, տ. Թադէոսը, Արամ սարկաւագը[32] եւ ուրիշներ:

Երբ հասանք Ստեփանակերտ, սրբազանն ինձ տարաւ Արկադի Տէր-Թադեւոսեանի մօտ: Կոմանդոսի մօտ էր Իւրա Յովհաննիսեանը՝ «26-ի Իւրա»-ն:

Սրբազանը նրանց ասաց, որ տէր Գրիգորը այսուհետ բանակի հոգեւոր հովիւ է նշանակուած իր կողմից: Ինձ տեսնելով՝ Իւրան Պարգեւ սրբազանին ասաց. «Ախր, սրբազա՛ն, մենք ձեզանից ռիսկով մարդ ենք ուզել, դուք էս կարճատես ակնոցաւորին տալիս էք, սրանից ի՞նչ օգուտ պէտք է լինի»: Սրբազանը ժպտաց Իւրային եւ ասաց. «Մի՛ մտածիր, ես ձեզ վախկոտ մարդ չեմ տուել, դու տէր Գրիգորին դեռ չգիտես»: Սրբազանն իր օրհնութիւնը տուեց ինձ ու գնաց՝ ասելով, որ Արկադի Տէր-Թադեւոսեանի հրամանները պէտք է կատարեմ:

Ես, որ երբեք խորհրդային բանակում չէի ծառայել, 36 տարեկանում

դարձայ զինուոր: Արկադի Տէր-Թադեւոսեանն ինձ ուղարկեց «26»[33] պաշտպանական բարձունքը: Այդտեղի հրամանատարն էլ հէնց Իւրա Յովհաննիսեանն էր: Ճանապարհին ինձ ուղեկցող զինուորից իմացայ, որ երկու օր առաջ այդ ուղղութեամբ «ազերիները» գրոհ էին սկսել: Երբ հասանք բարձունքին, Իւրան ինձ ասաց, որ տղաները սպասում են, եւ նրանց հետ զրոյց պէտք է ունենամ, բարձրացնեմ նրանց մարտական ոգին: Թշնամու նշանառուն կրակում էր մեր դիրքերի վրայ: Ես վստահ գնացի նեղ արահետով՝ առանց սպասելու ուղեկցողներին: Իւրան վազելով հասաւ ինձ, տուեց ինքնաձիգը, ժպտաց ու ասաց. «Տէր հայր, խենթ հո չե՞ս, չե՞ս տեսնում կրակում են, ի՞նչ ես գլուխդ տնկած գնում, բա որ սպանե՞ն»: «Ինձ չեն սպանի,– վստահ ասացի ես,– Աստուած ինձ հետ է, խաչն էլ իմ զէնքն է»: «Չէ՛, դու հաստատ գիժ ես, տէ՛ր Գրիգոր»,– ասաց Իւրան ու գնաց դէպի բլինդաժ:

Այդ օրը եղայ մեր բոլոր տասը դիտակէտերում, զրուցեցի տղաների հետ: Շատերին ճանաչում էի: Տեսնելով ինձ՝ նրանք ուրախանում էին եւ ասում. «Եթէ տէր Գրիգորն այստեղ է, հաստատ մի բան կը լինի»:

Մթնում էր, երբ վերադարձայ հրամանատարի բլինդաժը: Իւրան անհամբեր ինձ էր սպասում, քանի որ Կոմանդոսը Իւրային եւ ինձ սպասում էր շտաբում: Արկադի Տէր-Թադեւոսեանը մեզ հրաւիրեց թեյ խմելու: Նա Իւրային հարցրեց իրավիճակի մասին, ինձ էլ, թէ ի՞նչ տրամադրութիւն ունեն տղաները դիրքերում: Մեր պատասխանները լսելուց յետոյ Կոմանդոսը Իւրային ուղարկեց «26»-ի բարձունքը, իսկ ինձ պահեց շտաբում: Ամէն առաւօտ շտաբի ճաշարանում օրհնում էի սեղանը եւ հրամանատարների հետ նախաճաշում էինք: Այնուհետեւ ամբողջ օրն անցկացնում էի «26»-ի բարձունքում:

Մայիսի 1-ին ինձ շտապ կանչեցին շտաբ: Սրբազանի վարորդը՝ Կարէնը, եկել էր իմ յետեւից: Արկադի Տէր-Թադեւոսեանը ինձ մինչեւ ժ. 23-ը ազատութիւն տուեց: Այդ օրը՝ մայիսի 1-ին, իմ եւ կնոջս ծննդեան տարեդարձն էր: Դա նշեցինք Կարէնի տանը:

Գեներալ-մայոր Արկադի Տէր-Թադեւոսեան (Կոմանդոս)
Генерал-майор Аркадий Тер-Тадевосян (Командос)
Major-General Arkadi Ter-Tadevosyan (Commandos)

Ստեփանակերտում բոլորը սպասում էին Շուշիի ազատագրմանը եւ վստահ էին, որ Շուշին մե՛րն է լինելու:

Մկրտում էի չմկրտուածներին, օգնում էի ինչով կարողանում էի: Մայիսի 3-ի լոյս 4-ին Արցախում անսպասելիօրէն ձիւն եկաւ, Շուշիի ազատագրումը մի քանի օրով յետաձգուեց: Մայիսի 5-ին Իւրայի տեղակալի՝ Արթուր Ալեքսանեանի ծննդեան օրն էր: Հէնց այդ օրն էլ Արթուրը որոշել էր ինձ աւելի «մօտիկից ծանօթացնել» Իւրայի հետ: Ճիշտն ասած՝ ես էլ էի ուզում, որ Իւրան հաւատայ ինձ: Իւրան Արցախ էր եկել «Սասունցի Դաւիթ» ջոկատի հետ եւ Արկադի Տէր-Թադեւոսեանի սիրելի հրամանատարներից էր դարձել: Մինչեւ պատերազմը սկսուելը Իւրան յարգուած ֆիզիկոս էր:

«26»-ի բարձունք էին գալիս գեներալ Գուրգէն Դալիբալթայեանը, Պարգեւ սրբազանը, Կարէն Ապրեսեանը[34], Ջորի Բալայեանը, օպերատոր Շաւարշ Վարդանեանը, ֆրանսահայ ֆոտոլրագրող Մաքս Սիվասլեանը[35] եւ ուրիշներ, որոնք իրենց ներկայութեամբ նոյնպէս ոգեւորում էին տղաներին:

Մօտենում էր Շուշիի ազատագրման օրը: Տղաների թիւը գնալով մեծանում էր «26»-ի բարձունքում: Իւրա Յովհաննիսեանի հրամանատարութեամբ նրանք պատրաստ էին թշնամու կրակը իրենց վրայ վերցնել:

Մայիսի 8-ի երեկոյեան Ստեփանակերտի շտաբում էր հաւաքուել հրամանատարական կազմը: Պարգեւ սրբազանի օրհնութիւնից յետոյ՝ ուղիղ ժ. 20-ին, Ստեփանակերտի «Գրադ» կայեանքներից հրթիռներ արձակուեցին Շուշիի ուղղութեամբ: Շուշիի ազատագրութեան մարտը սկսուեց: Երկար ժամանակ մեր զինուորները չէին կարողանում առաջ շարժուել: Ստեփանակերտում Պարգեւ սրբազանը Կարէն Ապրեսեանի հետ գտնուում էր ԼՂՀ ներքին գոր-

ծերի ղեկավար Արմէն Իսագուլեանի առանձնասենեակում: Սրբազանը ծնկաչոք աղօթում էր Աստուածածնի սրբապատկերի առաջ: Սրբազանը մօտեցաւ Իսագուլեանին եւ ասաց. «Մինչեւ Լենինի արձանը չտապալէք, տղաները չեն կարող առաջ շարժուել: Ջինուորների թիկունքներին խաչի նշան կայ, բայց սատանայ Լենինի քարէ ներկայութիւնը թոյլ չի տալիս տղաներին առաջ շարժուել: Տապալէ՛ք արձանը, եւ յաղթանակը մե՛րը կը լինի»:

Սրբազանի խօսքերն այնքան էին ազդել կոմունիստ ոստիկանապետի վրայ, որ նա հրամայեց տապալել պրոլետարների առաջնորդի արձանը: Շղթաներով կապկպելով՝ արձանը բեռնատարների օգնութեամբ մի կերպ տապալուեց Շուշիի ազատագրումից չորս ժամ առաջ: Հէնց կուռքի արձանը գլորուեց պատուանդանից, տղաները սկսեցին առաջ շարժուել:

«26»-ում վիճակը ծանր էր: Թշնամին, մտածելով, որ հայերն իրենց յարձակումը կարող են այդ բարձունքից սկսել, մեծ ուժեր էր կենտրոնացրել այդ ուղղութեամբ: Այստեղ ունեցանք 22 վիրաւոր եւ մէկ զոհ: Ուզում եմ յատկապէս յիշատակել Լեւոն (Լոլո) Մովսիսեանին, որը վիրաւորուեց թշնամու նռնակն իր մարմնով ծածկելով եւ փրկելով Իւրա Յովհաննիսեանի եւ Արթուր Ալեքսանեանի կեանքը:

Մայիսի 9-ի լուսադէմին մեր տղաները Շուշիի բերդի պարսպի մօտ էին: Մի քանի ժամ յետոյ քաղաքն ազատագրուած էր: Պարգեւ սրբազանը զինուորների հետ մտաւ Շուշի: Ռադիոկապով իմացայ, որ սրբազանը Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցում է եւ ինձ է փնտրում: Սրբազանի հետ միասին հոգեհանգստեան արարողութիւն կատարեցինք եկեղեցում: Դեռ 1990 թ. սեպտեմբերին ես եւ սրբազանը ուխտ էինք արել, որ Ղազանչեցոց եկեղեցու վերաօծումից յետոյ առաջին պատարագը սրբազանն է մատուցելու, իսկ երկրորդը՝ ես: Փա՛ռք Տիրոջը, մեր ուխտն իրականացաւ Աստուծոյ կամօք:

Իւրայի հետ մտերմացայ եւ արդէն հումորով էինք յիշում մեր առաջին հանդիպման օրը:

Փոխգնդապետ Իւրա Յովհաննիսեանը զոհուեց 1993 թ. յունիսի 27-ին ականի պայթիւնից, Մատաղիսի մօտակայքում: Նրա դին հանգչում է Երեւանում՝ Եռաբլուրում:

Ամէն տարի մայիսի 9-ին՝ Յաղթանակի օրը, Արցախի բոլոր եկեղեցիներում հոգեհանգստեան արարողութիւն է կատարւում: Հերոս նահատակների հոգիները պահապան հրեշտակների նման ի լուր աշխարհի շեփորահարում են Տիրոջ պարգեւած յաղթանակի մասին: Եկեղեցիների զանգերը ձայնակցում են նրանց. «Տիրոջ պարգեւն է Պարգեւ սրբազանը՝ մերօրեայ Ղեւոնդ Երէցը»:

Իւրա Յովհաննիսեան
ЮраОваннисян
Yura Hovhannisyan

36. ՑՎԵՏԱՆԱ ՊԱՍԿԱԼԵՒԱՅԻ[36] ՅՈՒՇԵՐԸ ՊԱՐԳԵՒ ՍՐԲԱԶԱՆԻ ՄԱՍԻՆ

Իմ առաջին հանդիպումը Պարգեւ սրբազանի հետ եղաւ 1991 թուականի օգոստոսին՝ Շահումեանի շրջանի Վերին Շէն գիւղի պաշտպանութեան ժամանակ: Նա Աբովեանի Սամուէլի (Սամուէլ Վարդանեան) գլխաւորած ազատամարտիկների ջոկատի հետ գտնւում էր գիւղի ծայրում: Սամուէլը մեծ պատուով, հոգատարութեամբ եւ հայրաբար էր վարւում ինձ հետ: Ես դեռեւս ծանօթ չէի Պարգեւ սրբազանին:

Երեկոյեան խարոյկի շուրջ հաւաքուել էր ֆիդայիների տեսքով՝ առնական դէմքերով եւ մօրուքներով մի քանի ազատամարտիկ: Սուրճն այդ ժամանակ ոսկու գին ունէր: Սամուէլը կատակելով ասաց. «Ամէնից թանկը բենզինը եւ սուրճն են, բայց մենք Ցվետանային կը հիւրասիրենք»: Չգիտես որտեղից ջեզվէ յայտնուեց եւ խարոյկի ճտճտացող կրակի վրայ եփուած սուրճը, որն ըմպեցի այդ խստադէմ, բայց եւ շատ բարի այրերի զրոյցի ու երգի ներքոյ, ինձ թուաց ամէնից համեղը, որ երբեւիցէ խմել էի իմ կեանքում: Սամուէլի պատրաստած սուրճը երբեք չեմ մոռանայ:

Խարոյկի շուրջ նստածներից մէկն առաւել աչքի էր ընկնում դէմքի յստակ եւ երիտասարդ դիմագծերով, մտաւորականի խիստ արտա-

յայտութեամբ: Նա սպորտային, սեւ գոյնի համազգեստով էր: Նրա դէմքին, ինձ թւում էր, հոգեւոր լոյս է ճառագում: Կիթառի նուագակցութեամբ հայրենասիրական երգեր էին երգում: Ուշ գիշերին (պատրաստուելով գնալ գիւղի կենտրոնը, ուր գտնւում էր շտաբը), երբ հրաժեշտ էի տալիս եւ շնորհակալութիւն յայտնեցի ինձ այդքան ջերմ հիւրընկալած ազատամարտիկներին, Սամուէլը հարցրեց ինձ. «Դու չե՞ս ճանաչում մեր հոգեւոր առաջնորդին: Մեր Պարգեւ սրբազանն է»: Եւ միայն նոր հասկացայ, թէ ո՞ւմ հետ պատիւ ունէի միասին լինելու:

Ցաւով եմ յիշում, որ չկարողացայ այդ գիշեր նկարահանել խարոյկի շուրջ հաւաքուած եւ ինձ հարազատ դարձած մարդկանց հետ ջերմ հանդիպումը՝ գիւղում էլեկտրական լոյսի խափանման եւ իմ տեսախցիկի մարտկոցները լիցքաւորելու հնարաւորութեան բացակայութեան պատճառով:

Մէկ ամիս անց, խարոյկի շուրջ հաւաքուածներից Սամուէլն ու իր երկու մարտական ընկերները՝ Չաւուշ Լեւոնը եւ Մերիկը, հերոսաբար զոհուեցին պաշտպանական մարտերի ժամանակ: Մէկ ու կէս տարի անց երբ հանդիպեցի Սամուէլի տեղակալին, ցաւով իմացայ, որ ջոկատից չորսն էին մնացել (եւ դա դեռեւս պատերազմի կէս ճանապարհին): Նրանք բոլորը խիզախ տղաներ էին[37]:

Յետագայում բազմիցս հանդիպել եմ Պարգեւ սրբազանին: Նա նոյնպէս ջերմութեամբ է յիշում մեր ծանօթութեան օրը եւ մեր սիրելի հերոս տղաներին, որոնք այլեւս մեզ հետ չեն, որոնք թողել են հայրենանուէր հերոսների անուններ, բայց եւ որբացած ընտանիքներ:

Մեր հանդիպումները Պարգեւ սրբազանի հետ եղել են ռազմական գործողութիւնների տարբեր ուղղութիւնների վրայ: Նա անսպասելիօրէն էր յայտնւում, խօսում էր ազատամարտիկների հետ, հոգեւոր լիցք տալով՝ բարձրացնում նրանց մարտական ոգին: Պարգեւ սրբազանի հետ էին լինում նրա աշակերտներն ու օգնականները՝ Գրիգոր եւ Յովհաննէս քահանաները: Ես տեսել եմ, թէ ինչպէս էին հոգեւոր հայրերը նախքան մարտը, յաճախ լուսադէմին, մեր տղաներին օրհնում եւ չմկրտուածներին մկրտում: Հոգեպէս զօրացած ռազմիկներին անմի-

Շուշիի ազատագրման օրը, Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի. կենտրոնում՝ Պարգեւ եպիսկոպոսը եւ Գրիգոր քահանան:
День освобождения Шуши, церковь Св. Аменапркич (Всеспаситель, Казанчецоц), в центре епископ Паргев и священник Григор.
The day of the liberation of Shushi, the church of Holy Amenaprkich (Ghazanchetsots), in the centre: Bishop Pargev and Fr. Grigor.

ջապէս ճանապարհում էին մարտադաշտ:

Պարգեւ սրբազանից իմ ամենավառ յիշողութիւնը կապուած է իմ մկրտութեան արարողութեան հետ: Պատերազմի թեժ պահերից էր, բաւականին ծանր վիճակ էր ստեղծուել Մարտակերտի շրջանում: Թշնամին սպառնում էր նաեւ Գանձասարին, որի ուղղութեամբ մի քանի հրթիռ էր արձակել, իսկ Վանք գիւղը աւերիչ ռմբակոծութիւնների էր ենթարկուել: Արցախի Պաշտպանութեան բանակի հրամանատար Սամուէլ Բաբայեանն ասում էր. «Ինչ էլ պատահի, վանքը պէտք է պահենք, թշնամին իր ոտքը երբե՛ք չպիտի դնի Գանձասարի հողի վրայ»:

Տեղի ունեցող մարտերը նկարահանելիս ծանր իրավիճակներից դուրս էի գալիս հրաշքով, եւ ինձ թւում է, թէ Աստուծոյ ձեռքը ինձ օգնում էր հայոց հողի վրայ:

Ինչպէս իմ սերնդակիցներից շատերը, ես էլ կնքուած չէի: Իմ մայրը պնդում էր, որ վերադառնամ Բուլղարիա եւ այնտեղ կնքուեմ, քանզի իմ հայրենիքում փոխուել էր քաղաքական կարգը, իսկ այստեղ ամենուր ինձ վտանգ էր ուղեկցում:

Շուշիի ազատագրումից մէկ տարի անց գնացի Պարգեւ սրբազանի մօտ՝ ինձ մկրտելու խնդրանքով: Սրտի թրթիռով, չսպասելով դրական պատասխանի, հարցրի. «Կարո՞ղ էք ինձ կնքել»: Նա պատասխանեց. «Իհարկէ, ոչ մի խնդիր չկայ, մենք այդ կ'անենք մեծ ուրախութեամբ»: Հարցրի, թէ ի՞նչ է դրա համար պէտք: Պարգեւ սրբազանը պատասխանեց. «Դու պէտք է կնքահայր գտնես եւ խաչ ունենաս»: Ես արդէն հայ վարպետի պատրաստած խաչ ունէի:

1993 թ. հոկտեմբերի 17-ին բարձրացանք Գանձասար: Այնտեղ եկան կնքահայր Ջորի Բալայեանը, շատ ազատամարտիկներ ու հրամանատարներ՝ Սամուէլ Բաբայեանի գլխաւորութեամբ: Բերեցին նաեւ մի գառնուկ, որին, աղը օրհնելուց յետոյ, պէտք է մատաղ անէին:

Մինչ մկրտութեան արարողութիւնը՝ Պարգեւ սրբազանն ինձ հարցրեց. «Դու կարող ես ունենալ նաեւ մկրտութեան անուն, իսկ եթէ չես ցանկանում, ապա կը մնայ միայն քո անունը»: Ես ցանկացայ մկրտուել Հռիփսիմէ անուամբ: Պարգեւ սրբազանը զարմացաւ եւ հարցրեց. «Իսկ դու գիտե՞ս, թէ ով էր Հռիփսիմէն»: Պատասխանեցի. «Իհարկէ գիտեմ, եւ գիտեմ, թէ ինչպէս է նա իրեն զոհաբերել յանուն Քրիստոսի հաւատքի: Ես Հռիփսիմէի սուրբ կերպարը շատ եմ սիրում»: Պարգեւ սրբազանն ասաց. «Լա՛ւ, դու կ'ունենաս Հռիփսիմէ մկրտութեան անունը»:

Պարգեւ սրբազանն ինձ մկրտեց, իսկ տ. Գրիգորը եւ տ. Յովհաննէսը ժամերգութիւն կատարեցին: Կնունքից յետոյ մեզ հաճելի անակնկալ էր սպասում: Սամուէլ Բաբայեանի յանձնարարութեամբ՝ Վանքում, չքանդուած մի շէնքում սեղան էին բացել հիւրերի համար: Եկել էին նաեւ հիւրեր Երեւանից՝ «Արցախ» կոմիտէից: Չափազանց յուզուեցի այդքան մեծ ուշադրութիւնից: Չնայած ծանր վիճակին՝ ինձ մեծ պատիւ շնորհուեց, եկան տեղի բնակիչները, կանայք ու երեխաներ: Նրանք իրենց հետ բերեցին հաց եւ ազգային ուտելիք, որոնք մատաղի գառնուկի մսի հետ ճոխացրին մեր սեղանը: Իմ մկրտութեան առթիւ իրենց շնորհաւորական խօսքն ասացին հրամանատարները[38]:

Պատերազմի պահին իմ մկրտութիւնը վերածուեց հոգեւոր տօնի: Պարգեւ սրբազանն օրհնեց սեղանը, յիշեց սուրբ նահատակներին, ազատամարտի հերոսներին եւ բոլորին ցանկացաւ շուտով վայելել յաղթանակի բերկրանքը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Առանշահիկ տոհմանունը ծագում է Հայկազուն-Սիսակեան Առանի անունից: Դեռեւս սեպագիր աղբիւրներից յայտնի հայկական *Արցախ* եւ *Առան* անունների հիմքումն է հայերէն *ար-/առ-* արմատը՝ հայ-արիական հոգեւոր ընդհանրութեան բառապաշարից (*Արարիչ, Արա, Արեգակ*): *Առնի*-ն կամ *Առանի*-ն հայկական Արարատեան (Վան, «Ուրարտու») թագաւորութեան դիցարանի՝ հզորութեան եւ առնականութեան աստուածութիւնն էր (Հմա. 57–58):

2 Կուրի ձախափնեայ (այնտեղ գետի աջափնեայ դաշտից տարածուել էր նկարագրական՝ ոչ էթնիկական *Աղու-անք* անուանումը) «բուն Աղուանքը» Հայկազուն-Երուանդեան Տիգրանի (մ. թ. ա. VI դ.) օրօք Հայոց թագաւորութեան դաշնակիցն էր, իսկ յետագայում այն (ըստ անտիկ աղբիւրների՝ «Ալբանիա», որտեղ Ստրաբոնի (մ. թ. ա. 64 – մ. թ. 20) յիշատակած «ալբանները» զինուած էին, ինչպէս հայերը, Strabo, XI, 4. 4–6) արքայից արքայ Հայկազուն-Արտաշեսեան Տիգրան Բ Մեծի (մ. թ. ա. 95–55 թթ.) Մեծ Հայքի տէրութեան մէջ էր: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ «աշխարհ Աղբանիա, այսինքն, Աղուանք... զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն» (Ս. Տ. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 105): «Աշխարհացոյց»-ի հեղինակներն են Պատմահայր Մովսէս Խորենացին (V դար) եւ նրա գործը շարունակող, նշանաւոր հայ աշխարհագրագէտ, մաթեմատիկոս եւ աստղագէտ Անանիա Շիրակացին (VII դար):

3 Ըստ Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի՝ հին ժամանակներից՝ Հայկազուն-Սիսակեանների ժառանգական իշխանութեան տիրոյթներում գտնուող, Կուրի հովտի աջափնեայ դաշտին եւ նրա լեռնակողմին տրուել է հայկական ծագման «Աղուանք» անուանումը, քանզի «զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն որ ասի Հնարակերտ, եւ աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին» Հայկազուն Սիսակ նահապետին: Հայոց Վաղարշակ թագաւորը «մեծ եւ անուանի եւ բազմաբիւր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր» (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Երեւան, 1991, էջ 113):

4 Հայոց Արեւելից կողմանց առումով «Աղուանք» անուան կիրառումը ոչ թէ էթնիկական կամ վարչա-քաղաքական (քանզի Արցախը եւ Ուտիքի մեծ մասը երբեք չեն եղել ձախափնեայ «Աղուանից մարզպանութեան» կազմում), այլ եկեղեցական բնոյթի էր: Ըստ Մատթէոս Ուռհայեցու (XI դ. երկրորդ կէս – XII դ. 40-ական թթ.՝ «աշխարհ Աղուանից, որ ասի Խորին աշխարհ Հայոց» (Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 231): Ըստ Մ. Չամչեանցի՝ *Աղուանք Հայոց,* «ուր է եւ կաթողիկոսարանն ի Գանձասար», ընդգրկում էր Մեծ Հայքի երեք աշխարհները՝ «զՈւտի, զԱրցախ եւ զՓայտակարան» (աջափնեակում), ինչպէս նաեւ «մասն ինչ յայնկոյս Կուր գետոյ» (Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, Ցանկ, էջ 131): Ըստ Մ. Չամչեանցի՝ *Հայոց Աղուանքը* ընդգրկում էր Հայոց Արեւելից կողմերը եւ Կուրի ձախափնեակի մի մասը, ուր Մեծ Հայքից տարածուել էր հայկական մշակութային, քաղաքական, եկեղեցական եւ ժողովրդագրական հսկայական ազդեցութիւն:

5 Արեւմտեան ճակատի պատուհանը փակուել է գաւթի շինութեամբ:

6 Դօփը հարս էր գնացել Խաչէնի իշխանութեան Ծարայ ճիւղին եւ Հասան Ա-ի կինն է: Դօփի անունով իշխանական այդ տունը պատմութեան մէջ յայտնի է Դօփեան անունով:

7 Ձեռագրերի մի մասը այժմ պահւում է Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում:

8 Այս տարածքը զաւթած եկուոր օղուզթուրքական ցեղերը Ռուսական կայսրութեան փաստաթղթերում անուանւում էին «թաթարներ կամ կովկասեան թաթարներ»: 1918 թ. երկրորդ կէսից, պանթուրքական զաւթողական նպատակներով, այդ տարածքն ընդգրկուեց մի արհեստական կազմաւորման մէջ, որը սկսեցին անուանել «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետութիւն» («ԱԴՀ»), ապօրինի փոխառնելով Իրանի հիւսիսարեւմտեան մասում գտնուող եւ հնուց իրանական ցեղերով բնակեցուած՝ «Ատրոպատենէ»-«Ատրպատական» (առաջացել է Մարաստանի սատրապ՝զօրավար Ատրոպատեսի (մ.թ.ա. IV դ.) անունից (Strabo, XI.13,1) երկրամասի ուշ միջնադարեան պարսկերէն «Ադհարբադհագան» կամ «Ադհարբայագան» անուանաձեւից առաջացած Իրանական Ադրբեջանի (ԻԱ) անուանումը: Դրա դէմ բողոքեցին Իրանի պաշտօնական շրջանները, քաղաքական ու գրական գործիչները, պնդելով, որ «Կովկասի այդ փոքր շրջանը... այլ անուն ունի եւ երբեք Ադրբեջան չի կոչուել» (Bayat, 66–67, տես՝ Galich., 2): Խորհրդային շրջանում «Ադրբեջան» անունը, կրկին քաղաքականացուելով ԻԱ-ից դուրս, գործածուեց որպէս «Խորհրդային Ադրբեջանի» անուանում՝ «Խորհրդային Ադրբեջանին» («յեղափոխութեան» միջոցով) ԻԱ-ի բռնակցման նպատակով (Барт., 703): «Կովկասեան թաթարներին» անուանելով «ադրբեջանցիներ» (սակայն պատմութեան մէջ «ադրբեջանցի» կամ «ազերի» անուններով ցեղ չի եղել)՝ նրանց համար սկսեցին պատմութիւն յօրինել: «Ադրբեջանական» կեղծարարները շարունակում են նենգափոխել ինչպէս Կուրի աջափնեայ՝Հայոց Արեւելից կողմանց, այնպէս էլ իրանական *Ատրպատականի* եւ Կուրի ձախափնեայ *բուն Աղուանքի*՝ «Ալբանիայի», պատմութիւնը: Բաքուի կեղծարարների որդեգրած պատմութեան նենգափոխումը վտանգ է ներկայացնում տարածաշրջանում: Ինչպէս օրինակ նշուած է, «Թեհրանը ծայրայեղ անհանգստութիւն է ցուցաբերել երկու Ադրբեջանների միջեւ միութեան կոչ անող տրամադրութիւնների բորբոքման հաւակնութիւնների նկատմամբ» (Crois., 61):

[9] Փարիզի Խաղաղարար վեհաժողովին (18. I. 1919 թ. – 21. I. 1920 թ.) Հայաստանի Հանրապետութեան (ՀՀ) մինիստր-նախագահ եւ արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսեանի ներկայացրած պաշտօնական հաղորդագրութիւնում նշւում էր. «Ղարաբաղի 355 հազար հայ ազգաբնակչութիւնը կազմում է Հայաստանի ամբողջութեան մասը»: Նա յայտնում էր. ««Ադրբեջանի» կառավարութեան կողմից Ղարաբաղի (Արցախ) եւ Նախիջեւանի նուաճման ծրագիրը նպատակ ունի համաթուրանական ձգտումների իրականացումը, որով այն աշխատում է «Ադրբեջանի», Արցախի եւ Նախիջեւանի վրայով միացնել Թուրքիան եւ Պարսկաստանը, այսպիսով ստեղծել մուսուլմանական կուռ զանգուած, կտրել Արեւելեան Հայաստանը Արեւմտեան Հայաստանից՝ ոչնչացնելով Միացեալ Հայաստանի ստեղծումը»: Այս նպատակին հասնելու համար «քուրդ-թաթարական հորդաները աւերում եւ կոտորում էին Ղարաբաղի հայ գիւղերը», եւ ««Ադրբեջանի» կառավարութիւնը ձեռաց տակից պատրաստում էր թաթար ապստամբութիւն, որը բռնկուեց օգոստոսի մէջ Հայկական կառավարութեան դէմ, Նախիջեւանի եւ Շարուրի գաւառներում»: Հայաստանի կառավարութիւնը յայտնում էր իր վստահութիւնը, որ Հաշտարար կոնֆերանսը իր «ուշադրութեան կ'առնէ Հայաստանի համար այնքան կենսական եղող Ղարաբաղի հարցը» (ՎՀԵՊ, Թ, 730–731):

[10] XXI դ. սկզբին, «ադրբեջանական» յանցաւոր իշխանութիւնների հրամանով «ադրբեջանական բանակի» զինուորները գազանաբար ոչնչացրեցին Ջուղայի խաչքարերի վերջին խումբը՝ դրանով իսկ աւելացնելով նախորդ տասնամեակների ընթացքում հինաւուրց հայոց Նախիջեւանի երկրամասում ոչնչացուած մի քանի տասնեակ հազար հայկական պատմական յուշարձանների թիւը (Այվ. 1984 թ., Galich., 78–89):

[11] Ներկայումս՝ եպիսկոպոս, Շիրակի թեմի առաջնորդ:

[12] Այժմ Վրթանէս եպիսկոպոսը ՀՀ բանակի հոգեւոր հովիվն է:

[13] Ղեւոնդ Երէցը *Հայոց պատերազմի* (451 թ.) ոգեշնչողն էր, երբ հայ ժողովուրդը ս. Վարդան Մամիկոնեանի գլխաւորութեամբ, յանուն Հայրենիքի եւ քրիստոնէական հաւատքի ազատութեան, կռուեց Սասանեան Պարսկաստանի գերիշխանութեան դէմ: Պատերազմից յետոյ նա իր հոգեւորական զինակիցների հետ ընդունեց նահատակութեան պսակը (Եղի., 238, 359–360): Հայ Առաքելական Եկեղեցին նրանց դասեց սրբերի շարքը:

[14] Կիչանի մօտ զոհուեց Արցախի թեմի առաջնորդարանի վարորդ Գուրգէն Արզումանեանը:

[15] Պարգեւ սրբազանի հրամանով՝ տ. Գրիգոր քահանայ Մարկոսեանը 1992 թ. ապրիլի 27-ին Արցախի ազատագրական բանակի հոգեւոր հովիւ նշանակուեց, նրա մէկ այլ հրամանով՝ տ. Յովհաննէս քահանայ Յովհաննիսեանը՝ Գանձասարի հոգեւոր հովիւ:

[16] Եղիշէն (V դար) պատմում է, որ Ղեւոնդ Երէցի օրհնաբանութիւնից յետոյ սեղան կանգնեցրին եւ ամենասուրբ խորհուրդը կատարեցին. պատրաստեցին նաեւ աւազան, ամբողջ գիշերը մկրտեցին զօրքի բազմութեան մէջ եղած բոլոր չմկրտուածներին եւ լուսաբացին (մայիսի 26, 451 թ.) սուրբ հաղորդութիւն ընդունեցին ու այնպէս լուսազգեստ դարձան, ինչպէս Ջատկին՝ տէրունական սուրբ Յարութեան տօնին (Եղի., 230):

[17] Abba Serafim. Journey to Artsakh.– British Orthodox Church, "The Glastonbury Review", Wedn., Feb. 04, 2004.

[18] Տ. Գրիգոր քահանայ Մարկոսեանը (աւազանի անունով՝ Արմէն) անուանի հայ գուսան Հաւասու (Արմենակ Պարսամի Մարկոսեան) որդին է: Ներկայումս ԼՂՀ պաշտպանութեան բանակի հոգեւոր հովիւն է եւ Գանձասարի վանահայրը:

[19] Ջորի Բալայեան, անուանի գրող-հրապարակախօս, Արցախի ազատագրական պայքարի նուիրեալ ազգային գործիչ:

[20] Ռ. Քոչարեանը 1992 թ. օգոստոսից եղել է ԼՂՀ Պաշտպանութեան պետական կոմիտէի նախագահ, 1994 թ. ընտրուել է ԼՂՀ նախագահ, 1997 թ.՝ ՀՀ վարչապետ, 1998–2008 թթ.՝ ՀՀ նախագահ: ԼՂՀ նախագահ 1997 թ. ընտրուեց Արկադի Ղուկասեանը, իսկ 2007 թ.՝ Բակո Սահակեանը:

[21] 1991 թ. դեկտեմբերի 10-ին հռչակուեց ԼՂՀ-ն, որի Ինքնապաշտպանութեան կոմիտէն գլխաւորել է Սերժ Սարգսեանը, 1993–1995 թթ. եղել է ՀՀ Պաշտպանութեան նախարար, այնուհետեւ՝ ՀՀ Ներքին գործերի եւ Ազգային Անվտանգութեան նախարար, 2000–2007 թթ.՝ ՀՀ Պաշտպանութեան նախարար, 2007 թ. ՀՀ վարչապետ, 2008 թ. ընտրուել է ՀՀ նախագահ:

[22] Ղարաբաղեան շարժման ակտիւիստներից՝ ԼՂՀ պաշտպանութեան բանակի գնդապետ, ՀՀ Ժողովրդական դերասանուհի Ժաննա Գալստեանը մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին:

[23] Այդ մասին գրուեց հանրապետական եւ կենտրոնական մամուլում:

[24] Անդրանիկ Մարգարեանը 1990–1994 թթ. Յատուկ ծրագրերի պետական վարչութեան ինֆորմացիայի բաժնի ղեկավարն էր: 2000–2007 թթ.՝ ՀՀ վարչապետ:

[25] Ղարաբաղեան շարժումը Հայկական ԽՍՀ-ում եւ Լեռնային Ղարաբաղում (Արցախի լեռնային մասը) համակարգելու համար Իգոր Մուրադեանի նախաձեռնութեամբ 1988 թ. փետրուարին հիմնադրուել էր «Ղարաբաղ» կոմիտէն:

[26] Ներկայումս՝ Կորիւն քահանայ:

[27] Մոնթէ Մելքոնեանի մասին Կոռնիձորի Արոն պատմում է. «Մոնթէն քայլող լեգենդ էր, հերոսական կերպար, դրօշակակիր առաջնորդ, որն իր յետեւից բանակ կարող էր տանել: Մեծ հայրենասէր ու հայասէր այդ անհատը երբեք չկորցրեց իր խիղճն անգամ պատերազմի արհաւիրքի մէջ… Նրանից շատ բան կարող էինք սովորել եւ սովորեցինք, նա մեծ ներդրում ունեցաւ Արցախի ռազմական գործի մէջ՝ բազում յաղթանակների կռողը դառնալով: Այսօր կարելի է ասել, որ Արցախի բանակը մասամբ դաստիարակուած է Մոնթէի ոգով»: Մոնթէ Մելքոնեանին Ջօն է նուիրել բանասէր-պատմաբան, դոկտոր Ալբերտ Մուշեղեանը.

Եկար Արցախ, արի Աւո,
Երբ այլազգին էր բռնանում,
Խաժամուժով ու նենգ դաւով
Մեզ՝ մեր բնիկ հողից վանում:

Վարել ենք օտար բանակներ,
Ջոհուել յանուն այլ ազգերի,
Մոնթէ՛, հասել է ժամը մեր,
Բաւ է լինենք այլոց գերի:

Կոմանդոսը՝ մեծ զօրավար,
Երբ ազատեց գերուած Շուշին,
Դու Մարտունին դարձրիր պատուար
Ու ջարդ տուիր չար խասփուշին:

Եւ Մարտունու զով դաշտերից
Ջանգն է հասնում Ամարասի
Ու պատմում է քո վաշտերից,
Փառքը երգում հայ հերոսի:

Մարտակերտով մինչ Քարվաճառ
Ահեղ մարտով անցար նորից,
Մեր հին շէներ, բերդ ու տաճար
Ազատեցիր օղուզներից:

Քարվաճառի ձորի մէջ լուռ
Ջանգն է հնչում Դադի վանքի
Եւ հասնում է Եռաբլուր
Որպէս ղօղանջ սուրբ օրհնանքի:

Հին Խաչէնի բարձունքներից
Ջանգն է հնչում Գանձասարի
Ու քաջերի սխրանքներից
Ասք է հիւսում Մասիս սարին:
(27.03.2002)

28 Արցախեան ազատամարտի այդ ծանր օրերին բուլղարուհի կինովաւերագրող Ցվետանա Պասկալեւան «Յոյսի բարձունքներ» ֆիլմում նկարահանել է ազատամարտիկների կնունքի, այնուհետեւ ազատամարտիկ Սերոբի (Սաշիկ) ու Հայ Պարիս գիւղից Անահիտի պսակի արարողութիւնները Գրիգոր քահանայ Մարկոսեանի ձեռքով: Նրանց բոլորի կնքահայրն էր Սամուէլ Վարդանեանը:

29 Յետագայում գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանեանը զբաղեցրել է ԼՂՀ Պաշտպանութեան նախարարի պաշտօնը: Ներկայումս՝ գեներալ-գնդապետ, ՀՀ Պաշտպանութեան նախարար:

30 «Ջոկատի տղաների ոտքերը ես պատիւ ունեցայ լուալու Գանձասարում՝ Ոտնլուայի օրը: Դա 1992 թ. գարնանն էր»:

31 «Ջոհուածների մասին յետագայում պատմեցի Սան-Ֆրանցիսկոյից Մայր Հայաստան ուխտի եկած Նազո Կարապետեանին, ով առանց երկմտելու նրանց ընտանիքներին սիրայօժար օգնութիւն է ցուցաբերում առ այսօր»:

32 Ներկայումս՝ տ. Մինաս քահանայ:

33 «26-ը» Իւրա Յովհաննիսեանի ծածկանիշն էր, իսկ «27»-ը՝ Արկադի Տէր-Թադեւոսեանի:

34 Այժմ՝ Յակոբ աբեղայ:

35 Արցախեան ազատամարտի ականատես Մաքս Սիվասլեանը 1992 թ. մայիսի 3-ի գրառման մէջ ասում է. «Մեկնեցի «26»-ի պահակակէտը… Մի տանկ ժամանեց՝ աշտարակին մի քահանայ նստած: Նա անցաւ ճակատային գծով եւ մկրտեց ցանկութիւն ունեցող ֆիդայիներին: Երէկ նա մկրտեց տասին: Քահանայի անունն է Գրիգոր Մարկոսեան: Նա 37 տարեկան է եւ Ղարաբաղում է 18 ամիս: Նա ինձ յայտնեց, որ ինքը ծնուել է Երեւանում, բայց նրա նախնիների ծննդավայրն Էրզրումն էր եւ, որ նրանք Արեւմտեան Հայաստանից եկել էին Արեւելեան Հայաստան 1915 թ.»: «26»-ի բարձունքում մկրտութեան պահը Մաքս Սիվասլեանը լուսանկարել է եւ զետեղել իր գրքում: Լուսանկարի տակ գրուած է. «Տէր Գրիգորը մարտիկների հետ 26-ի պահակակէտում, ապրիլ, 1992» (Max Sivaslian. Le Jardin Noir. Texte et photographies Max Sivaslian. Karabagh Récit de Guerre 1992–1994, Paris, 2001, p. 22):

36 Ցվետանա Պասկալեւան Արցախեան ազատամարտի հէնց առաջին օրերից՝ 1991 թ. մայիսին տեղի ունեցած Գետաշէնի կռիւներից մինչեւ պատերազմի վերջին օրը բոլոր ուղղութիւնների վրայ նկարահանել է մարտական գործողութիւնների կարեւորագոյն դէպքերը: Արդիւնքում լոյս աշխարհ է եկել Արցախեան ազատամարտի ռազմական տարեգրութիւնը՝ ամփոփուած վաւերագրական եօթ ֆիլմերում՝ «Ղարաբաղի վէրքերը» ընդհանուր վերնագրով: Ցվետանա Պասկալեւան նաեւ Արցախի ազատամարտը լուսաբանող բազմաթիւ հեռուստատեսային հաղորդումների եւ թերթային յօդուածների հեղինակ է:

37 Ցվետանա Պասկալեւայի նկարահանած «Յոյսի բարձունքներ» ֆիլմում ցոյց են տրուած հայ ազատամարտիկների յաղթանակները «ադրբեջանական» ՕՄՕՆ-ի դէմ, որը խորհրդային բանակի զօրամասերի աջակցութեամբ Շահումեանի շրջանի բնիկ հայ բնակչութեան հանդէպ գազանութիւններ էր գործում:

38 Ցվետանա Պասկալեւան յիշում է. «Մը-կրտութիւնից յետոյ, տարիներ անց, ինձ համար երկրորդ պատուաւոր իրադարձութիւնն էր Արցախի ինքնապաշտպանական բանակի գնդապետի կոչման շնորհումը ԼՂՀ պաշտպանութեան նախարար Սամուէլ Բաբայեանի 1995 թ. ապրիլի 1-ի N 53 հրամանով: Շուշիի ազատագրման մայիսեան տօնի ժամանակ, երբ թղթակիցները պաշտպանութեան նախարարին հարցրին իմ կոչման մասին, նա պատասխանեց. «Ցվետանան երբեք շարքային չի եղել, նա միշտ եղել է յատուկ կարգավիճակում, անցել է բոլոր մարտական ճանապարհներով, եղել է ռազմաճակատների ամենաբարդ հատուածներում: Նրա կենսագրութիւնը նման է մեր ամէնից խիզախ հրամանատարների կենսագրութեանը, եւ եթէ ես հնարաւորութիւն ունենայի, ապա նրան «Օսկար» կը տայի: Սակայն ես ռազմական նախարար եմ եւ նրան տալիս եմ այն բարձր կոչումը, որն իմ հնարաւորութեան սահմաններում է»:

ИСТОРИЯ ГАНДЗАСАРА — СВИДЕТЕЛЬСТВО АРМЯНСКОЙ ДУХОВНОЙ ДОБРОДЕТЕЛИ, МУДРОСТИ И ДЕЯНИЙ ПРЕДКОВ, ИСХОДЯЩИХ ИЗ ГЛУБИНЫ ТЫСЯЧЕЛЕТИЙ. КРИСТАЛЛИЗАЦИЕЙ НАЦИОНАЛЬНЫХ ЦЕННОСТЕЙ СВОБОДОЛЮБИВЫМ ГАЙКСКИМ ДУХОМ, ГАНДЗАСАР УСТРЕМЛЕН ВВЫСЬ КАК СИМВОЛ ОСВОБОЖДЕНИЯ РОДНЫХ СВЯТЫНЬ И ВОЗРОЖДЕНИЯ ЕДИНОГО ОТЕЧЕСТВА.

1. ТАИНСТВО ГАНДЗАСАРА

Гандзасарский монастырь возведен в *гаваре* (округ) Великий Аранк, княжества Хачен, области Арцах Великой Армении, на горе Гандзасар, расположенной на левом берегу реки Хаченагет, вблизи села Ванк, в горной части Арцаха, в нынешнем Мартакертском районе Нагорно-Карабахской Республики. Согласно народному топонимическому преданию, гора была названа *Гандзасар* ("гандз" — "сокровище", "сар" — "гора"), поскольку ее недра богаты месторождениями серебра.

Таинственны тропы Гандзасара: вступая на них, одухотворенный силой творческого созидания предков, как бы чувствуешь пульс давно минувших времен. Гандзасар — воистину кладезь мудрости и святилище духовного величия.

Благородный Сисак и доблестный Аран оставили свои славные имена в истории Армении наряду со многими защищавшими и благоустроившими родину потомками патриарха Гайка — эпонима-предка коренного армянского народа Армянского нагорья. Верные памяти предков Гайкян-Сисакяны благоустроили Сюник, Арцах и Утик — восточные провинции царства Великой Армении, воздвигнули храмы и крепости — бастионы свободолюбивого духа и жизненных устоев армянского народа.

Священны тропы Гандзасара, устремленные ввысь и овеянные памятью о деяниях предков, взывающие к сердцам потомков своим паломническим служением. По ним ступали одухотворенные именем Св. Вардана Мамиконяна доблестные армянские воины после Аварайрского сражения (451 г.), продолжив борьбу, полагаясь на твердость Арцаха.

Царь Вачаган Благочестивый из рода Гайкян-Сисакян Араншахик[1] благоустроил Восточные края Армении — Арцах и Утик и украсив свое царство церквами в соответствии с числом дней в году, несомненно, внес свой вклад в обустройство Гандзасарского монастыря. Царь Вачаган Благочестивый создал "Каноническую Конституцию", воодушевленный идеей правового и духовного укрепления возрожденного Армянского царства в Восточных краях Армении.

Духовность Гандзасара гармонирует с таинством армянских царских мощей — свидетельством почитания предков, покоившихся в Высокой Армении, - которые враг не смог забрать из страны, ибо, благодаря храбрости армянского духа, они были освобождены и перезахоронены в селе Агдзк области Айрарат. Гандзасарский монастырь с давних времен стал мартириум князей Восточных краев Армении, принесших в жертву свою жизнь на алтаре Отечества.

В период армянского Багратидского царства Армянский Католикос Анания Мокаци (942—965), обеспокоенный состоянием церковных дел восточных епархий Армении, вступив в Арцах, в монастыре Гандзасара созвал совещание князей и священнослужителей, в национальном духе отстоявших непоколебимость и чистоту вероучения Армянской Апостольской Церкви.

Хаченский князь Хасан ("Красивый")-Джалал ("Величие") Дола ("Благоденствие"), славный наследник и продолжатель Гайкян-Сисакян Араншахикского рода, ступал по тропам Гандзасара к усыпальнице своих благородных пред-

ков, осененный мыслью о воздвижении церкви с мощами святых мучеников в фундаменте, среди которых главной была голова Св. Иоанна Крестителя (Св. Ованнес Мкртич).

Среди имеющих большую ценность в сокровищнице мировой культуры жемчужин армянской архитектуры, сотворенных искусными армянскими мастерами, величаво возвышается освященная Крестом Христовым церковь Св. Иоанна Крестителя Гандзасарского монастыря.

В Западной Армении одноименная церковь в гаваре Тарон, наряду со многими другими армянскими памятниками архитектуры, взорвана потомками турецких преступников, учинивших Геноцид армян.

Провидением Божьим в течение веков Гандзасарская церковь Св. Иоанна Крестителя выстояла в тяжелой борьбе против сил зла и сегодня в своем первозданном величии символизирует идею национального единения в вере и в самоотверженном служении Отечеству.

На возвышенности Гандзасара осознаешь, что это не конец, а лишь начало пути, овеянного лучезарным Божьим храмом. Устремленный в небеса Крест церкви Гандзасара, символизируя Древо Жизни, навевает мысли о вечности.

Духовные тропы Гандзасара со временем стали носителями тайных идей деятелей армянского освободительного движения. Исраэл Ори в поисках путей спасения армянского народа от чужеземного ига при содействии извне, вернувшись после дальних странствий на родину, стремился заручиться поддержкой Гандзасарского католикоса Еремии Хасан-Джалаляна. В 1699 г. в Гандзасарском монастыре состоялось тайное совещание, однако даже намек на уступку католицизму был достаточен, чтобы Ори ушел из Гандзасарского монастыря ни с чем.

Гандзасарский католикос Есаи Хасан-Джалалян, озабоченный перспективами судьбы армянского народа в 1714 г. созвал в Гандзасаре тайный собор, придавший новый импульс морально-правовым принципам армянского национально-освободительного движения, основанного на идее консолидации собственных сил в сочетании с активной и гибкой внешней политикой. Деятельность Есаи Хасан-Джалаляна была направлена на защиту и освобождение Отечества.

Десятилетиями позже Иосиф Эмин вступил в Гандзасарский монастырь с твердым намерением воодушевить католикоса Ованнеса к претворению идеи освободительной борьбы, рьяным приверженцем которой являлся сам Гандзасарский католикос. Однако он был коварно убит врагом. Его брат, епископ Саркис Хасан-Джалалян, был последним Гандзасарским католикосом.

Во времена митрополита Багдасара Хасан-Джалаляна тропы Гандзасара не заросли терниями, ибо он в силу своей большой любви к монастырю приложил огромные усилия для его благоденствия.

Спустя годы, Католикос Всех Армян Мкртич I Хримян, посетив Гандзасарский монастырь, крайне заинтересовался его славным прошлым и занялся его благоустройством.

Через несколько лет после установления советского режима Арцахская епархия была закрыта, и духовные пути в Гандзасар были перекрыты. В краю свирепствовал нагнетаемый из Баку антиармян-

АРМЕНИЯ В ДРЕВНИХ И СРЕДНИХ ВЕКАХ

ский произвол как часть тоталитарной системы советской власти.

Карабахское движение и восстановление Арцахской епархии стали предвестниками Арцахской освободительной борьбы, возвещенной звоном колоколов Гандзасарского храма. Новый глава Арцахской епархии епископ (ныне архиепископ) Паргев Мартиросян в своем обращении к народу предрек: "Колокол звенит, турок бежит".

Гандзасар вновь стал духовным центром освободительного движения. Духовное благословение, исходящее из святыни, а также самоотверженное служение духовенства в ее обороне и на других фронтах Арцаха — такова была миссия Гандзасара в национально-освободительной борьбе: в одной руке Крест, в другой — оружие воина-освободителя. Богослужение не прекращалось даже во время бомбежек. И свершилось чудо! В стенах разбомбленного жилого помещения монашеской братии были обнаружены *хачкары* — священные крест-камни XII—XIV вв.

Гандзасар — символ победы Арцахской освободительной борьбы армян. Тропы Гандзасара освящены кровью бойцов-освободителей. Гагик Елчян из отряда Смертников перед своим последним боем, в сокровенном духе самоотверженного патриотизма, сказал своим соратникам о Гандзасаре: "Что наша жизнь по сравнению с этим чудом: если оно сохранится, то и мы будем жить..."

2. ВОСТОЧНЫЕ КРАЯ АРМЕНИИ ВО ВРЕМЕНА СВ. ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ И СВ. ГРИГОРИСА

История Арцахской епархии Армянской Апостольской Церкви богата свидетельствами о деятельности Св. Григория Просветителя (Григор Лусаворич) и Св. Григориса, об Амарасе, Дадиванке и других монастырях, в особенности, Гандзасарском монастыре и католикосате.

Под влиянием истории основания в I веке Армянской Апостольской Церкви проповеднической деятельностью Святых апостолов Фаддея и Варфоломея была в дальнейшем заложена традиция об апостольской проповеди Св. Егиша (Елиша) в Восточных краях Армении (провинции Арцах и Утик Великой Армении) на правобережье Куры, а также в "собственно Алуанке"[2] — на левобережье Куры (Чшդ., 10—12).

В период царствования Трдата III Великого, согласно Агафангелу, Св. Григорий Просветитель, проповедуя христианство в Армении, достиг следующих пределов: на юге — Амид, Мцбин (Нисибин), Кордук, Нор Ширакан, на западе — Сатала, Халтик, на северо-западе — Кларджк, на севере — Аланские ворота, а на востоке — до пределов маскутов и Каспийских, и города Пайтакаран царства Великой Армении (Ագաթ. 439—440).

Дело Св. Григория Просветителя на востоке продолжил его внук *Манук* (Юный) Григорис, который был проповедником христианской веры и строгим отшельником. Рукоположенный во епископа-патриарха для епархий Арцаха, Утика и Пайтакарана, Григорис, вместе с тем, удерживал в лоне Армянской Апостольской Церкви духовную жизнь "собственно Алуанка"-"Албании" и Иверии (Բիւզ., 24, Խոր., 259, Чшդ., 14). Таким образом, Армения деятельностью отцов Армянской Апостольской Церкви возымела важное

значение в деле христианизации Иверии и “собственно Алуанка”.

Престол епископа-патриарха Григориса находился в монастыре Амарас, основанном Св. Григорием Просветителем (Օրբ., Բ, 218, Ողուբ., ա1981թ., 102). Согласно сведению, сохраненному на карте (1691 г.) Еремии Челепи Кеомюрчяна, Св. Григорий Просветитель утвердил своего внука Юного Григориса *патриархом* в Гандзасарском монастыре: патриаршья резиденция называлась Сурб Хач (Св. Крест) (Ողուհ., 164; Uluh., 59).

